



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4561

III mmpb

491.99-8

8-45

III 1903

1903

3 1002

160

491.33-8

S-45

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԵՐՐՈՐԴ ԳԻՐԲ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԵԱՆ

428

223-ՏԷ **ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՀԱՄԱՐ**

ՏԱՄԵԿԻՉՈՐՍԵՐՈՐԴ ՏՊԸԳՐՈՒԹԻՒՆ

ՓՈՓՈԽԱԾ ԵՒ ԼՐԱՅՐԱԾ

8935



ԱԶԽԱՏԱՐԵԾ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ-ՂԻՆՈՆԴԵԱՍ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Արագատիպ ՄՆ. Մարտիրոսեանցի  
Պուշկինեան փողոց № 12.

1903

2010

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 1 Августа 1903 г.

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

20215-60

ՆԱԽԸՆԹԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԱՌԱՋԱԲԱՍՆԻՑ

«Մայրենի լեզուի» III տարին կազմուած է եղել այն ժամանակ, երբ Հայոց ուսումնարանները դեռ ևս գոյութիւն ունէին: Այդ ուսումնարանները փակուելուց յետոյ Հայերէն լեզուի դասուանդութեան շրջանը պէտք է շօշափելի կերպով սահմանափակուէր. հետեալքը գրքիս ծաւալն էլ պէտք է փոփոխութեան ենթարկուէր: Բայց մի կողմից Հայոց դպրանոցների գոյութիւնը, միւս կողմից այն անհրաքելի ճշմարտութիւնը, որ շատից աւելի հնարաւոր է քիչը ընտրել և մատակարարել, քան թէ քչից--բոլորը, ինձ թելադրում էին, գրքիս ծաւալը նոյնութեամբ թողնելով, միմիայն նիւթերի ու խմբագրութեան կողմից մշակել սորան:

Սակայն այս անգամ մենք դուրս ենք ձգում մեր գրքից այն բոլոր յօդուածները, որոնք քիչ թէ շատ մասնագիտական կերպարանք ունէին... Սորա փոխարէն մենք, որպէս փորձ, գրքիս առաջին շրջանի մի քանի յօդուածների մօտ դնում ենք վարժութիւններ, որոնց հետևողութեամբ իւրաքանչիւր ուսուցիչ կարող է նմանօրինակ վարժութիւններ կազմել միւս յօդուածների համար: Մենք սահմանափակում ենք մեր առաջարկած վարժութիւնները. մենք բացատրում ենք միայն դժուարին բառերը և տալիս ենք ուղղագրական մի քանի գիտելիքներ... Այդպէս շարունակելով, ինչպէս մենք սկսել ենք, լեզուի ուսուցիչը անզգալի կերպով աւանդած կրկինի իւր սաներին քերականական գլխաւոր գիտելիքները, այնպէս որ դասագիրքը (Քերականութիւնը) պէտք կրկինի միմիայն կրկնութիւնների համար:

«Մայրենի լեզուի» III տարին բաղկացած է չորս բաժանմունքից (Հատուածից): Դպրոցական տարուայ սկզբի համար, երբ մանուկներն աւելի թոյլ են լեզուի մէջ, մենք տալիս ենք բացառապէս պատմողական բովանդակութեամբ յօդուածներ: Հետեալ բաժանմունքներում նիւթերը պատմողականից կամաց-կամաց անցնում են նկարագրականի, այսինքն աւելի բարդուում են. բայց այդ ժամանակ աշակերտներն էլ լեզուի մէջ աւելի ուժեղ են լինում և ընթերցանութեան մէջ աւելի վարժ: Մենք կարծում ենք, թէ այսպիսով կարողացել ենք

պահպանել մանկավարժական այն խորիմաստ սկզբունքը, որ պահանջում է միշտ հնտեղուց թեմամբ ընթանալ՝ հեշտից դէպի դժուարը, պարզից դէպի բարդը...

Եւ որովհետեւ Հայոց լեզուի նրբութիւններն ու ոճերի հարազատութիւնը պահպանուել են առաւելագոյն բանաստեղծական գրութիւնների մէջ, մենք աշխատել ենք ամեն մի արձակ յօդուածից յետոյ դիտել նրան քիչ թէ շատ համապատասխան մի բանաստեղծական գրութիւն: Թարգմանական բանաստեղծութիւններից նախապատուութիւնը տուել ենք Կրիլովի առակներին, որոնք այնքան խորիմաստ են բովանդակութեամբ և անշափ նիւթ կարող են մատակարարել ուսուցչին:

«Մայրենի լեզուի» ներկայ տպագրութիւնը նախընթացի համեմատութեամբ ոչինչ փոփոխութիւն չի կրել միակ տարբերութիւնն այն է, որ վերջին (չորրորդ) հատուածին աւելացած է «Մասունցի Գաւիթը», որի հէնքը առնուած է մեր բանաւոր գրականութիւնից, իսկ հիւսուածքը ամբողջագոյն մեզ է պատկանում:

*Նիկողայոս Տէր-Ղեւոնդեան*

1903 թ. յուլիսի 30-ին Քիֆիս:

## ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

### ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ՊԵՏՄՈՂԵԱՆ ՅՕԴՈՒԵԾՆԵՐ ԵՒ ՆՐՈՆՑ ՀՄԵՊԵՏԵՍԽԱՆ  
ՉԼՓԵՐԵՐԵԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 ՏԱՆԻՑ ԴԵՊՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Արամը մի ութ տարեկան տղայ էր: Ծնողներն ուղարկում էին նրան ուսումնարան: Մի առաւօտ, ուսումնարան գնալիս, նա միտքը փոխեց. չէր ուզում գասի գնալ. կամենում էր խաղալ: Օրը գեղեցիկ էր. արեգակը փայլում էր և տաքացնում. թռչուններն անուշիկ երգում էին: Ըուրջը նայեց Արամը, բայց մարդ չտեսաւ. կանաչ հովտի վրայ իւր հասակակիցներից ոչ ոք չկար: Արամը մօտեցաւ մեղրաճանճին, որ թռչկոտում էր ծաղկից ծաղիկ:—Միրոն մեղու, ասաց մանուկը. եկ մի քիչ խաղանք»:

—2եմ կարող, պատասխանեց մեղուն. ես մեղր եմ ժողովում ծաղիկներից:

Արամը մի քանի քայլ առաջ դնաց: Զուներ ուրախ-  
ուրախ վազվզում էր հօտի շուրջը:

— «Ձնիկ, եկ միքիչ խաղանք»:

— Ժամանակ չունիմ. ես պահպանում եմ իմ տիրոջ  
ապրանքը, որ դայը չյափշտակէ կամ գողը չգողանայ:

Երեխան առաջ անցաւ և տեսաւ մի փոքրիկ թըռ-  
չուն: — «Սիրո՞ւն թռչուն, միքիչ խաղանք, ուրախանանք  
միասին»:

— Ես տխուր չեմ, որովհետև գործ եմ շինում. ես  
դեռ պէտք է մամուռ, խոտ, բուրդ հաւաքեմ և բուն շի-  
նեմ իմ ապագայ ձագուկներին համար:

Արամն սկսեց ձանձրանալ. ոչ ոք չէր կամենում խա-  
ղալ նրա հետ: Նա մօտ վազեց առուակին, որ հոսում էր  
հովտի միջով, նայեց նրա կարկաչուն ալիքներին և ասաց.

— «Ինչպէս տեսնում եմ, միայն դու ես, որ գործ  
չունիս անելու. ուրեմն եկ միքիչ խաղանք ես և դո՛ւ»:

Մէջքն ոււցրեց առուակը և բարկացած պատաս-  
խանեց.

— Ո՞վ չունի գործ. ծո՞յլ, ծո՞յլ տղայ. չե՞ս տեսնում,  
որ ես գիշեր ու ցերեկ աշխատում եմ: Ո՞վ է ջուր տալիս  
կենդանիներին ու բոյսերին, ո՞վ է լուանում կտաւիքը,  
ո՞վ է պարտացնում ջրաղացի անիւները, ո՞վ է հանդցնում  
հրդեհները, եթէ ոչ ես: Տեսնում ես՝ ես մի բոպէ էլ հան-  
գըստութիւն չունիմ. ուրեմն ձեռք վեր առ ինձանից և  
գնա՛ գործիդ:

Արամն ամաչեց և շտապով դնաց ուսումնարան:

Բառեր՝ հովիտ—долина. հօտ—ոչխարների խումբ, стадо.  
մեղու, մեղր, մեղրաճանճ. մեղուանոց—пасека. մամուռ—мохъ. ապա-  
գայ—որ յետոյ պիտի գայ, будущий. յափշտակել—խել, փախցնել,  
похитить. ձանձրանալ—скучать, томиться. առուակ—ручеекъ.  
հոսում էր—протекалъ. կարկաչուն—журчашій. կարկաչին—жур-

чаніе. ալիքներ—волны. կտաւիք—սպիտակեղէն, լուացք, бѣлье.  
հրդեհ—пожаръ.

Ուղղագրութիւն՝ վանկեցէք առաջին երկու նախադասութիւն-  
ների բառերը, որ որ հարկաւոր է՝ ը աւելացրէք: Վանկի հիմքը  
ձայնաւոր տառն է. բաղաձայն տառերը, վանկելիս, կպչում են նա-  
խորդ կամ յաջորդ ձայնաւորին:

Տողադարձի ժամանակ միշտ պէտք է ամբողջ վանկ անցկացնել:  
ու, եթէ մենակ է, առանձին վանկ է կազմում. իսկ եթէ մօտը ուրիշ  
ձայնաւոր ունի, կցւում է այդ ձայնաւորին և նրա հետ միասին մի  
վանկ է կազմում՝ մե-դու, մե-դու-պան. ա-բու, ա-բուակ:

Վանկելիս, ուրեմն և տողադարձի ժամանակ, յ տառը իւր մօ-  
տիկ ձայնաւորից չի կարելի բաժանել՝ Հայ-աս-տան և ոչ Հայ-աս-տան:  
Գործողութիւն ցոյց տուող բառերում ցնե՛լ վերջաւորութիւնը  
միշտ վանկելու էք անբաժան՝ կար-դա-ցնել և ոչ կար-դաց-նել:

Ն և ը տառերը բառի վերջում հարևան բաղաձայնի հետ առան-  
ձին վանկ են կազմում՝ ձեռք—ձեռքն. ծունկ—ծունկը:

2. Թ Ռ Զ Ն Ի Կ Ն Ե Ր

Չատ էի սիրում մանուկ հասակում  
Ես թռչունների սիրուն ձագերին,  
Եւ որսում էի նոցա մեր այգում  
Կանաչ, ցօղապատ թըփերի միջին:

Ես հիւսում էի անխոնջ եռանդով  
Փափուկ մամուռից քընքուշիկ բըներ.  
Հոգս էի տանում կարեկից սրբտով  
Մերկ ճուտիկներին ցերեկ ու գիշեր:

Բայց ահա նորա թխաւորուեցան  
Եւ ազատ օդում ճախրել են ուզում.  
Ես բաց եմ անում դուռն ու պատուհան,  
Որ ուրախ թըռչեն, վրխտան թըփերում:

Թըռչում են նորա, երգում, ճըլվըլում.  
 Անհուն ցընծութեամբ լըցւում է հոգիս.  
 Եւ նորից նոցա ես յետ եմ կանչում.  
 Նորա դալիս են—ունկընդիր խօսքիս:

*Բառեր՝ որս—հորս, охота. որսալ—հորս անել. ցող—շաղ, роса. ցողապատ—ցողով ծածկուած. հիւս—հիւսուածք, плетень. հիւս—ծամ, коса. հիւսել—плесть, заплетать. հիւսն—դուրգար, плотникъ. անխոնջ—առանց յոգնելու. անխոնջ եռանդով—անհատնում, անսպառ եռանդով, неистощимою энергіею. ճախրել—պտրտել, թռչել օդի մէջ. ճախարակ—блокъ, прялка. ան-հուն—անտակ, անչափ. հուն—տակ, յատակ, ջրի ընթացքի տեղը, русло. կարեկից սրտով—ցաւակցելով, մեղքանալով. մերկ—տկտր. վխտալ—кишеть. ունկն—ականջ. ունկնդիր—ուշադիր, ականջ դնող, լսող. ցնծութիւն—ուրախութիւն, радость.*

Ուղղագրութիւն՝ «Ես սիրում էի թռչունի ձագերին», փոխանակ — «ձագեր» կամ «ձագերը»: Ես մորթեցի մի հաւ. ես հաւ մորթեցի և ես մորթեցի հաւը և ոչ՝ հաւին:—Մարդկանց յատուկ և հասարակ անունները որոշեալ յօդով հայցական հօլովում նման են լինում տրականին. մնացած գոյական անունների հայցականը նման է ուղղականին:

Չափաբերական գրուածքների մէջ, վանկերի հաշիւը պահելու և ներդաշնակ կարգալու համար՝ ը ձայնաւորը սովորապէս գրւում է այնտեղ, ուր նա աւանձին վանկ է կազմում՝ «բընքուչիկ բընքեր». «որ ուրախ թըռչեն, վըխտան թըրփերում»:

3. Ա Ր Մ Ի Ն Է

Արմինէն հինգ տարեկան մի աղջիկ էր, երբ մերենան կտրեց նրա աջ թևը: Մանկիկը շատ հեծեց, լաց եղաւ, շատ ցաւ քաշեց ու արցունք թափեց: Բայց Աստուած խղճաց նրան. գոնուեցան բարի մարդիկ, սպեղանի շինեցին և վէրքը կապեցին:

Անցան օրեր: Արմինէն մեծացաւ: Նա ամեն առաւօտ ուսումնարան էր գնում: Որպէս ուշադիր մանուկ՝ նա ոչ

միայն լաւ կարգում էր, այլև գեղեցիկ գրում էր ձախ ձեռքով. վարժապետները շատ էին սիրում նրան և պարգև ու նշան էին տալիս:

Մի օր թագաւորի ամուսինը, որ մի բարի կին էր, գիւղի միջից անցած ժամին, կանգ առաւ և գիւղապետին խնդրեց, որ մի փոքրիկ, բայց խելացի աշակերտ բերեն իւր առաջը: Մարդ զրկեցին, Արմինէին բերին վարժարանից:

Աղջիկը թեւազուրկ, բայց ուրախ ու համարձակ եկաւ կանգնեց թագուհու առաջ: Աղնիւ Տիկնոջ աչքերը լցուեցան. նա զգուանքով առաւ նրան իւր գիրկը, համբուրեց և ասաց. «Աղջիկս, գոհ եմ որ դու այդպէս լաւ գրւում ես ու կարդում. դրա փոխարէն կամենում եմ վարձատրել քեզ. աւս, ինչ տամ քեզ՝ մի նոր գիրք, հագուստ, թէ՛ խաղալիք. կամ զուցէ՛ դու կամենում ես, որ ես քեզ համար շաքարեղէն ուղարկեմ, կամ օղեր ու զարդեր ընծայեմ... Ըիտակն ասա, մի՛ վախենար. ինչ որ խնդրես, պիտի տամ»:

Արմինէն, որի սիրտը լցուած էր ուրախութիւնից, բաց արաւ բերանը և խնդութեամբ կանչեց. — «Մի թե տուէք ինձ, Տիկին»:

*Բառեր՝ Արմինէ—հայուհի, армянка. հեծել—հառաչել, մըղկտալ, стонать. արցունք—արատուք, слёзы. սպեղանի—ճար, մահլամ, пластырь. վէրք—խոց, եարայ, рана. կանգ առնել—остановиться. թեւազուրկ—թեկից, կոնից զրկուած. աչքերը լցուեցան—արտատուեց. գգուել—փայփայել, ласкать. շիտակ—ուղիղ, ճշմարիտ. շիտակն ասա—ուղիղն ասա. շիտակ խօսք, շիտակ մարդ—աղնիւ խօսք, աղնիւ մարդ. խնդութեամբ—радостно. գիւղապետ—старшина:*

Ուղղագրութիւն՝ Արմինէ, Գայիանէ, Հուփսիմէ. Արմենուհի, տիրուհի և Տիրուհի, Վարդուհի, աշակերտուհի. Պերճանոյշ, Հայկանոյշ, Սիրանոյշ. Մանդուխտ, Հայկեանդուխտ:—Վերջայար մասնիկ-

ները՝ է, ուՆի, անոյշ, դուխտ—միակ իզականակերտ մասնիկներն են Հայոց լեզուի մէջ:

Հայոց լեզուն առարկայի սեւը ցոյց տուող վերջաւորութիւններ չունի. գոյական անունների սեւը մեր լեզուի մէջ իմացում է բառի ներքին նշանակութեամբ:

4. Մ Ա Ն Կ Ա Ն Ը

Ուրտխուժիւն քեզ անսլակաս,  
Ո՛վ դու մանուկ սիրելի,  
Ծլիս, ծաղկիս ու ծերանաս,  
Տարով պտուղ արժանի:

Որպէս ծաղիկ, մանուկ, քաղցր ես,  
Եւ շնորհագեղ որպէս օր.  
Մանուկ-մանուկ, ինձ չըխաբես,  
Միշտ կայ այդպէս լուսաւոր:

Նայիր վերե, տես՝ ինչ սիրուն  
Այնտեղ փայլում են աստղեր,  
Եւ անթիւ են, և՛ շողշողուն,  
Որպէս երկու քո աչեր:

Այնտեղ, հոգեակ, բնակում է  
Մեր սուրբ հայրը երկնքի,  
Նա՛ է, որ մեզ ուղարկում է  
Եւ կեանք, և՛ սէր, և՛ հոգի:

Բառեր՝ շնորհագեղ—շնորհքով ու գեղեցիկ. ծիլ—отпрыскъ, побѣгъ. Ծլիս, ծաղկիս—ամեն ու զօրանաս. տալ պտուղ արժանի—արժանաւոր ու բարի պտուղ տալ, լաւ մարդ դառնալ: Հայրը երկնքի—

երկնաւոր Հայրը և՛ կեանք, և՛ սէր, և՛ հոգի—կեանք էլ, սէր էլ, հոգի էլ:

Ուղղագրութիւն՝ «Որպէս երկու քո աչեր»: Երկու աչք, երեք մշակ, չորս աչակերտ. երկու սիրուն աչքեր, երեք աշխատաւոր մշակներ, չորս քաղցրաբարոյ աչակերտներ:

Թուական որոշողների մօտ որոշեալը միշտ դրւում է եզակի. բայց եթէ թուական որոշողից զատ առարկան ունի և մի որակական որոշող, ապա նա գործ է ածւում յոգնակի:

Երկնքի Հայր—երկնաւոր Հայր. քարի տուն—քարէ տուն. հիւսիսի ընակիչ—հիւսիսային ընակիչ: Գոյական անունների սեռական հոլովը գործ է ածւում յարարերական ածականի տեղ:

5. Մ Ա Յ Ր ԵՒ Ո Ր Դ Ի

Մայրը մի փոքրիկ որդի ունէր: Նա այնպէս գեղեցիկ էր և այնքան խելօք, որ տեսնողն ակամայ պէտք է սիրէր նրան: Միանգամ մանուկը հիւանդացաւ և Աստուած նրան իւր մօտ կանչեց: Խեղճ մայրը մնաց անմխիթար և օր ու գիշեր լալիս էր: Միքանի ժամանակ անցած՝ մանուկը գիշերը երևեցաւ մօրը: Մայրը արտասուք էր թափում, մանուկն էլ լաց էր լինում: Եւ որովհետև մայրը չէր դադարում լաց լինելուց, մի գիշեր մանուկը երևեցաւ մօրը, սպիտակ շապիկ հագին, նստեց նրա ոտների մօտ և ասաց.

—«Մայրիկ, էլ լաց մի լինիր, թէ չէ՝ ես դադարում չեմ կարողանում հանգիստ մնալ. քո արտասուքներից իմ շապիկս թաց է լինում բոլորովին»:

Մայրը մեղքացաւ որդուն և լաց չեղաւ: Միւս գիշեր մանուկը դարձեալ երևեցաւ մօրը, ձեռին մի ճրագ, և ասաց.

—«Տեսնում ես, մայրիկ, շապիկս չորացել է և ես գերեզմանիս մէջ հանգիստ եմ»:

Այնուհետև մայրը Աստուծուն յանձնեց իւր վիշտը,

համբերութեամբ ու անխռով տարաւ իւր ցաւը. իսկ մանուկն այլ ևս չերեկեցաւ նրան, այլ հանգիստ ննջում էր հողէ անկողնու մէջ:

Բառեր՝ ակամայ—չուզելով, невольно. դադադ—гробъ. մեղքանալ—խղճալ, сожалеться. ճրագ—свѣча. վիշտ—հոգս, ցաւ, скорбь, горе. անխռով—անտրտունջ, безропотно. ննջում էր—քնում էր, спалъ. ննջում էր—дремалъ.

Ուղղագրութիւն՝ Խելօք, առօք-փառօք, իրօք, արդեօք, կարծեօք, գործօն—дѣлецъ. կարօն—купонъ, թերթօն—фельетонъ. օ և ո տառերի գործածութիւնը՝

- ա) Օր, որ, օղ, ող, ոսկի, որդի, օղակ, օրօրոց, օձ, որձ, օդ, որդ.
- բ) Ով (կարգւս օվ), ովկիանոս, ովաղիս, ովսաննայ.
- գ) Յետոյ, երեկոյ և ոչ յետօ, երեկօ.
- դ) Կարոյ—Կարոյի, չասոյ—չասոյի և ոչ չասօի.
- ե) Հօտ, հոտ, հօր, հոր, մօր, մոր (малина).

Բառի սկզբում օ և ո տառերը պահում են իրանց հնչիւնը:—վ տառից առաջ ո կորցնում է իւր հնչիւնը:—Բառի վերջում օ չի գրւում:—Բառի մէջը ո և օ տառերը միապէս օ են կարդացւում:

6. «2 Ա Ր Ը Դ Տ Ա Ն Ե Մ»

Իմ նանը, որդիք, մի շատ լաւ կին էր.  
Ժամ ու պատարագ նա շատ կըսիրէր,  
Թէ արթնանալուց, թէ քուն մըտնելուց՝  
Ինձ համար նա միշտ աղօթքներ կ'անէր.  
Ինձ էլ աղօթքի իւր հետ կըտանէր.  
Ու թէ պատահէր՝ հիւանդանայի,  
Կամ անակնկալ փորձանքի գայի,  
Նա, գործվալից ոգևորութեամբ,  
Կըրծքին փարելով, միշտ կըհարցընէր.  
— «Ասա՛, գնւակս, ինչըդ կըցաւի,  
Ասա՛, դէ, նանը քո չարըդ տանի»:

Իմ խեղճ նանիկը իւր ամբողջ կեանքում  
«Չարքս էր տանում», չէի հասկանում.  
Ա՛խ, իմ մայրիկը, սիրուն մանուկներ,  
Այնքան բարի էր, այնքան անձնուէր,  
Որ վերջը, իրաւ, իմ «չարը տարաւ»,  
Սիրած դաւակին որը, մենակ թողաւ:

Բառեր՝ անակնկալ—անսպասելի կերպով, неожиданно. փորձանք—փորձութիւն, անբաղդութիւն, испытание, несчастный случай. կրծքին փարելով—կրծքին սեղմելով, գիրկն առնելով. անձնուէր—անձնանուէր, անձը նուիրած, գլուխը յետ դրած, преданный, самоотверженный. գործվալից—умилительный.

«Չարըդ տանեմ, ցաւըդ տանեմ»—ամենայն չար բան, ամենայն ցաւ ու նեղութիւն, որ քեզ է վիճակուած, թող ինձ գայ, ինձ պատահի. թո՛ղ ես տանջուիմ քո փոխանակ:

Ուղղագրութիւն՝ «Չըսիրէր, կըտանէր, կ'անէր»—փոխանակ՝ սիրում էր, անում էր, տանում էր. կըցաւի—փոխանակ՝ ցաւում է:

«Թէ արթնանալուց, թէ քուն մտնելուց»—փոխանակ՝ արթնանալիս, քուն մտնելիս:

7. ՓՐԻԴՐԻԿՈՍ ԹԱԳԱՆՈՐԻ ՍԳԱՍՆՈՐԸ

Պրուսիայի Փրիզըրիկոս թագաւորը իւր սենեակի մէջ սաստիկ զբաղուած էր. նա քաշեց զանգը, բայց սպասաւորը չերեկեցաւ: Թագաւորը վերկացաւ, դուռը բաց արաւ և տեսաւ, որ սպասաւորը տախտի վրայ ընկած՝ քնած է: Մօտ գնաց, որ զարթեցնէ: Այդ միջոցին աչքովն ընկաւ մի նամակ, որ սպասաւորի գրպանից կիսով չափ դուրս էր ընկած: Թագաւորը մեղմօրէն դուրս հանեց թուղթը, որ իմանայ թէ մէջն ինչ կայ գրած: Նամակումն ասուած էր.

«Իմ անգին որդի, անչափ շնորհակալ եմ, որ այս ան-

գամ էլ չուշացրիր ուղարկել ինձ քո ամսականի կէտը. դու քո ծնողասիրութեամբ քաղցրացնում ես մօրդ ծերութեան օրերը. հաստատ յոյս ունեցիր, որ Աստուած զրա փոխարէն պիտի օրհնէ քո կեանքը»:

Նամակը կարդալուց յետոյ, թագաւորը ոսկով լցրեց մի քսակ և նամակի հետ դրեց սպասաւորի զրպանը. ապա դարձաւ իւր սենեակը և աւելի սաստիկ հնչեցրեց զանգակը: Սպասաւորը զարթնեց ու ներս վազեց:

«Ան էիր քներ», նկատեց թագաւորը:

Սպասաւորը կամենում էր իրան արգարացնել. շփոթման մէջ ձեռքը տարաւ զրպանը և անզիտակցաբար դուրս հանեց քսակը: Ոսկիները տեսնելուն պէս՝ գոյնը թռաւ:

— Տէր արքայ, ասաց սպասաւորը, թագաւորի ոտներն ընկնելով. չգիտեմ՝ ով է զրել զրպանումս ոսկով լիքը քսակը. երեի մահս են կամենում:

«Բանեկամ, պատասխանեց թագաւորը. Աստուած շատ անգամ իւր բարիքը հասցնում է մեզ, երբ մենք քնած ենք լինում: Առ այդ քսակը, ուղարկէր մօրդ, ողջունիր իմ կողմից և ասան, որ անհոգ լինի. այսուհետև ես պէտք է խնամք տանեմ նրան: Իսկ դու, սիրելիս, վստահ եղիր, որ ինձ մօտ բաղդաւոր պիտի լինիս»:

Բառեր՝ սպաս—կերակուր. սպաս—ծառայութիւն. սպասաւոր—ծառայ. զրպան—ջէպ, карма́нъ. անզիտակցաբար—առանց զգալու, безсознательно. արքայ—թագաւոր. չուշացրիր ուղարկել—ժամանակին ուղարկեցիր. մեղմօրէն զարթեցրեց—կամացուկ զարթեցրեց:

Ուղղագրութիւն՝ մեղմօրէն, մարդկօրէն, քաջօրէն... Արիապէս, մեծապէս, այսպէս, այդպէս, այնպէս... Յովհաննէս, Վրթանէս, Արիստակէս... Աբէլ, Նաթանայէլ, Իսրայէլ, Էմանուէլ... Գայէն, Ռուբէն, Բաբելէն, Սուրէն... գինեւէտ, հացաւէտ, ծաղկաւէտ, մրգաւէտ... Քարեղէն, փայտեղէն, հողեղէն, մսեղէն... Հայերէն, տաճկերէն, ռու-

սերէն, պարսկերէն... Թագընկէց, գահընկէց, պատւընկէց, շանթընկէց... Ջրօրհնէք, անօրհնէք, երբէք, բերէք, տարէք...

Վերոյիշեալ վերջայար մասնիկները միշտ և ամենայն տեղ է-ով պիտի գրուին:

8. Ո Ր Բ Ի Վ

Մերկ ու թուլակազմ եկար այս աշխարհ, եւ մօրդ զրկում կառնէիր հանգիստ. Ի՛նչ էր դառնութիւն, չարչարանք ու վիշտ՝ Բեզ ծանօթ չէին. — խաղաղ էր հոգիդ:

Բայց միայն, աւանդ, մահը տարածամ, Տառապեալ մօրըդ զրաւ գերեզման, եւ քեզ, խեղճ դառնուկ, որբ, անօգնական Թողեց օտարի մըշտափակ զըռան...

Բառեր՝ թուլակազմ—թոյլ կազմուածքով, մարմնով. գիրկ—գոգ, ծոց, объятие. վիշտ—հոգս, նեղութիւն, скорбь, горе. խաղաղ—հանգիստ, тихий (ХО), спокойный (НО). տարածամ—անժամանակ, не-своевременный (НО). տառապեալ—խղճուկ, թշուառ, бедствующий. մշտափակ—միշտ փակուած:

Ուղղագրութիւն՝ հանգիստ մարդ. հանգիստ էր հոգիս. հանգիստ կացէք: Խաղաղ հոգի. հոգիդ խաղաղ էր. խաղաղ ապրեցէք:

Նշանակեալ բառերը մի տեղ որոշող են (ածական), միւս տեղ ստորոգեալ, իսկ երրորդ տեղ—պարագայական բառ (մակբայ):

Մշտափակ, տարածամ, թուլակազմ, համարակալ, հաշուեկշիռ: —Բառերը բարդուելիս կապուած են միմեանց հետ ա յօդակապով, շատ հազիւ և յօդակապով:

9. ՄԻ ՀՈԳԻ ԵՐԿՈՒ ՄԱՐՄՆԻ ՄԷՋ

Երուսաղէմ քաղաքի տեղը երբեմն մի մշակուած դաշտ էր և տաճարի տեղը պատկանում էր երկու եղբօր, որոնցից մէկն ամուսնացած էր, միւսը՝ ամուրի: Հնձի ժամանակ նրանք իրանց խուրճերը կապեցին և երկու հաւասար դէզ բարձրացնելով, թողին դաշտումը:

Գիշերը ամուրի եղբայրը մտածում էր.

— Եղբայրս կնոջ ու որդոց տէր է և նրանց պէտք է կերակրէ, ուստի իրաւացի չէր լինիլ, որ նրա և իմ ունեցածը հաւասար լինէին: Գնամ, իմ բաժնից մի քանի խուրճ վեր առնեմ և ծածուկ աւելացնեմ նրա բաժնին. եղբայրս չի տեսնիլ և չի ընդդիմանալ ինձ:

Այս ասելով՝ նա գնաց և իւր մտածածը կատարեց:

Նոյն գիշերը միւս եղբայրն արթնանալով՝ իւր կնոջն ասաց.

— Եղբայրս ինձանից փոքր է և, ամուսնացած չլինելով, ոչ ոք չունի, որ իրան օգնէ ու մխիթարէ. ուստի իրաւացի չէր լինիլ, որ նրա և իմ ունեցածը հաւասար լինէին: Գնամ, իմ բաժնից մի քանի խուրճ վեր առնեմ և ծածուկ աւելացնեմ նրա բաժնին. եղբայրս չի տեսնիլ և չի ընդդիմանալ ինձ:

Այս ասելով՝ նա էլ գնաց, իւր մտածածը կատարեց:

Հետեւեալ առաւօտ եղբայրները դաշտ գնացին և շատ զարմացան. երկու դէզն էլ հաւասար էին և անփոփոխ: Նրանցից ոչ մէկը չկարողացաւ իմանալ այս հրաշքի պատճառը:

Հետեւեալ գիշերը դարձեալ նոյնպէս արին... Եւ այսպիսով նրանց դէզերը ոչ պակասում էին, ոչ աւելանում: Վերջապէս մի գիշեր, այս գաղտնիքն իմանալու համար,

երկուսն էլ արթուն մնացին և, երբ խուրճերը շալակած տանում էին միմեանց դէզի վրայ դնելու, յանկարծ իրար տեսան:

Այդ պատճառով մարդիկ օրհնեցին այդ երկու եղբայրների արտը և Աստուծու տաճարը այնտեղ շինեցին:

Բառեր՝ երբեմն—մի ժամանակ, когда-то. մշակ, մշակել, մշակուած—работникъ, обработать, обработанный. դաշտ—поле. արտ—нива. տաճար—աթոթատուն, храмъ. ամուրի—չամուսնացած, холостой. խուրճ—связка. դէզ—стогъ. հրաշք—чудо. գաղտնիք—тайна, секретъ:

Ուղղագրութիւն՝ կնիկ, կնկայ, կնկանից. կնիկ, կնոջ, կնոջից. որդիք, որդոց. որդիներ, որդիների. չի տեսնիլ, չի դիմանալ. չի տեսնի, չի դիմանայ. չի տեսներ, չի դիմանար. Աստուած, Աստուծու, Աստուծուց:

Դէզ—դիզել. կէս—կիսել. վէճ—վիճել. գէշ—գիշատիչ. գէտ—գիտուն. գէր—գիրանալ. դէմք—դիմել. գէնք—գինուոր. գէպք—գիպուածք...

Այն բոլոր բառերը, որոնք ածանցուելիս է հնչիւնը փոխում են ի հնչիւնի, գրւում են է-ով:

10. ԿԱՂՆԻ ԵՒ ԵՂԷԳՆ

Մի օր կաղնին  
Եղէգնիկին

Խօսքեր նետեց այս կերպով.

«Թէ որ դու զըժգոհելով

Բնութեան դէմ տրտնջաս ու զանգատիս,  
Ճշմարիտ որ հախ ունիս.

Ճնճողկ ասածըդ սրբան փոքր ու թեթեւ թրոչուն է,  
Եւ սակայն քեզի համար անազին բեռ՝ ծանրութիւն է.

Թեթև ու բարակ հովիկ թէ փշէ,  
 Որ ջըբի երեսն էլ հազիւ շարժէ,  
 Քեզ կըտատանի, գետին կըծըռուիս  
 Ու խըղճուկ-խըղճուկ կ'ընկնիս, կըպառկիս:

Իսկ ես,  
 Կըտեսնես,  
 Կովկաս սարի պէս  
 Փառաւորապէս

Արեւի ճառագայթներն եմ արգելում  
 Եւ հովերի կատաղութիւնը ծաղրում:

Ես կանգնած եմ շիփ-շիտակ,  
 Անխռով, ան-այլայլակ:

Այն քամին, որ քեզ համար սոսկայի փոթորիկ է,  
 Ինձ անուշ գեփիւռիկ է:

Գոնէ գայիր, սողորմելի, ինձնից մօտիկ տեղ բուսնէիր,  
 Իմ ճըղներիս թանձր շուքի տակ մտնէիր ու պահուէիր,  
 Որպէս զի քեզ պահպանէի մըրիկների, հովերի դէմ:  
 Բայց ձեր կոյր բազդն այդ է եղել, ես ինչ անես.  
 Ձեր ճակատի գիրն է՝ բաց տեղ, քամու բերանը բուսնիլ,  
 Եւ անդադար այս ու այն կողմ գինովի պէս տատանուիլ»:

Եղէգնիկը պատասխանեց կաղնիին.  
 «Պարոն, սըբտիդ բարութեանը խօսք չունիմ.  
 Բայց կը խնդրեմ որ հոգ չանես բընաւին.

Դու ինձ այնքան խեղճ մի կարծիլ.  
 Հողմ-փոթորկից չեմ վընասուիլ.  
 Թէև ծըռուիմ՝ չեմ կոտըրուիլ:

Հողմի ոյժը չի ազդում սաստիկ վըրաս.  
 Բայց, սվ գիտէ, գուցէ քեզ տայ շատ վընաս-  
 Իրաւ է, որ մինչև հիմա  
 Դիմացել ես դու փոթորկի  
 Մըրկի,

Մինչև հիմա ուղիղ կանգնած՝  
 Ձեռ ծռուած

Քամիների հարուածներից—  
 Փշուածքից,

Բայց էր շտապենք.  
 Վերջը կըտեսնենք»:

Հազիւ թէ եղէզն այս խօսքերն ասաւ,  
 Միւս կողմից յանկարծ քամին վեր կացաւ,  
 Սաստիկ անձընով, խոշոր կարկուտով  
 Լըցըեց անտառը գոռում-գոչումով:

Կաղնին ըհ չարաւ.

Իսկ եղէզը մինչև դետին պառկեցաւ:  
 Քամին, կ'ասես, քանի դընաց, սաստկացաւ,  
 Մէկ կատաղեցաւ, մէկ էլ գոռաց, մըռընչեց  
 Ու արմատից խլեց, ձգեց

Այն կաղնին

Ահագին,

Որ ամպերին հասել էր իւր գլխովը  
 Եւ անդունդին կըռթընած էր ոտքովը:

Բառեր՝ կաղնի—дубъ. եղէգնիկ—тростникъ. նետեց—ձգեց,  
 գցեց, ասաց. դժգոհելով—անբաւական. տրանջալ—роптать. հախ  
 ունիս—իրաւունք ունիս. ճնճղուկ—ծիտ, воробей. սակայն—  
 однако, но. տատանիլ—տարուբերուիլ. շիփ-շիտակ—ուղիղ, գը-  
 լուխ բարձր. անխռով—առանց շփոթուելու. ան-այլայլակ—առանց  
 փոփոխուելու. փոթորիկ, մըրիկ, քամի—буря, ураганъ, вѣтеръ.  
 գեփիւռիկ—մեղմ քամի, зефиръ. շուք—ստուեր, շուք. հով—  
 прохлада. քամու բերան—քամու դիմաց. գինովի պէս—հարբած մար-  
 դու պէս. տատանուիլ—տարուբերուիլ. քո սրտիդ բարութեանը խօսք  
 չունիմ—խօսք չունիմ, որ քո սիրտդ բարի է, որ դու բարի սիրտ ու-  
 նիս. հողմ—քամի. կարէ—կարող է. էր—ինչի. անագին—չատ մեծ,

громадный, огромный. անդունդ—դեանի խորքը, бездна. կռթնիլ—յինուիլ, опираться. ոտքովը—արմատներովը:

Ուղղագրութիւն՝ հետեւել է-ով գրուած բառերը ամանցուելիս է տառը պահում են. քարտէզ, աղէտ, աղուէս, գմբէթ, բուլճ (Филинъ), գոմէշ, երէկ, երէց, թէպէտ, մէկ, կոպէկ, ժապաւէն (Лента), չէզօք, վէգ, վրէժ:

Արձակ գրեցէք այս առակը:

11. Հ Ա Յ Ը

Փրանսիացոց թագաւորին յայտնում են, թէ նրա իշխաններից մինը ծեծել է մի երկրագործ գիւղացու: Թագաւորը հրամայում է, որ յանցաւոր իշխանին ճաշի հրաւիրեն: Ճաշի սեղանի վրայ թագաւորի հրամանով դարսում են բազմատեսակ կերակուրներ, բայց հաց չեն դնում:

Իշխանը զայիս է ճաշի նա շատ է զարմանում, երբ տեսնում է, որ սեղանի վրայ հաց չկայ: Այդ միջոցին թագաւորը ներս է մտնում և հարցնում է.

«Ի՞նչպէս է, իշխան, կերակուրները լաւ են, հաւանում ես»:

—Սքանչելի են, տէր թագաւոր, պատասխանում է իշխանը. բայց ներեցէք, եթէ համարձակուում եմ նկատել սեղանի վրայ հաց չկայ, իսկ դա ամենագլխաւորն է, առանց որի չի կարելի ապրել:

«Ուղիղ է ասածդ, վշտացած նկատում է թագաւորը, և քանի որ ապրելու համար հաց է պէտք, ուրեմն իմացիր լաւ վարուել այն մարդկանց հետ, որոնց շնորհիւ հաց ենք ուտում ես և զու»:

Բառեր՝ յայտնել—объявлять, сообщать. երկրագործ—земледелец. հրամայել—повелевать. յանցաւոր—виновный. հրաւիրել—приглашать. սքանչելի—чужа лад, հիանալի, дивный, восхитительный. նկատել—замечать. նկատողութիւն անել:

Ուղղագրութիւն՝ հրամայել, հրաւիրել, հարկ, համար. յայտնել, յանցաւոր, յարգ, յամառ. հ և յ տառերը բառի սկզբում կարգացում են միապէս:

«Մայրենի Լեզուի» քերականութեան 34 և 35 վարժութիւններից ջոկեցէք այն յ-ով սկսող բառերը, որոնց նշանակութիւնը ձեզ համակալի է:

12. Հ Ա Ս Ո Յ Ի Ե Շ Գ Ը 7/31 1922



1002  
8935

202/5-60

Ահա ծաղեց կարմիր արև,  
Տար և պայծառ է օրը.

Դէ՛հ, քաշեցէք, սիրուն եզներ,  
Առանջ տարէք արօրը:

Վարը վարենք, ախօս փորենք,  
Խոր ախօսներ հողի մէջ.  
Մերմը ցանենք, որ հունձ հընձենք,  
Յորեն դիզենք կալի մէջ:

Կրգայ ձրմեռ, մենք վախ չունինք,  
Ուրախ կ'անցնի մեր օրը.  
Ուտելու միշտ պաշար ունինք,  
Երբ լիք լինի մեր հորը:

Դէ՛հ, քաշեցէք, սիրուն եզներ,  
Չուտով վարենք արտերը.  
Թո՛ղ որ չասեն մեր զրացիք՝  
Ծոյլ են Հայի եզները:

Բառեր՝ կարմիր արև—գեղեցիկ արև, պայծառ արև. ախօս—աբորի քանդած ծիրը, боровда. պաշար—պարէն, запасъ, провизія. դրացի—հարևան, сосѣдъ.

Ուղղագրութիւն՝ դէ՛հ, ա՛խ, վա՛յ, աւա՛ղ, էյ... ձայնարկութիւնները բաժանուած են նախադասութեան միւս անդամներից ստորակէտով:

Ծագեց, ծագեցաւ. խօսեց, խօսեցաւ. պատժուեց, պատժուեցաւ. հագաւ, հագնուեց, հագնուեցաւ. տեսաւ, տեսնուեց, տեսնուեցաւ: Պառկիլ, պառկեցի, պառկեցայ. դարթիլ, դարթեցի, դարթեցայ. դարթնիլ, դարթնեցի... (բայերի տարրեր գործածութիւնը):

13. ԲԱՐԵՆՆԻՂՃ ԽԱՓՉԻԿԸ

Մի հնդկացի խափշիկ ծխախոտ խնդրեց հարևանից՝ Հարևանը ժլատ մարդ չէր, ձեռքը գրպանը տարաւ և դուրս հանեց մի բուռը ծխախոտ: Միւս առաւօտը հընդկացին դարձեալ եկաւ հարևանի մօտ և տուաւ նրան մի հատ արծաթի դրամ, որ գտել էր ծխախոտի մէջ:

«Ինչո՞ւ չպահեցիր այդ դրամը քեզ մօտ, ասաց այնտեղ պատահող սպիտակադէմ մարդը. քեզ ծխախոտ տուողը դրամն էլ է տուեր»:

Խափշիկը ձեռքը գնելով սրտի վրայ՝ ասաց.

—Այս տեղումս երկու մարդ կայ՝ մինը բարի, միւսը չար: Բարի մարդն ինձ ասաց. «Այդ փողը քոնը չէ, ուրեմն տա՛ր, տիրոջը տուր»: Իսկ չար մարդն ասաց. «Երբ տուել են քեզ այդ փողը, ուրեմն նա քոնն է»: Բարին վրայ բերեց. «2է, միմիայն ծխախոտն է քոնը և ոչ փողը»: Չարը նորից ասաց. «Ի՞ գուր ես նեղութիւն քաշում. զնա՞ դրանով արագ առ, խմիր»: Ես չգիտէի թէ ինչ անեմ և պառկեցայ քնելու: Բայց բարի և չար մարդիկն ամբողջ գիշեր դադար չէին տալիս ինձ և կուտում էին: Առաւօտեան ես զարթեցայ և յետ բերի փողը:

14. Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Ամեն անգամ երբ թերթում եմ  
ես էջերը Սուրբ-Գրքի,  
Միշտ վշտացած մտածում եմ՝  
Ո՞ւր է սէրը մարդերի,  
Որ Փրկիչը սուրբ կտակով  
Մարդկութեանը աւանդեց,  
Խաչի վրայ Իւր արիւնով  
Գիր կենդանի գրոշմեց:

Մարդիկ վաղուց մոռացել են  
Խաչ ու քարոզ կենդանի,  
Աւետարանն ուրացել են,  
էլ Սուրբ-Գիրքը գին չունի.  
Ամենայն գիրք միշտ կարդում են,  
Սիրոյ գիրքը չըկամին.  
Ո՞ւր, չըգիտեմ, որոնում են  
Բախտը իրանց խեղճ կեանքին:

Բառեր՝ թերթ, թերթել—листъ, перелистывать. էջ—երես գրքի, страница. Սուրբ-Գիրքը—Աւետարանը. կտակ—завѣщание. աւանդ—завѣтъ, наслѣдіе. աւանդութիւն—предание. աւանդել—передавать. գրոշմ—печать, клеймо. գրոշմել—запечатать.

Ուղղագրութիւն՝ Ուր է սէրը մարդերի՝ փոխանակ—մարդկանց. մարդ, մարդու, մարդուց, մարդիկ, մարդկանց, մարդկանցից:

Գիր կենդանի՝ փոխանակ—կենդանի գիր, մի գիր, մի գրուածք, որ միշտ կենդանի կը մնայ, «Սիրոյ գիրքը չկամին»՝ փոխանակ—չեն կամենում կարդալ այն գիրքը, ուր սէր է քարոզուած—Աւետարանը: Սէր, սիրոյ, սիրուց: Յոգնակի չունի:

15. ԱԳԱՅՈՒԹԵԱՆ ՊՏՈՒՂԸ

Երեք մարդ, միասին ճանապարհորդելիս, գանձ գրտան և բաժանեցին իրանց մէջ: Նրանք պէտք է շարունակէին ճանապարհը. բայց որովհետև ուտելու պաշարը վերջացել էր՝ վճռեցին որ իրանցից մինը գնայ քաղաք կերակուր բերելու, և այդ գործը յանձնեցին աւելի փորձահասակ ընկերին: Սա գնաց և ճանապարհին սկսեց այսպէս մտածել. «Ես այժմ հարուստ եմ, բայց աւելի հարուստ կըլինեմ, եթէ կարողանամ ընկերներէս բաժինն էլ ձեռք գցել: Եւ այս շատ դժուար չէ. կըթունաւորեմ այն ուտելիքը, որ պիտի գնեմ, իսկ իմ մասին կ'ասեմ, թէ ճաշել էմ արդէն. ընկերներս առանց կասկածելու կ'ուտեն ու կըմբռնեն»:

Միւս ընկերներն էլ այսպէս էին խօսում.

«Ինչո՞ւ պէտք է մենք անպատճառ բաժին տանք այս պատանի մարդուն. մի՞թէ չենք կարող գործ գնել մեր սուր զանակները, որ մեր հարստութիւնն աւելի կատարեալ լինի. ուրեմն դայ թէ չէ՝ սպանենք իսկոյն»:

Պատանին բերաւ թունաւորուած կերակուրը. ընկերներն շտապով սպանեցին նրան, իսկ իրանք մեռան թոյնի ներգործութիւնից: Գանձը մնաց անտէր:

Բառեր՝ գանձ—խաղիայ, казна. գանձել—ժողովել, փող հաւաքել. թոյն—ядъ. թունաւորել—թոյն խառնել հետը, թոյն տալ մէկին, отравить. գնել—առնել, купить. պատանի—юноша. պատանի մարդուն—ջահէլ մարդուն, молодому человеку.

Ուղղագրութիւն՝ ճանապարհորդելիս—ճանապարհորդելու ժամանակ, երբ ճանապարհ էին գնում:—«Գնալիս, գալիս, կարգալիս, գրելիս, ուտելիս»... ասպանի դերբայի մի առանձին ձևը, բայ-ածական, որ վարւում է որպէս ժամանակական մակրայ:

«Գայ թէ չէ, տեսնես թէ չէ, լսես թէ չէ»—երբոր գայ, հէնց որ գայ—երկրորդական նախադասութիւններ ժամանակական մակրայի փոխարէն՝ գալուն պէս, տեսնելուն պէս և այլն:

Թունաւորած, թունաւորուած. գրած, գրուած. սպանած, ըսւած... Անցած դերբայի ներգործական և կրաւորական ձևերը անխտիր գործ են ածուում միմեանց փոխարէն. «պատանին բերաւ թունաւորուած կերակուրը (իրան ձեռքով թունաւորուած), կամ թունաւորած կերակուրը» (որ ինքը թունաւորել էր):

16. ԳԻՒՂԱԿԱՆ ԵՒ ՄՁԱԿ

Գեղջուկ ծերուկն իւր մշակը հետն առած՝  
 Իրիկուան դէմ տուն էր գալիս դաշտերից.  
 Մի արջ ելաւ ծերի դիմացը յանկարծ,  
 Երբ անցնում էր մութ անտառի նա միջից:  
 Ծերուկն էլ՝ ուշ-վաղ կանչելը չկարաց.  
 Արջը նրան տակը կոխեց ու գոռաց,  
 Նստեց վրբան, շուռ-մուռ տուեց, քաշքըշեց,  
 Ամեն կողմից զարհուրելի կըծոտեց:  
 Խեղճ ծերուկի բանը վատ էր, ինչ անէր.  
 «Մըրտոյ եղբայր, հասիր, հասիր», կանչում էր:

Մըրտոն կացինը առաւ՝  
 Կայծակի պէս մօտ վազեց,  
 Արջի գլխին մոլեգին  
 Կացնի բերնով հարուածեց,  
 Յետոյ հանեց դաշոյնը,  
 Կրճնատակից ներս ցցեց  
 Եւ ահուելի գազանի  
 Թորն ու սիրտը խոցոտեց:

Արջը օռնաց ու վայր ընկաւ կիսամեռ.  
 Երիւնի մէջ տապալուելով հեծում էր:

Փորձանքը անցաւ.  
 Ծերուկն ոտք ելաւ  
 Ու խեղճ Մըրտոյին  
 Քըֆը ել սկսաւ:

Մեր քաջ Մըրտոն ապշեցաւ,  
 Գարձաւ, ծերուկին ասաւ.  
 — «Ինչո՞ւ կըքըֆրես դու ինձ, մահտեսի»:  
 — «Ինչո՞ւ կըքըֆրեմ, այ յիմար, քեզի.  
 Իմ սիրտս այրւում է. դու ուրախացիր.  
 2էս տեսնում՝ արջի մորթը վըշացըիր»:

Բառեր՝ գեղջուկ—գիւղացի. մշակ—բանուոր. կայծակ—молния.  
 մոլեգին—яроственный,—тно. հարուածել—ударить. դաշոյն—խանչալ,  
 кинжалъ. ահուելի—ужасный. տապալուելով—զլորուելով. հեծում  
 էր—տանջում էր, տնքում էր, стоналъ. քֆրել—նախատել, հայհոյել:  
 Ուղղագրութիւն՝ Մրտոյ, Մրտոյի, Մրտոյից, Մրտոն. քահա-  
 նայ, քահանայի, քահանայից, քահանան... ոյ և այ վերջացած գոյա-  
 կանները դիմորոշ յօդ առնելիս յ տառը կորցնում են:  
 Գրեցէք այս առակը արձակ ձևով:

17. Հ Օ Ր Խ Ր Ա Տ Ը

Մի հայր հինգ որդի ունէր: Նա միշտ խրատում էր  
 նրանց, որ սիրով ու համերաշխ ապրեն: Բայց որդիքը  
 հօր պատուէրը չէին կատարում: Մի անգամ հայրը կան-  
 չեց բոլոր որդիներին և, մի ցախաւել ձեռքին, մօտեցաւ  
 ամենից մեծին: «Կոտրիր, որդի, այս ցախաւելը», ասաց  
 հայրը:

Որդին չարչարուեց, բայց չկարողացաւ կոտրել:  
 Հայրը դիմեց երկրորդ որդուն, բայց նա էլ չկարո-

ղացաւ կոտրել: Միւս եղբայրներն էլ չարչարուեցան, բայց  
 չկարողացան:

Հայրը քանդեց ցախաւելի կապերը և ամեն մի ճի-  
 պոտ առանձին տուեց եղբայրներին: Նրանք կոտրատե-  
 ցին—մանրեցին ճիւղտները:

Հայրն ասաց. «Գուք էլ, որդիք, նման էք այդ ցա-  
 խաւելին. եթէ համերաշխ լինէք և սիրով ապրէք, ձեզ ոչ  
 ոք չի կարող վնասել, իսկ եթէ բաժանուիք և առանձին-  
 առանձին գործէք, ամենքը ձեզ կըյաղթեն, կ'ոչնչացնեն»:

Բառեր՝ համերաշխ—համաձայն, միաբան. պատուէր—խրատ,  
 խորհուրդ, наставление. ցախաւել—ցախից կապած աւել. դիմել—  
 обращаться. առանձին—ջոկջոկ, отдѣльно. յաղթել—побѣждать,  
 побѣждать.

Ուղղագրութիւն՝ կանչեց բոլոր որդիներին՝ փոխանակ—որ-  
 դոցը. որդի, որդու, որդիք, որդոց: Քանդեց ցախաւելի կապերը՝ փո-  
 խանակ—բացեց, յետ արաւ, լուծեց:

Ուտէր, ասէր, խօսէր, երգէր. կ'ուտէր, կ'ասէր, կ'երգէր. կ'ասէր,  
 կըրերէք, կըխօսէք, կ'երգէք, կ'ուտէք:—Բայերի մէջ էր և էք վերջա-  
 տորութիւնները միշտ է-ով են գրւում:

18. Կ Ա Պ Ի Կ Ե Ի Ա Կ Ն Ո Յ

Կապիկի մէկը ծերացել, աչքի ոյժը պակսել էր.

Բայց մարդկանցից լըսել էր,

Թէ այդ չարիքն ունի ճար.

ձարն էր՝ ակնոց դրնել աչքին անպատճառ:

Այս որ լսում, հինգ-վեց ակնոց է գրնում,

Այս կողմ, այն կողմ դարձընում.

Մէկը առնում, գըլխի վըրայ է դնում,

Յետոյ իջեցնում, պոչի վրայ հագցընում,

Հոտոտում է ու լիզում է ապակին,

Բայց ակնոցից շահ չի տեսնում իւր աչքին: «Գետինն անցնի, գոռում է նա դայրագին խենթ է, ո՞վ որ լըսէ մարդկանց ասածին.

Ահա ինչ որ գովեստ արին ակնոցի, Սուտ է եղած. ես էլ խենթըս, հաւտացի»:

Կապիկն վշտացած սրտի խոր ցաւով Ակնոցը ուժգին տալիս է քարով Եւ փրշուր-փրշուր զգմնա զճոցոր միջմուտս Անում ինչպէս ջուր:

Բառեր՝ չարիք—злой. ճար—глагол, հնար. գնում է—получаетъ. առնում է—отбереть. գետինն անցնի—գետինը մտնի. անցնի—անցկենայ, հեռանայ. խենթ—խիմար. դայրագին—բարկացած, ГИБНО. գովեստ արին ակնոցի—ակնոցը գովեցին. ուժգին—սաստիկութեամբ:

Ուղղագրութիւն՝ Գովեստ արին ակնոցի (տրական հ.): Գովեցին ակնոցը (հայցական հոլով): Որդին պատիւ տուեց հօրը (տրական): Որդին պատուեց հօրը (հայցական):

Արձակ գրեցէք այս առակը ձեր տետրակների մէջ: Համեմատեցէք թարգմանութիւնը ռուսերէն բնագրի հետ:

ՃԱՄԻՆ ԵՒ ԱՐԵՒԸ

Մի անգամ արեգակն ու հիւսիսային ժանտ քամին վէճ բաց արին, թէ նրանցից ո՞րն է ուժեղ: Երկար վիճեցին նրանք. վերջապէս վճռեցին, որ իրանց ոյժը փորձեն այն ճանապարհորդի վրայ, որ նոյն ժամին մօտից անցնում էր: «Նայիր՝ թէ ինչպէս կ'ընկնեմ նրա վրայ, ասաց քամին, և մի ակնթարթում կրխլեմ նրա վերարկուն»: Այս որ ասաց, սկսեց փչել՝ ինչքան ոյժը կտրում էր. բայց

որքան շատ էր աշխատում քամին, այնքան աւելի պինդ էր փաթաթւում ճանապարհորդը վերարկուի մէջ. նա, ի հարկէ, զժգոհում էր վատ եղանակից, բայց միևնոյն ժամանակ աւելի շտապում էր առաջ գնալ: Քամին բարկացաւ, կատաղեցաւ և թափեց խեղճ ճանապարհորդի վրայ անձրև ու ձիւն: Նստվելով քամուն՝ ճանապարհորդը վերարկուի թեքը հաղաւ, վերեկից էլ դօտին կապեց: Հիմա հասկացաւ քամին, որ էլ չի կարող նրա վերարկուն խլել: Արեգակը՝ տեսնելով իւր հակառակորդի անգօրութիւնը, ժպտաց, դուրս նայեց ամպերի յետքից, ջերմացրեց, ցամաքացրեց երկիրը, դրա հետ միասին և խղճուկ սառած ճանապարհորդին: Արեգակի ճառագայթներով տաքացած, նա քաջալերուեց, օրհնեց արեգակը, հանեց վերարկուն, ծալեց ու կապեց թամբին: «Տեսնում ես, ասաց այն ժամանակ հեղիկ արևը բարկացկոտ քամուն. քաղցրութեամբ ու բարութեամբ աւելի բան կարելի է անել, քան թէ բարկութեամբ»:

Բառեր՝ հիւսիսային—հիւսիսից փչող, сѣверный. ժանտ—չար, գէշ, злой, противный. վճռեցին—порѣшили. ոյժ—сила. ուժեղ—сильный. ակնթարթ—мгновение. խլել—սկսել, сорвать. խլել—отнимать. վերարկու—пальто. զժգոհում էր, արտնջում էր, ропталъ. նստվելով—проклиная. ժպիտ—улыбка. ջերմացրեց—տաքացրեց, согрѣлъ. քաջալերուեց—սիրա առաւ, ободрился. հեղիկ—кроткій. բարկացկոտ—сердитый.

Ուղղագրութիւն՝ քամի, քամոտ. ոյժ, ուժեղ. դօր, դօրեղ, անգօր. միտք, մաւտք, անմիտ. հեղ, հեղիկ. գիր, գրաւոր, անգիր:

Բառերը սկզբից կամ վերջից աննշան մասնիկներ են առնում և իրանց նախնական նշանակութիւնը փոխում են, ածանցում են (նախատիպ և ածանցական բառեր): Բառի այն մասը, որ ածանցուելիս անփոփոխ է մնում, կոչւում է արմատ: Արմատի վերջից կցուած մասնիկը կոչւում է վերջաւորութիւն (վերջայաւ մասնիկ). արմատի առաջից կցուած մասնիկը կոչւում է նախայար մասնիկ:

20. \* \* \*

Կանաչ տերևով ծառը ծածկըւեց  
 եւ կոկոններով քընքոյշ հագնըւեց.  
 Կենսատու ցօղով մարգարտանման  
 Ուռճանում էր նա շընչովը գարնան:  
 Բայց նըրա դալար շիւղերին մօտիկ  
 Թագնուեց դաժան ծեր-սառնամանիք:  
 — «է՛յ, տո՛ւր ինձ, ասաց, մանուկ կոկոններ.

2էս տալ, տես, գօրով ինքըս կը խըլեմ...»  
 «Ա՛խ, թո՛ղ տուր հանդիստ դու իմ բողբոջներ,  
 Գոնէ բացուէին նըրա ծաղիկներ...»,  
 Սառնամանիքին ծառը շըշընջաց  
 եւ ողջ էութեամբ արմատից գողաց:

Եւ ահա կամաց-կամաց բացուեցան  
 Անուշ բուրմունքով քընքոյշ կոկոններ,  
 եւ արեգակից ջերմ փայփայուեցան.  
 Իսկ թռչունների անհող երամներ  
 շընչեցին ուրախ անուշիկ երգեր:  
 Յանկարծ ծառի մօտ թըռաւ չար քամին.

— «է՛յ, տո՛ւր ինձ, ասաց, սիրուն ծաղիկներ,  
 Կըյափշտակեմ, թէ չէ, այս ժամին...»,  
 «Ա՛խ, խընայիր ինձ և մի արգելիք  
 Իմ ծաղիկներին պտղատու լինել...»,  
 Կատաղի քամուն ծառը շըշընջաց  
 եւ սարսափելով վախից գողգողաց:

Բայց ահա մատաղ պտուղներին խակ  
 Ջերմութիւն տըւեց ամրան արեգակ,

Եւ ծառը գուգուեց հասուն մըրգերով:  
 Մօտեցաւ նըրան յուշիկ քայլերով  
 Մատղաշ պատանին՝ տապիցը նեղուած.  
 — «Ա՛խ, տո՛ւր ինձ, ասաց, անուշիկ մըրգեր.  
 Զօրով չեմ խըլիլ երախայրիքներ»:  
 «Ա՛ն քեզ, պատանի, ահա իմ ճըղներ  
 Քեզ են ըսպատում վաղուց անհամբեր,  
 Որ գաս, հեշտացնես նըրանց անուշ բեռ»:  
 Եւ ծառը սիրով նըրան ողջունեց  
 Ու խոնարհելով ճըղները կախեց:

Բառեր՝ քնքոյշ—нежный (о). կենսատու—կեանք տուող. ցօղ—  
 —роса. մարգարիտ—жемчугъ. ուռճանում էր—լցում, հասունա-  
 նում էր. դաժան—անողորմ, չար, бѣсердечный, злой. սառնամա-  
 նիք—морозъ. մանուկ կոկոններ—ջահէլ, նորարողոջ կոկոններ. բող-  
 բոջ—побѣгъ, отростокъ. շնջաց—шепнулъ. անհող—бездоботный.  
 երամ—стая. մատաղ—ջահէլ, նորարոյս. հասուն—հասած. յուշիկ  
 քայլերով—հանդարտիկ, մեղմիկ քայլերով. մատղաշ—ջահէլ, молодой.  
 տապ—չոք, տաքութիւն. երախայրիք—առաջին պտուղները. հեշտա-  
 ցնել—թեթեացնել:

Ուղղագրութիւն՝ կանաչ տերևով ծառը ծածկըւեց, հագնըւեց.  
 փոխանակ ծածկուեցաւ, հագնուեցաւ: Բանաստեղծութիւննե-  
 րի մէջ ու երկբարբառը կըճատոււմ է և, եթէ նա պէտք է առանձին  
 վանկ կազմի, ո-ի փոխարէն առնում է ը տառը:

Նախայար մասնիկների թիւը սահմանափակ է՝ «չտալ, չըբըբ,  
 անմիտ, տղեղ, ախամայ, առարկայ, արտազրել, քաղաձայն, քացառիկ,  
 գերբնական, դերասան, ենթակայ, հակառակ, համաձայն, մակըրայ,  
 յարատև, ներհակ, շաղկապ, վերաստուգել, տարբեր, տրամադիր,  
 պարագայ, ստորագրել, վերագրել, փոխադրել:

× 21. Վ Ե Հ Ա Ն Չ Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Մի շատ հարուստ մարդ, ծերութեան օրերում, ցան-  
 կացաւ իւր ունեցած կայքը բաժանել երեք որդոց մէջ:

Իւրաքանչիւրին իւր մասը տալուց յետոյ՝ նա ասաց. «Մը-  
նում է էլի մի շատ թանկագին գոհար. ես այն կըտամ  
ձեզանից նրան, ո՞վ մի վեհանձնութիւն կ'անէ: Իսկ զբա-  
համար ես ձեզ երեք ամիս ժամանակ եմ տալիս:

Ջուտով որդիքը ցրուեցին. նրանք ման եկան զանա-  
զան քաղաքներ և երբ հօր ուզածը կատարեցին, կրկին  
վերադարձան տուն: Նրանք սկսեցին պատմել հօրը իրանց  
արած վեհանձնութիւնները:

Անդրանիկ որդին ասաց.

— Իմ ճանապարհորդութեան ժամանակ մի օտարա-  
կան յանձնեց ինձ իւր բոլոր հարստութիւնը, և թէպէտ  
նա ինձանից ոչինչ ստացական չառաւ, բայց ես կրկին  
հաւատարմութեամբ վերադարձրի նրան իւր զոյքը:

— Որդեակ, պատասխանեց հայրը, դու արել ես այն՝  
ինչ որ պէտք է անէիր, և այն մարդը, որ ուրիշ տեսակ  
կրվարուէր, խաբերայ կըլինէր. ազնիւ լինելը մարդու  
համար մի պարտականութիւն է: Քո արածի մէջ վեհանձ-  
նութիւն չկայ:

Յետոյ խօսեց միջակ որդին.

— Իմ ճանապարհորդութեան միջոցին մէկ օր ես անց  
էի կենում մի լճի եզերքով. մի փոքրիկ երեխայ ջուրն  
ընկաւ: Ես խսկոյն օգնութեան հասայ և, չխնայելով իմ  
կեանքը՝ ազատեցի նրան:

— Ձնորհաւորում եմ, ասաց հայրը. բայց դարձեալ  
այդ գործի մէջ վեհանձնութիւն չկայ: Քո արածը կարեկ-  
ցութիւն է, բարեգործութիւն է, բայց ոչ վեհանձնութիւն:

Վերջապէս խօսեց կրտսեր որդին.

— Մի օր ես իմ թշնամուն տեսայ խորը քնած մի  
անդունդի ծայրին: Ամենաթեթև շարժողութիւնն անգամ  
կարող էր նրան անդունդը գլորել. բայց ես նրան զար-  
թեցրի մեղմաբար և ազատեցի վտանգից:

— Ո՛հ, դաւանկս, ազադակեց բարի ծերունին. գո-  
հարը քոնն է: Ո՛րպիսի վեհանձնութիւն՝ լաւութիւն տալ  
թշնամուն, մահից ազատել թշնամուն:

Բառեր՝ վեհանձնութիւն—великодушіе. կայք—имущество.  
գոհար—бриллиантъ, драгоценный камень. անդրանիկ—старший,  
первенецъ. օտարական—чужестранецъ. օտացական—квитанція.  
գոյք—богатство. գարտականութիւն—долгъ, обязанность. միջնակ  
որդին—средний сынъ. լիձ—озеро. եզերք—ջրի ափը, берегъ.  
կարեկցել—մեղքանալ, խղճալ, сострадать. կրտսեր որդին—ամենից  
փոքր որդին, младший сынъ. անդունդ—пропастъ. бездна, ազադակեց  
—воскликнулъ. ծերունի—старецъ, старикъ.

Ուղղազրուութիւն՝ ցրուեցին, փոխանակ ցրու եկան. ներգործա-  
կան՝ ցրել—ցրել տալ. կրտսերական՝ ցրուիլ—շաղ արուիլ. չէզոք՝ ցրել  
գալ: Չխնայելով իմ կեանքը, կեանքս վտանգի ենթարկելով...

Չարթեցրի մեղմաբար, քաջաբար, արիաբար. ուժգին, լալա-  
զին. ուղղակի, յանկարծակի—մակբայակերտ վերջայար մասնիկներ են:

Նկատեցէք թէ ինչ նշանակութիւն են տալիս հեռեւեալ բառերին  
վերջայար մասնիկները՝ երկնային, դաշտային. արևելեան, արևմտեան,  
հայկական, զիւղական. քարէ, քարեայ, քարեղէն. աղի, պղնձի, ար-  
ծաթի, ընկուզենի, խոզենի (միս), գառնենի (միս և մորթ):

22. ԱՊՈՒՌՆ ՈՒ ՄՐՋԻՆԸ

Յատրտան ու շատզրուց ճըպուռը  
ձրոճը ալով անցրեց բոլոր ամառը,  
Այնպէս որ ինքն էլ գրեթէ չիմացաւ,  
Թէ ձմեռն յանկարծ ինչպէս վրայ հասաւ:  
Գեղնեցան ու թօշնեցան դալարագեղ զաշտերը.  
Ո՛ւր մնացին ամառուան տաք ու պայծառ օրերը,  
Երբ ամեն մի տերևի ներքեիկ,  
Պատրաստ էր ճպուռին թէ հաց, թէ բարձիկ—  
Վաղուց անցան գնացին այն բաները.  
Ցուրտը կոխեց, սովը մեկնեց ճանկերը.

Սուս էր կացել ճպուռը, ձայն չէր հանում,  
 Քաղցած փորին հէնց երգն էր պակասում.  
 Խեղճը նեղն ընկած, հողին բերանը,  
 Սողալով գնաց մըջիննի բունը.  
 «Սանամայր, ասաց, սիրուն դրացիս,  
 Չեռքից մի թուղիլ ինձ այս նեղ ժամիս,  
 Մի ճար, մի ճարակ, քաղցած չըմեռնիմ,  
 Մինչև որ դարնան օրերին հասնիմ,  
 Փոքրիկ մի ապրուստ, տաքուկ մի տեղ տուր»:  
 — Կարմանամ քեզնից, կնքամայր, իմ քոյր,  
 Ասաւ մըջիննիկն. ինչ է պատճառը,  
 Ի՞նչ արիւր ապա բոլոր ամառը:  
 «Ա՛խ, հողիս, ասաց, միջոց ունէի.  
 Ես բոլոր օրը խաղ կրկանչէի.  
 Պարտէզներում, այգիներում անդադար ք է ֆ կ'անէի,  
 Այնպէս որ մինչև հիմա էլ դեռ գլուխըս կըպտտի»:  
 — Ա՛, ուրեմն դուն... «Ես ամառն ի բուն,  
 Խաղեր կանչեցի մէկ մէկից սիրուն»:  
 — Խաղ կանչեցիր, հա՛, այդ էլ վատ բան չէ,  
 Ուրեմն հիմակ էլ պարէ ու ցատքէ:

Բառեր՝ ցատքըտան—ցատքըտող—попрыгунъ, попрыгунья.  
 ճպուռ—ճիճի, сгребкоза. մըջինն—муравей. դալարագեղ—գեղեցիկ  
 կանաչով պսասծ. կնքամայր—кумучка. կնքահայր—кумъ. թօշ-  
 նեցան—թաւամնցան. հողին բերանը—չնշասպառ, задыхался. ամառն  
 ի բուն—ամբողջ ամառը:

Ուղղագրութիւն՝ ներքեիկ, բարձիկ, ճարակ, տաքուկ—վեր-  
 ջայար մասնիկներ են քնքուշական, փաղաքշական նշանակութեամբ:

Նկատողութեան առէք հետեւեալ բառերի վերջայարները՝ հան-  
 ճարեղ, զօրեղ, հանճարաւոր, զօրաւոր. իւզոտ, ոսկրոտ. գիւղացի,  
 տնեցի. խելացի, մտացի. հնոտի, ցնցոտի, օտարոտի. ազգու. մահա-  
 ցու, մասցու, տիրացու...

Մի թագաւոր նստած էր իր զահի վրայ: Հեռաւոր  
 երկրից մի դեսպան եկաւ և, առանց խօսելու, թագաւորի  
 զահի շուրջը մի կտր դիժ քաշեց ու լուռ ու մունջ մի  
 կողմը քաշուեց-նստեց:

Թագաւորը այս մարդու արարմունքից ոչինչ չհաս-  
 վացաւ. կանչեց իր իշխաններին. նրանք էլ մի բան չհաս-  
 կացան: Թագաւորը շատ վատ դուրսեան մէջ էր: Նրա  
 համար մեծ ամօթ էր, որ իւր տէրութեան մէջ մի խելօք  
 մարդ չէր գտնուում դեսպանի արածը հասկանալու հա-  
 մար: Թագաւորը սաստիկ նեղացած՝ յայտնեց ամենքին,  
 որ եթէ նրան պատասխան տուող չգտնուի, էլ ոչ ոքի  
 կենդանի չի թողնիլ:

Թագաւորի կողմից խնդրակներ ման եկան ամեն  
 կողմ, և վերջը մի տան մէջ գտան մի ջուլհակ (ոստայ-  
 նակ): Տեսնում են, որ այն մարդը մի տեղ նստած՝ միա-  
 ժամանակ երեք գործ է շինում.— համ իւր կտանն է գոր-  
 ծում, համ երկու երեխայի օրօրոց է օրօրում, համ էլ  
 տանիքի վրայ ցորենն է փռել ու մօտը մի ճիւղոտ տնկել.  
 երբ ինքը իր կտաւի թելերը շարժում է՝ կտաւը գործում  
 է, օրօրոցները օրօրում են, այն ճիւղոտի շարժուելուց էլ  
 տանիքի ծտերն են փախչում, ցորենից հեռանում:

Նրանք այս բանի վրայ շատ են զարմանում: Յետոյ  
 նրան պատմում են, թէ հեռաւոր երկրից մի մարդ եկաւ,  
 թագաւորի զահի շուրջը մի դիժ քաշեց, բայց ոչ ոք չկա-  
 ըողացաւ իմանալ, թէ զրանով ինչ էր ուղում ասել: «Վեր  
 կաց, գնանք. եթէ դու նրա միտքն իմանաս, թագաւորը  
 քեզ մեծ պարգևներ կըտայ»:

Ջուլհակը միքիչ մտածում է, յետոյ առնում է եր-

կու վէգ ու մի վառիկ և գնում է հետները: Հասնելով թագաւորի մօտ, վէգերը հանում է և ձգում դեսպանի առաջը: Դեսպանը զբաւանից մի բուռը կորեկ է հանում ու շաղ տալիս գետնին: Ջուլհակը բաց է թողնում վառիկը, որ իսկոյն սկսում է կտցահարել կորեկը:

Այս բանը տեսնելով դեսպանը տրեխները հագնում է ու սուսուփուս դուրս գնում:

Թագաւորը ջուլհակին հարցնում է, թէ այդ ինչ արիր: Ջուլհակը պատասխանում է. «Այդ մարդը եկել էր ասելու, թէ մեր թագաւորը գալիս է քեզ հետ պատերազմելու, քո երկրին տիրելու. խոնարհում ես, թէ կըուով ես ուզում պատասխանել: Ես նրա առաջը վէգեր ձգելով հասկացրի, թէ դուք մեզ համար երեխաներ էք. դնացէք, վէգի խաղացէք. դուք ո՞վ, մեզ հետ կուուոյն ո՞վ: Նա իր շաղ տուած կորեկով ուզեց հասկացնել, թէ մեր գօրքերն անթիւ, անհամար են. դուք ինչ կարող էք անել: Եւ երբ ես բաց թողի վառիկս, որ նրա բոլոր կորեկը կերաւ, դրանով պատասխանեցի, թէ մեր մի մարդը ձեր հագար մարդուն կըջարդէ. գնա պատմիր քո թագաւորին»:

Թագաւորը այս բացատրութիւնը լսելով՝ մեծամեծ պարզկեններ տուեց ջուլհակին և ուզեց նրան վէգի թի պաշտօն տալ: Բայց ջուլհակը պարզկենների մի մասովը բաւականացաւ և թագաւորին ասաց. «Ոչ, թագաւոր, թող որ ես ջուլհակ մնամ. միայն այս եմ խնդրում քեզանից. չմոռանաս, որ հասարակ արհեստաւորի մէջ էլ կըգտնուի այնպիսին, որ նեղ օրում քեզ պէտք կըգայ: Վէգի ըններիդ ինչ պատիւ ուզում ես՝ տո՛ւր, միայն ջուլհակին ու կօշկակարին էլ մարդու տեղ դիր»:

Բառեր՝ նրբամիտ—սրամիտ, человекъ съ тонкимъ умомъ. ջուլհակ—ստայնակ, ткачъ. գահ—тронъ. դեսպան—посоль. արար-

մուկը—поступокъ. խնդրակներ—կանչողներ, звать. միաժամանակ—одновременно. կառւ—холостъ. տանիք—կտուր, крыша. կորեկ—просо. վէգիք—նախարար, министръ. պաշտօն—должность.

Ուղղագրութիւն՝ թողնել, փոխանակ՝ թողուլ կամ թողել: Հեռաւոր երկրից մի մարդ եկաւ, մի գիծ քաշեց—փոխանակ՝ մի մարդ է եկել, մի գիծ է քաշել...

Դիտեցէք վերջայարները՝ շրջան, վաղկան, սողուն, թռչուն, նախատինք, բաժինք. զարմացումն, ողբումն, գոշլւն, մունչիւն, կտրոց, կապոց. պահարան, տեսարան. ծառաստան, բուրաստան, հայաստան, Ռուսաստան (ստան—աշխարհ):

24. ՆԱՄՈՒՍ ՈՒ ՂԷՅՐԱԹ

Դեռ թոթովախօս մի մանուկ էի  
Եւ եօթ տարեկան անգամ չըկայի,  
Երբ ինձ աւանդեց հայրս իմ անուս՝  
Մի սրբազան խօսք—և դա էր՝ «Նամուս»:

Դըլարոցի շէմքին դեռ ոտ չըղըրած,  
Դեռ նոր էի գիրք ես ձեռքըս առած,  
Երբ մօրս համրոյր թըրջեց իմ ճակատ  
Ու պատուիրեց ինձ անել միշտ «ղէյրաթ»:

Բայց կարճ մնացի ուսումնարանում.  
Աղքատի բաղդը է ինչ դէ լինում...  
Հօրս պատուէրով սովորեցի արհեստ,  
Սիրեցի նրա վաստակը համեստ:

Եւ այն օրից յետ,  
Երբ ընկերացայ մուրճ ու սալի հետ,  
Քըրտինըրը դէմքէս ծորում է կաթ-կաթ  
Ու ինձ յիշեցնում նամուս ու ղէյրաթ:

Բառեր՝ նամուս—պատիւ, честь. դէյրաթ—խնայողութիւն, бережливость. թոթովախօս—նոր խօսել սկսած, лепетунъ. աւանդեց—завѣщаль. անուս—неграмотный. սրբազան—священный. մուրճ—молотъ. սալ—наковальня. ծորում է—сочится. ծորակ—крантъ.

Ուղղագրութիւն՝ դիտեցէք հետեւալ բառերի վերջայարմերը և նոցա նշանակութիւնը որոշեցէք. դպրոց, դպրանոց, աղքատանոց, հնգանոց, տասնանոց, կապոց, պահոց. որսորդ, ճամբորդ. պահապան, այգեպան. արքունի, ծերունի. մատանի, հովանի, լեղուանի. դեղնուց, սպիտակուց. հագուստ, պահեստ, պահուստ. ծնունդ, խառնուրդ:

25. ԱՐԵՒԱՄՆՆՈՒԿ

I

Մի գեղեցիկ գարնանային առաւօտ էր:

Արևը նոր դուրս էր եկել ու իր բարի լոյսը տուել Մասիս սարին: Մասիսի ձիւնապատ գագաթը սկսել էր այնպէս փայլել, փայլփլել, այնպէս կանաչ-կարմրին տալ, որ տեսնողի խելքը գնում էր: Մի ժամից յետոյ սարի գանաղան մասերից քուլայ-քուլայ ամպեր բարձրացան և աջ ու ձախ, վեր ու վայր շարժուելով, մեծանալով ու փոքրանալով, փուռելով ու խմբուելով՝ գանաղան ձևեր ստացան:

Այս հիանալի պատկերները ամենայն առաւօտ նկարուում էին Մասիսի վրայ, բայց ոչ ոքի ուշադրութիւնը չէին գրաւում:

Ոչ ոք ժամանակ չունէր նայելու, ոչ ոք ճաշակ չունէր հիանալու: Դա մի սովորական երևոյթ էր, որ շողջողալով ամենքին իմաց էր տալիս, որ վերկենան, իրանց բանին գնան:

Այգեպանն շտապում էր, որ շուտով այգին գնայ ու

անցած օրուայ կիսատ թողածն աւարտէ. տաւարածը տաւարն էր արօտ տանում. աղջկերքն ու հարսները դէպի աղբիւրն էին վազում. պառանները կերակուրի պատրաստութիւնն էին տեսնում:

Բայց այս անգամ մէկը կար, որ Մասիսին էր նայում, նրա փայլուն տեսքից հիանում ու զուարճանում:

Այդ մէկը մի մանուկ էր:  
Մի առոյգ, գուարթ ու սիրուն մանուկ:  
Մի ոսկեթել մագերով, նախշուն աչքերով մանուկ:  
Նրա երեսն արևի նման լոյս էր տալիս, ձիւնի նման փայլում:  
Նրա աչքերն արեգակի նման ճառագայթներ էին արձակում:  
Նա կարծես հողեղէն չէր, այլ հրեղէն:  
Նա հէնց իմանաս արեգակի ծնունդ լինէր, Արևի որդին:

II

Ամեն առաւօտ, երբ արևի շողքն ընկնում էր Մասիսի վրայ, Արևամանուկը պէտք է վեր կացած լինէր, որ մայր արևի առաջին ողջոյնը, առաջին բարի լոյսն ընդունէր:

Նա շատ էր սիրում ամպեղէն երևոյթների, ամպեղէն ձևերի վրայ նայել: Ամպերի շարժումները, նրանց ձևափոխութիւնները գրաւում, յափշտակում էին նրա ուշքն ու միտքը:

Այդ ամպերը շատ անգամ նրա աչքումը վիշապների կերպարանք էին ստանում և մէկ-մէկու կուլ տալիս: Երբեմն զազաններ էին դառնում ու իրար հետ կուռում:

Երբեմն դառնում էին ոչխարի հօտեր ու մի լեռնաչափ հովիւ էլ՝ գերանաչափ մի սրինգ բերնին դրած, ածում էր: Երբեմն դառնում էին մեծ-մեծ վշաններ ու նրանց մէջ ներս ու դուրս էին անում վիթխարի հսկաներ:

Երբեմն դառնում էին զօրախմբեր ու իրար դէմ պատերազմում: Այդ լինում էր աւելի փոթորկի ժամանակ,

երբ որոտում էր երկինքը, փայլատակում էր կայծակը ու ամպերն իրար էին խփւում:

Արեամանուկը ոչ միայն չէր վախենում այդ որոտումունքից, այլ բարձրանում էր մի քարե վրայ ու ամպերին հրամաններ էր տալիս, դռչելով: — յառնչ, յետ, անջ, ձանխ, միասին, կարգով, արանգ...

Ինչպէս տեսնում էք, մեր Արեամանուկը թէպէտ դեռ փոքր էր — հազիւ տասը կամ տասներկու տարեկան լինէր — բայց շատ սրտոտ էր ու սրամիտ:

Երևում էր որ ժամանակով մեծ ու երեկի մարդ պէտք է դառնայ: Այդպէս էին ասում բազմ գուշակողները, այդպէս հաւատացած էին ամենքը:

Բայց նա այժմ դեռ մի գառնաբաժ էր:

III

Այս՝ ինչ որ ասում եմ, նվ է իմանում, թէ մեզանից քանի-քանի տարի առաջ է եղել: Եթէ ասեմ հազար տարի, երկու հազար տարի, երեք հազար տարի՝ էլի քիչ կըլինի:

Այդ հին ժամանակներումը Մասիսի ու Արագածի արանքումը, ուր որ հիմա Արարատեան մեծ դաշտն է, ուր որ մեր Սուրբ Էջմիածինն է, Երևան քաղաքն է, Երասխ գետն է, Գեղամայ ծովն է՝ ահա այդ գաւառումը մի մեծ գիւղ է լինում, Արեան, թէ Արմաւան անունով, հաստատը չգիտեմ, և յատուկ տեղն էլ չեմ կարող ձեռ ասել:

Արմաւանի օղն ու ջուրը շատ մաքուր էր ու առողջարար: Երա աղբիւրը քառասուն ակն ունէր, քառասուն տեղից բղխում էր ու յետոյ միանում, դառնում մի այնպիսի գետ, որ եօթը ջրաղաց էր պարտեցնում: Բացի

գրանից՝ գիւղի հանդերն էլ լիքն էին անմահական աղբիւրներով:

Արմաւանի հայերը, թէ մարդիկ և թէ կանայք, բոլորն էլ գեղեցկադէմ, վայելչակազմ, ուժեղ ու բարձրահասակ էին: Գլխացաւ, փորացաւ, սրտացաւ, բկացաւ, ծաղիկ, կարմրուկ և ուրիշ բոլոր մեր տեսած ցաւերի անունը նրանք չէին լսած: Մարդիկը հիւանդ էին լինում միայն այն ժամանակ, երբ վիրաւորուած էին լինում դազանից կամ թշնամուց և կամ ծառից վայր ընկած: Նրանց կեանքը շատ երկար էր, շատ էին ապրում: Այնքան ապրում էին, որ շատ ապրելուց յոգնում էին: Զատ քիչ ապրողը՝ հարիւր տարի էր ապրում, բայց սովորաբար երկու-երեք հարիւր տարի էին ապրում ու միքանի անգամ ատամները փոխում, նոր ոյժ ստանում:

Ծերացած հայրը ունենում էր քսան, երեսուն զաւակ, երեք-չորս այգբան էլ թոռներ, մի այգբան էլ ծուռներ: Մի գերդաստանի, ընտանիքի մէջ մինչև երեք-չորս հարիւր հոգի էին լինում, բոլորն էլ իրար հնազանդ — ամենափոքրը՝ իրանից մեծին, և ամենքն ի միասին՝ մեծ հօրը:

Մեծ հայրը միւս բոլոր հայրերի գլխաւորն էր, գլուխն էր, և այդ պատճառով ասում էր հայրապետ, այսինքն հայրերի գլուխ, կամ նահապետ, որ միեւնոյն նշանակութիւնն ունի:

Գերդաստանի բոլոր անդամները մի յարկի, մի ծածկարանի տակ չէին մնում, այլ ջուր-ջուկ յարկերի ու ծածկոցների: Ամեն անգամ, երբոր մէկին պսակում էին՝ նրա համար առաջուց մի վրան էին գործում բրդէ կամ մազէ թիւից: Այսպէսով տարէց տարի շատանում էր վրանների թիւը: Վրաններն այն յարմարութիւններն ունէին, որ շարժական էին և ուր որ ուզում էին, տանում էին՝ ամա-

որ աւելի բարձր ու լեռնային տեղեր, ձմեռը՝ ցածր ու դաշտային: Քարաշէն տներ էլ ունէին, բայց հասարակ: Գրանք մի տեսակ ձմեռանոցներ էին, աւելի անասունների համար, քան թէ մարդկանց: Միայն մեծ նահապետն էր ունենում լաւ քարաշէն տուն:

Մեծ նահապետը որ վախճանւում էր, նրա մեծ որդիքը հեռանում էին միմեանցից և դառնում էին ջոկ-ջոկ նահապետներ: Նրանք երկիրն էլ էին բաժանում իրանց մէջ և ամեն մէկը մի ջոկ գաւառում էր բնակւում:

Իմ ասած ժամանակը նահապետներ շատ կային, բայց ամբողջ Արարատեան դաշտը, Երասխի ափերը, Արագածի արևմտեան ափերը, Գառնու և Հրազդան գետերի հովիտներն իրանց շրջակայ լեռներով մինահապետի ձեռքին էին, և այդ նահապետն էր մեր Արեւամանուկի հայրը:

Արեւամանուկի հօր անունն էր Արեւամանեակ, բայց նրա որդիքն ու թոռները դժուարանում էին ասել «Հայր-Արեւամանեակ», որովհետև շատ երկար էր, այդ պատճառով ասում էին՝ «Հայր-Մանեակ»: Արեւամանուկին էլ չէին ասում Արեւամանուկ, այլ «Արմիկ» կամ «Արամիկ»:

IV

Ահա այսպէս մեր սիրելի Արեւամանուկը Արեւամանեակ նահապետի որդին էր:

Գեռ եօթը տարեկան հասակում նրա թիկունքն ու կուրծքն այնքան լայն էին ու մէջքն այնքան բարակ, որից երևում էր, որ նա մի փոքր առիւծ էր, որի նմանին մեր հէքեաթներումը ասում են՝ «առիւծի ձագ», կորիւն առիւծի: Նրա աչքերը խոշոր-խոշոր և կրակոտ էին, երկայն թերթերունքները մինչև վարի կոպերն էին հասնում, գլխի մազերը խիտ ու երկայն:

Երբոր Արեւամանուկը ծնւում է, նրանից յետոյ նրա մայրը երկար ժամանակ երեխայ չէ բերում, այդ պատճառով նրան եօթը տարի շարունակ ծիծ է տալիս և ծծից չի կտրում: Ամբողջ օրը խաղում էր Արեւամանուկը, բայց հէնց որ ճաշելու ժամանակը գալիս էր, նա առաջ մի նախաճաշիկ էր անում մօր ծծովն ու յետոյ ճաշն ուտում, մէկ էլ ճաշելուց յետոյ էր վրայ ընկնում մօր ծծին ու բերանը քաղցրացնում. զիշերն էլ մօր ծոցումն էր քնում և ամեն գարթնելիս՝ ծիծը բերանն էր առնում:

— Բաւական է, որդի. էլ ինչ կայ, որ ինչ ծծես, ծծերս ցամաքել են, — ասում էր շատ անգամ մայրը, բայց էլի ծիծը դնում էր բերանը և գլուխը շփելով՝ քնացնում: Արեւամանուկը սիրում էր և կովի ծիծը ծծել:

Չատ անգամ, երբոր հարսները կովերը կթելիս էին լինում, նա անցնում էր միւս կողմը և կովի ծծերից մէկը բերանն առնում, ծծում: Հարսները քթին խփում էին, որ յետ քաշուի, բայց նա էլ ջգրու արձակում էր հորթի կապը, խփում էր կովին ու այսպիսով ինքը յաղթում էր հարսներին և ուղածի չափ ծծում: Պատահում էր, որ մինչև կովի կթելը՝ ինքը արդէն ցամաքեցրած էր լինում ծծերը և խեղճ հորթին էլ չէր լինում բաժին թողած: Գերակուրներից նա ամենից շատ սիրում էր իւզնու մեղրը: Իւզը նա կաթի պէս էր խմում, իսկ մեղրահացը գաթի պէս ձեռքն առնում, կծոտում:

էլ ինչ սսիլ կ'ուզէ ուրեմն, որ ով տարով կրմեծանայ, մեր Արեւամանուկը օրով էր մեծանում ու զօրանում: Գեռ տասը տարեկան հազիւ կըլինէր, այնպէս էր աճել, զարգացել, որ տեսնողը կարծում էր, թէ առնուազն տասներինգ կամ տասնըվեց տարեկան կըլինի: Բայց երբ նառաւ տասներհինգ տարեկան, արդէն մի կատարեալ չինարի ծառ էր ու էլ իւր հասակին վայել չէր համարում

իւր տարիքն ունեցող մանուկների հետ խաղալ, այլքսան-  
երեսուն տարեկանների հետ էր խաղում, նրանց հետ  
մըցում և ամեն տեսակ մարզմունքների մէջ էլ յաղթում  
էր ամենքին։

V.

Արմաւանի երեխայքը շատ ուշ էին սկսում տնային  
հոգսերին մասնակցել։ Մանուկները դառնում էին տասնը-  
հինգ-քսան տարեկան, բայց դեռ էլի համարում էին  
տղայ, այսինքն երեխայ։ Մինչև տասնըչորս-տասնըհինգ  
տարեկան դառնալը ոչ մի պարագմունք չէին ունենում,  
բացի ուտելուց ու խաղալուց։

Նրանց սկզբնական ուսումն ու կրթութիւնն էլ խաղն  
էր։ Եւ պէտք է ասենք, որ պակաս ուսում չէր և շատ էլ  
լաւ էր։ Լաւ էր նրանով, որ մեզ նման վաղօրօք չորս  
պատի մէջ չէին փակուում ու կորցնում իրանց առողջու-  
թիւնը. մէկ էլ նրանով որ նրանց խաղերն անմիտ ու անօ-  
գուտ խաղեր չէին։ Նրանք իրանց խաղերով աւելի լաւ  
էին պատրաստում իրանց ասպագայ գործունէութեանը,  
ասպագայ պարագմունքների համար, քան թէ հիմա մենք։

Նրանց հարկաւոր էր լինել ուժեղ, ճարպիկ, սրամիտ,  
հնարագէտ, առաքինի. պէտք է իմանային լաւ ձի հեծ-  
նել, լաւ վագել, լաւ լողալ, ծառերի վրայ մագլցել, պա-  
ռակների ու ժայռերի վրայ բարձրանալ, մեծ ոտիւննե-  
րով ցատկել, սուր ու նիզակ գործ ածել, վահանով պաշտ-  
պանուել, ուղիղ պարսատիկ ու նետ ձգել. պէտք է իմա-  
նային անասնապահութիւն, վար ու ցանք, փայտտաշու-  
թիւն, քարտաշութիւն, դարբնութիւն, և այս բոլորը  
այն ժամանակուայ երեխայքը սովորում էին խաղալով։

Նրանց զիշերուայ խաղերն ուրիշ էին, ցերեկուանը  
ուրիշ, ամառուանը ուրիշ, ձմեռուանը ուրիշ. ուրիշ էր  
տղերանց խաղը, ուրիշ էր աղջկերանցը։ Ամեն տեղի,  
ամեն գէպքի, ամեն ժամանակի յարմար խաղեր ունէին։

Խաղում էին ամենախիստ կարգապահութեամբ։

Եթէ խաղացողները լինում էին մինչև հարիւր հոգի,  
էլի այնպէս կարգով էին խաղում, որ ոչ մի անկարգու-  
թիւն չէր պատահում, և եթէ պատահում էլ էր երբեմն.  
մեղաւոր երեխային խկոյն հեռացնում էին իրանցից, որ  
մեծ պատիժ էր համարում։

Խաղերի մեծ մասը խմբով էին խաղում։ Առաջ եր-  
կուսին մայր էին նստեցնում, միւսները ձագեր դառնում։  
Ձագերը գոյգ էին դառնում և վիճակով ընկնում մէկը մէկ  
և միւսը՝ միւս մօրը։ Այսպիսով բոլոր խաղացողները դառ-  
նում էին երկու խումբ, ամեն մէկը իւր մօր հովանաւո-  
րութեան ու պաշտպանութեան տակ։ Մայրը իւր ձագերից  
ամեն մէկի պաշտօնն իրան հասկացնում էր, և նրանք  
պիտի կատարէին իրանց մօր պատուէրը ամենայն ճշտու-  
թեամբ և ճարպիկութեամբ։ Այս խաղերի մէջ շատ լաւ  
սովորում էին պաշտպանուելու և յարձակուելու կերպերը.  
սովորում էին շարքով կանգնել, շրջան կազմել, խմբուել,  
ցրուել, մէջք մէջքի տալ, վայր թափուել, չորեքթաթ վա-  
զել, ծեծի դիմանալ, հակառակ խմբի բոլոր շարժմունք-  
ները դիտել, նրա մտադրութիւնը նախագուշակել։

Այս խաղերի մասին էլ ես չեմ ուզում երկարացնել  
խօսքս։ Գուր ինքներդ, եթէ գիւղի երեխայք էք, կարող  
էք ասել, թէ ինչ տեսակ խաղեր դիտէք. միայն պէտք է  
գիտենաք, որ իմ ասած հին խաղերի կէսի կէսն էլ չկայ  
հիմա, և ինչ էլ որ կայ, այն ժամանակուայ եղածի ստուերն  
է և ոչ իսկականը։ Բայց ինչ որ լինեն, դրանք էլ են  
հարկաւոր և շատ բաւական են մեզ։

Մեր Արևամանուկը խաղալ շատ էր սիրում: Պառաւ-  
ներն ասում էին, որ նա մօր արգանդումն էլ խաղալիս է  
եղել, և սուտ չէին ասում: Բոլոր խաղերի մէջ նա այն-  
պէս շուտ ճարպիկացաւ, որ էլ ձագ չէր դառնում, այլ  
իրանից մեծերի վրայ էր մայր նստում, և ամեն երեխայ  
աշխատում էր, որ իրան վիճակուի, իրան ընկնի նրա ձագը  
դառնալ, նրա գօրեղ պաշտպանութեան տակը գտնուել:

VI

Ան այս աստիճան գօրացած էր մեր Արևամանուկը,  
երբոր սկսեց տաւար դնալ: Տաւարումն էլ երկու թէ երեք  
օր միայն փոքրութիւն արաւ. շուտով տաւարածապետ  
դառաւ, այսինքն տաւարածների գլխաւոր: Տաւարածա-  
պետ լինելը հեշտ բան չէ. նա պէտք է ամենից գօրեղը  
լինի և ամենից ճարպիկն ու սրտոտը:

Այնպէս է, նրա գործը հեշտ էր նրանով, որ պիտի  
նստէր սառն աղբիւրի մօտ, հով ու գով տեղերումը,  
և միւսներին հրամայէր, որ տաւարը մակաղից դուրս անեն,  
գոմէշները՝ ցեխերից. այս կողմը քշեն, այն կողմը տա-  
նեն, յետ տան, ժողովեն, ականեն. բայց և դժուար էր  
նրանով, որ եթէ տաւարներից մինը կորչէր, նա պիտի  
ման գար, գտնէր, գող ու գազանի ճանկերից փրկէր: Իսկ  
գազաններ այդ ժամանակ շատ ու շատ կային, հիմա այն-  
քան գայլ ու աղուէս չկայ, ինչքան որ այն ժամանակ  
քաւթառներ ու փալանգներ (վաղրներ) կային: Արևամա-  
նուկը միքանի շաբաթ շարունակ շատ լաւ պահեց տա-  
ւարը, այնպէս որ ոչ մէկի քիթը չարնեց, բայց ստած է՝  
«Տատն ամեն օր քաթայ չի թխի»:

Մէկ անգամ մի եղը կորցրեց. շատ ման եկաւ, վեր-  
ջը մի գոռոցի ձայն հասաւ ականջը: Մինչև ինքը ականջ

կրգնէր, որ տեսնէր՝ որտեղից է գալիս ձայնը, իւր քաջ  
շները, Խեղդանն ու Կտրանը, աւելի շուտ իմացան տեղը  
և նետի պէս թռան դէպի ձայնը: Գոռոցը հասարակ բա-  
ռաչ չէր. այդ ձայնը հանում են միայն գազանների ճանկն  
ընկած ժամանակը, և այդ գիտեն ինչպէս տաւարներն ու  
մարդիկը, նոյնպէս և շները:

Արևամանուկը ոչ մի գէնք չունէր, բացի մի հաստա-  
գլուխ մահակից: Մահակը ձեռին՝ վագեց շների յետևից  
և նրանց գտաւ մի ձորակի մէջ հաջելիս: Հեռուից նկա-  
տեց, որ մի գազան վայր է ձգել անագին եզանը, թան-  
թուլները դրել նրա մէջքին, իսկ գլուխը դէպի շները  
ծռած, այնպէս կատաղի կերպով նայում էր, որ աչքերից  
կրակ էր թափուում: Ձները հաջում էին հեռուից, պոչները  
ներս քաշած, և սիրտ չէին անում գազանին մօտենալ:

Արևամանուկն էլ շմտածեց, թէ ինչ պէտք է անէր.  
Նա սաստիկ բարկացաւ շների վրայ և գոռաց. «Խեղդան,  
խեղդիր, Կտրան, կտրիր», ու ինքը մի ճարպիկ ոստիւնով  
թռաւ ընկաւ գազանի մէջքի վրայ ու բռնեց նրա վզիցը:  
Այդ տեսնելով շները սիրտ առան ու բռնեցին գազանի  
յետքից: Գազանը բարկացաւ և ցատկեց տեղիցը. բայց  
նրանից պոկ չեկան ոչ Արևամանուկը և ոչ շները: Գա-  
զանն աւելի կատաղեց, երեսը շրջեց, բաց արաւ անագին  
ռեխը և ուզում էր Արևամանուկի գլուխը բռնել ու փռշ-  
րել. բայց սա իսկոյն ձեռքը ձգեց գազանի բերանն ու  
լեզուի տակիցը այնպէս պինդ բռնեց, քաշեց, որ գազանի  
թանթուլները թուլացան և նա սկսեց խախտացնել: Երբ  
գազանը խեղճացաւ, թուլացաւ, Արևամանուկը նրան իւր  
տակն առաւ, աջ ոտքը նոյնպէս կոխեց նրա բերանը և  
երկու ձեռքով քաշեց նրա լեզուիցը: Այդ միջոցին Խեղդանը  
բռնեց գազանի բկիցը, Կտրանն էլ փոքրատակերիցը: Այս-  
պէս միացած ուժով գազանին անշնչացրին, սատկեցրին:

Քափ ու քրտնքի մէջ կորած, յետ քաշուեց Արեւմանուկը և նոր տեսաւ, թէ ինչ վիշապ էր իւր սպանածը: Վագր էր, մի ահագին ու քաւթառ վագր, որ բոլոր շրջակայքի վրայ իշխում էր: Նրա երկիւղից ոչ ոք չէր համարձակուում տաւար կամ ոչխար տանել այն տեղերը, ուր որ տարել էր Արեւմանուկը: Ամբողջ զիւղերով աշխատում էին նրան սպանել, բայց չէին կարողանում:

Եզր վաղուց արդէն շունչը փչել էր: Անիրաւ դագանը մի հատ հարուածով կոտորել էր նրա մէջքի սեռը և մի ծուէն կաշի հանել:

Արեւմանուկը մաշկեց զագանն ու մորթին քաշ տալով՝ դնաց տուն: Նրա այս քաջագործութեան համբաւը շուտով տարածուեց ամեն տեղ: Տասնըհինգ տարեկան հասակում վագր խեղդել—հեշտ բան չէ: Բայց ով որ իմանում էր, թէ այդ քաջութիւնը Արեւմանուկն էր արել, չէր զարմանում, այլ ասում էր՝ նա կարող է առիւծի բերանն էլ ճղել մեն-մենակ, առանց շների օգնութեան:

Բառեր՝ գագաթ—вершина. երևայթ—явление. տաւարած—таулар արածացնող, պահող. արօտ—արածելու տեղ, հանդ, пастбище, выгонъ. հրեղէն—կրակէ, огненный. գրակել—привлекать. յափշտակել—плѣнять, восхищать. սրինգ—свирель. վրան—палатка, кибитка. վիթխարի—մեծ, ահագին, гигантский, исполинский. հսկայ—богатырь. դորախումբ—полкъ.

Գաւառ—уѣздъ. թոռ—внукъ. ծուռ—правнукъ. ձմերանոց—зимовникъ. մրցում—конкуренція. մարդմունք—упражнения. առաքինի—доблестный, добродѣтельный. մագլցել—лазить, карабкаться. պառակ—ոչխարների բակ, овчарня. ոսալւն—пѣлясы. ցատկել—прыгнуть. նիղակ—копье. վահան—щитъ. պարատիկ—праца. նետ—стрѣла. անասնապահութիւն—скотоводство. կարգապահութիւն—дисциплина. հովանաորութիւն—покровительство. պաշտպանութիւն—защита. պաշտօն—служба, должность. պա-

տուէր—приказъ. ճշտութիւն—точность. ճարպիկութիւն—ловкость. դիտել—наблюдать. նախագուշակել—предугадать.

Մակաղ—կաթաղ, ոչխարների պառկելու տեղը. փալանգ—վագր, тигръ. քաւթառ—тѣна. մահակ—դագանակ, дубина. թանթուկներ—թաթեր, лапы. ուխտ—пастъ. մէջքի սեռը—ողնաշարը. ծուէն—պոկուածք, կաշուի կամ մսի ծիւծիւ արած կտոր:

26. Մ Ա Ր Դ Ը Ե Ի Հ Ր Է Զ Ը

(Հ է ք ե ա թ)

Ա

<sup>x</sup> Չատ տարի առաջ՝ հին ժամանակը, Երբոր հրաշքներով լի էր աշխարհքը, Իւր ամուսինով և զաւակներով Ապրում էր մի մարդ իւր առուտուրով: Ուրախ ու զուարթ էր նրրա կեանքը, Պատճառ՝ միշտ ոսկով լի էր քսակը. Բայց յանկարծ բազրը երես դարձրեց, Եւ մեր խեղճ մարդը բոլորն կորցրեց՝ Ուրախ կեանք, և՛ փառք, և՛ հարստութիւն, Եւ նրրանց հետ էլ քաղցր առողջութիւն. Ընկաւ անկողին, խիտ հիւանդացաւ, Ոյժ և զօրութիւն նրանից հեռացաւ, 2էր կարողանում ռոխ վրայ կանգնել, Մինչև որ նրրան իւր կինը չօգնէր:

Գիժարդ-տարաբարդ նրրա խեղճ կինը Ստիպուեց կերակրել այժմ իւր տունը. Գիշեր ու ցերեկ պէտք է աշխատէր, Որ իւր որդիքը սովից ազատէր:

Ամիս ամսի վրայ այսպէս անցկացաւ,  
 Վերջապէս կինը խօսառ ձանձրացաւ.  
 «Ի՞նչ ես վայր ընկել, ասում էր մարդուն,  
 Գլխիս ցաւ դառել, խըլել ես իմ քուն,  
 Մինչև երբ պէտք է այսպէս շարշարունւմ,  
 Կհանքս մաշելով ես քեզ կերակուեմ.  
 Վեր կաց, մարդ ես, գնա՛, գլուխըդ քննի՛ն տուր,  
 Եւ որդոցդ համար ճարիր կերակուր»:  
 Պատասխան տուեց խեղճ հիւանդ մարդը.  
 — Բաւական է ինձ իմ գառը վիշտը.  
 Քանի ունէի, երբ բան խնայիցի.  
 Առողջ ժամանակ երբ ծոյլ մընացի.  
 Իսկ այժմ աղքատ եմ և մարմնով տրկար.  
 Խղճա՛, մի՛ տանջիր դու ինձ անդադար:  
 Բայց կինը երկար էլ չըհամբերեց  
 Եւ հիւանդ մարդուն տանից դուրս արեց.  
 «Գընա՛, ուր կ'ուզես, գըլխիցս հեռացիր.  
 Դու իմ խեղճ անձը լաւ շարշարեցիր.  
 Հիմա ինչքան էլ լաս ու աղաչես,  
 Էլ տուն չեմ թողնիլ, քանի աղքատ ես»:  
 — Լա՛ւ, ասաց մարդը ձայնով տրխրագին,  
 Կ'երթամ կրկորչեմ, ո՛վ դու անդուլթ կին,  
 Կըտոր հաց, գոնեա՛, տուր, հետքս առնեմ,  
 Որ ճանապարհին քաղցած չըմեռնեմ:

β

Կինը դուրս բերեց, տուեց երկու հաց.  
 Եւ մեր խեղճ մարդը հեռացաւ, գընաց,  
 Իւր չար բաղդիցը գանգատ անելով,  
 Թողեց իւր տունը անհաստատ քայլով:

Քնքն էլ չըգիտէր, թէ ուր էր գնում.  
 Միայն միշտ առաջ քայլում էր տըրտում.  
 Վերջը դադարելով՝ մի քարի վըրայ  
 Նըստեց, որ սակաւ մի հանգըստանայ:  
 Այնտեղ նըկատեց՝ որ ճանապարհին,  
 Նըրանից ոչ հեռու ընկած էր գետնին  
 Մի մազից հիւսած երկար սև պարան,  
 Որ նա վեր առաւ, ասելով այս բան.  
 «Սա ինքնըստինքեան մի չընչին բան է,  
 Բայց խեղճիս համար շատ թանկագին է»:  
 Այսպէս ասելով՝ պարանն փաթաթեց  
 Եւ իբրև թանկ բան ծոցումը պահեց:  
 Յետոյ, սակաւ ինչ հացով ու ջըրով  
 Իւր տրկար մարմնին զօրութիւն տալով,  
 Նորից վեր կացաւ, կամացուկ քայլով  
 Առաջ ընթացաւ նոյն ճանապարհով:

Այդպիսով անցաւ նա բաւական տեղ,  
 Մինչև որ հասաւ մի աղքատիկ գեղ,  
 Ուր անց կենալիս՝ տեսաւ շատ հաւեր:  
 Հաւերից մինը հանդարտ նըստած էր  
 Կիտած աղբի վըրայ ու ձու էր ածում.  
 Եւ մեր խեղճ մարդը գըրեց իւր մտքում,  
 Որ բռնէ նրան ու հետը տանէ,  
 Միքանի շահով քաղաքում ծախէ:  
 Ահա այդ մըտքով նա կամաց-կամաց,  
 Չու ածող հաւին ըզգոյշ մօտ գնաց,  
 Բայց հէկեց այն կողմը իւր ձեռքը մեկնեց՝  
 Վեր թռաւ հաւը և մէկ ձու թողեց:  
 Թողած ձուն իսկոյն վեր առաւ մարդը,  
 Դըրեց գըրպանը, օրհնեց իւր բաղդը:

—է՛հ, փանօք Աստուծոյ, ասաց ինքն իրան,  
Այս մէկ հաւի ձուն, սա էլ է մէկ բան:

Էլի առաջ գնաց մի կարճ ժամանակ,  
Վերջապէս տեսաւ մի փոքրիկ գետակ,  
Որ դուրս էր բըղխում մօտիկ անտառից,  
Մերթ հանգարտ գնալով, մերթ փրփրալից  
Յոգնած, վաստակած մեր մեղաւորը  
Չատ ուրախացաւ, երբ տեսաւ ջուրը.  
Իսկոյն մօտ գընաց, որ պարզ ցուրտ ջրով  
Փոքր ինչ հովանայ, մէջ լողանալով:  
Ջրի աւազոտ ափերի վըրայ,  
Նստոտած էին միքանի կրիայ.  
Մօտեցող մարդուն երբ նըրանք տեսան,  
Չտապով վազեցին, ջուրը թափուեցան:  
Միւսների նըման շուտ հասնել ջրին  
Չը յաջողեցաւ նըրանցից մէկին:  
Մարդը մօտ գնաց, վեր առաւ նըրան,  
Իւր գրպանի մէջ տըւեց բնակարան:  
Ինքն էլ լողացաւ, հագաւ շորերը,  
Եւ յետոյ գնաց դէպի անտառը,  
Որ շատ հեռու չէր, և մի ժամի մէջ  
Արդէն գընում էր խիտ անտառի մէջ:

❧

Ճատ գընաց, թէ քիչ, վերջապէս նըստեց  
Մի աղբիւրի մօտ և շատ մտածեց,  
Թէ ինչպէս անէ, որ իւր խղճալի,  
Անբաղդ գըլթիւնն ուղղէ մի կերպի:

Յանկարծ դըղըրդաց բոլոր անտառը,  
Թընդաց, որտաց հովիտ ու լեառը,  
Եւ հանդէպ լեռան սև ու մութ այրից  
Դուրս եկաւ մի հրէշ, որ հին դարերից  
Բնակուում էր այնտեղ և սպանում, լափում,  
Ով այրի մօտով անցնել չէր վախում...  
Ահա այդ հրէշը դուրս եկաւ այրից  
Եւ խեղճ մարդու վրայ գոռաց հեռուից.  
«Բարով քեզ, բարով, դու համեղ կտոր,  
Որին կ'ընդունէ իմ պատուական փոր.  
Արդէն կըլինի մի ամբողջ ամիս,  
Որ ես չեմ կերել մարդու անոյշ միս»:

—Այդ ինչ խօսքեր են, զարշելի՛ գազան...

Դու յանդըղնում ես ասել ինձ այդ բան.  
Ապա այդտեղ կաց և դու կըտեսնես,  
Ուր կըշրպըրտեմ մարմնիդ երկու կէս:  
Ասաց և անվախ մօտ գընաց հրէշին  
Եւ խիստ բարկացած նայեց երեսին:

«Ոչ որ մինչև այժմ—գոչեց գազանը—  
Չէ համարձակուել ասել այդ բանը  
Ինձ, որի ձեռքից գեռ մինչև այսօր  
Ազատ չէ մնացել ոչ մէկ մեղաւոր:  
Բայց որովհետև մեծ-մեծ բըրդում ես,  
Արի մեր ոյժը փորձենք դու և ես.  
Ե՛կ գօտեմարտենք, և ով որ յաղթուի,  
Թո՛ղ նա յաղթողին կերակուր լինի»:

—Թէպէտ այդ բանում ես քեզ կը յաղթեմ,  
Եւ մինչև վիզը գետին կըխըրեմ,

Բայց քեզ կարող եմ եւս աւելի  
Հասարակ կերպով յաղթել, գնորդելի:

«Լաւ, համաձայն եմ, ցոյց տուր շքանշանդ  
եւ իսկոյնս կեթ կատարիր խօսքըդ»:

— Ի՞նչ ես շտապում, ասաց նրան մարդը,  
Երեք բան կ'անեմ, թէ կ'անես հատը,  
ես այն ժամանակ քեզնից յաղթուած եմ,  
Իսկ եթէ չանես, գլուխըդ կըջարգեմ.  
Մէկ մազ ես հանեմ, մէկը դո՛ւ հանէ,  
Չափենք ու տեսնենք՝ ում մազն երկայն է-  
եւ ո՞վ աւելի երկայն մազ ունի,  
Թո՞ղ նա մեր մէջը յաղթողը լինի:

Թէ որ կարենաս ինձպէս չոր քարից  
Գոյն-գոյն ջուր քամել, դու յաղթել ես ինձ:

Եւ ում մարմնի վրայ մեծ միջատ լինի,  
Թո՞ղ որ նա միւսի գլուխը ջարդի:

«Լաւ», ասաց հրէշը ու մի մազ հանեց  
Եւ ուրախ-ուրախ մարդուն գէմ արեց:  
— Ա՞յդ է— ասաց սա— և հանեց ծոցից  
Գլտած պարանը հիւսած սև մազից:

Հրէշըն երբ տեսաւ հիւսած պարանը,  
Անից, զարմանքից բաց մնաց բերանը.  
Բայց իսկոյնս կեթ նորից սիրտ առաւ  
Եւ խիստ կատաղած մի քար վեր առաւ  
Ու երկու ձեռքով այնպէս պինդ սեղմեց,  
Ոչ աւազի պէս նըրան փըշըրտեց:

Մարդն էլ իւր կողմից մէկ քար վերցրեց  
Ու հրէշից ծածուկ գրպանից հանեց  
Հաւից խլած ձուն, և հէնց որ սեղմեց,  
Իսկոյն երկու գոյն հիւթը գուրս ծորեց:

«Այդ երկու փորձով— կանչեց հրէշը—  
Դու ինձ յաղթեցիր, ցոյց տուր ուրիշը»:

Մարդը գուրս հանեց գրպանից կրիան՝  
— Ահա միջատըս, սոսայ, գնորդ գազան,  
Յոյց տուր ինձ իսկոյն սրա հատը, տեսնեմ,  
Թէ չէ գլուխըդ երկու կէս կ'անեմ...  
Ո՛ւր ես փախչում, էյ. չէ, կայ, գնորդելի,  
Կայ, որ ընդունես մահ սարսափելի...  
Բայց լաւ իմացիր, ուր կ'ուզէ գընաս,  
Երբէք ինձանից չես մնալ անվիաս:

Գ

Իրաւ որ հրէշը, սաստիկ զարմացած  
Մարդու արարքից, իսկոյն փախաւ գնաց:

Սա էլ այն կ'ուզէր: Ուրախ մտաւ այրը,  
Անցաւ մի ծայրից մինչև միւս ծայրը.  
Տեսաւ լի արկղեր ոսկով, արծաթով,  
Գոյն-գոյն ակներով, մարգարիտներով.  
Սխռունների մէջ սիրուն ձիաներ  
Պատրաստ էին նրա տանել հարուստ բեռ:  
Նա էլ ժամանակ գուր չըկորցրեց,  
Գլտած գանձերը ձիերին բարձեց,

Գուրս եկաւ այրից, փառք տուեց Աստծուն  
Եւ պատրաստուում էր դառնալ դէպի տուն,  
Եբբ յանկարծ տեսաւ հեռուից հրէշին  
Վազելիս դէպ' այր, մի աղուէս ուսին:

Ն

Բայց թող դեռ պատմեմ, թէ ինչպէս եղաւ,  
Որ հրէշը յանկարծ կրկին յետ դառաւ:

Մարդուց փախչելով կարճ միջոցի մէջ,  
Հասաւ հեալով մինչ անտառի վերջ,  
Ուր մի կաղ աղուէս պատահեց նըրան  
Ու գլուխ տալով՝ ասաց նա այս բան.  
«Բարով քեզ, բարով, իշխան ահաւոր,  
Գու մեր անտառի հզօր թագաւոր.  
Բայց ինչի, ասա՛, այդպէս տըրտում ես,  
Խնդրում եմ վիշտըդ ծառայիդ յայտնես.  
Գուցէ կարող եմ մէկ բանով պէտք գալ  
Եւ քո տրտմութեան շուտով վախճան տալ»:

Հրէշն կարճ կերպով, մի քանի խօսքով  
Պատմեց աղուէսին, թէ ինչ փորձանքով  
Ստիպուած է փախչել, թողնել տուն ու տեղ,  
Յաղթուած մի մարդուց իրանից զօրեղ:

«Այդ ինչ եմ լսում, կանչեց աղուէսը.  
Թոյլ, անզօր մարդուց ո՞նց պիտ' քեզ պէտք  
Փախչի, վախենայ, թողնէ տունը, գնայ.  
Ասա՛. ինչ կ'ասէ, ով այդ իմանայ:  
Հաւատո՞ւ ինձ, տէր, նա քեզ խաբել է,  
Իւր հնարքներով աչքըդ կապել է.

Ե՛կ, դու ինձ լըսիր, իսկոյն յետ դարձիր,  
Ձեռք ընկած որսը գուր մի կորցընիր:  
Քանի դեռ ուշ չէ, շո՛ւտ արա, զընանք.  
Գիտեմ՝ պատուական ընթրիք կ'ունենանք.  
Չատ ցանկանում եմ մարդու միս ուտել,  
Պատճառ, այս ոտըս մարդիկ են կոտորել»:

Աղուէսի խօսքերն հրէշը լսելով՝  
Իսկոյն յետ դարձաւ, արագ քայլերով  
Վազեց դէպի այր: Բայց ճանապարհին  
Աղուէսն յետ մընաց ու խնդրեց հրէշին  
Որ յետ չթողնէ իւր կաղ ծառային՝  
Չատ ծանր բեռ չէ, շալակէ ուսին:  
Այսպէս շալակած—ինչպէս փոքր առաջ  
Արդէն ասացի—հրէշը քաշ-քաշ  
Եւ արագաքայլ դէպ' այրն էր վազում,  
Ուր մարդը կանգնած նրան էր սպասում:

Սա մէկ րոպէում իւր կտրուկ խելքով  
Արդէն որոշեց, թէ ինչ հնարքով  
Այս երկրորդ անգամ ազատուի հրէշից,  
Եւ այս պատճառով գոչեց հեռուից.  
—Ա՛յ դու խաբերայ, անպիտան աղուէս.  
Այսօր ինձանից անշուշտ մահ կ'առնես.  
Հաւանոցումըս քեզ որ բըռնեցի,  
Այն պայմանով միայն կեանքըդ խնայեցի,  
Որ գու ինձ համար երկու հրէշ բերես.  
Գու էլ խոստացար: Այժմ, սեւերես,  
Այսքան սպասեցի, միայն մէկն ես բերում.  
Դա առանց քեզ էլ ինձ էր պատկանում:

Հրէշըն երբ լսեց մարդու խօսքերը,  
 Բիզ-բիզ կանգնեցան նըրա մաղերը.  
 «Խորամանկ աղուէս, որոտաց, մեռիբ,  
 Դու միայն այն մտքով ինձ այստեղ բերիր,  
 Որ երկրորդ անգամ սրա ձեռը մատնես,  
 Որից մէկ անգամ հազիւ պըրծայ ես»:  
 Ասաց ու բռնեց աղուէսի ոտից  
 Եւ սաստիկ ուժով նետեց իրանից,  
 Իսկ ինքը փախաւ: Մարդը ազատուեց,  
 Ծունկ չորեց իսկոյն, Տիրոջ փառք տուեց.  
 Յետոյ վեր կացաւ այնպէս ուրախ-զուարթ,  
 Կարծես թէ երբէք չէր ցաւել մի մատ.  
 Բարձած ձիաններն գըտած զանձերով  
 Իրարու կապեց և ուրախ սըրտով  
 Հեծաւ ձիու վրայ ու կամաց-կամաց  
 Առաջ քըշիլով զէպի տուն գնաց:



## Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

ՆԿԱՐԵԳՐԵԿԱՆ ՅՅԳՈՒՐԾՆԵՐ ԵՒ ՆՐԱՆՑ ՀՄԵՊԸՏՏԵՍԻԱՆ  
 ՉԸՓԵՐԲԵՐԵԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

27. ԳԵՐՆԱՆ ՍԿԻԶԲԸ

Զատկից յետոյ Արարատեան նահանգում ով լինի, աչքին մի նոր բան կ'երևի. բոլորը ծառ ու տունկ է. կանաչները նոր դուրս եկած, ցնձին են տալիս այգիների ակերումը. ուռի ծառերը՝ բաց արած իրանց լեզուակ տերևները, դարնան մեղմ քամուց խշխշալով՝ իրար են դիպչում, հէնց իմանաս՝ իրար բարևում են. պտղատու ծառերն իրանց կարգին՝ որը կոկոնել է, կարծես շարած մարգարիտ լինի, որն էլ ծաղկել է եօթնասուն տարեկան ալետրի նման: Մանուշակն ու յասմիկը իրանց անուշ հոտերով քաղցը քուն են բերում այգու մէջ գրօսնողին. մանուշակը պղտիկ հարսի կամ համեստ աղջկայ նման գլուխը կախ է գցել, մտել է խոտերի տակը, որ մի գուցէ երևալը հպարտութիւն համարուի. իսկ յասմիկը, իւր թփի վրայից ճիթ-ճիթ կախ ընկած ու հոտով աշխարհքը լցրած, հէնց իմանաս թէ կանչում է անցկացողին, որ առանց իրան ու իր պարկեշտ քրոջը տեսութիւն գալու, չանց կենայ, չդնայ: Վարդն էլ ձմեռուան մերկութիւնից դուրս եկած՝ հազել է կանաչ-ատլաս շորեր և իւր ոսկէ կոճակի նման կոկոններովը լիմաց է տալիս. թէ ես ուղարկել եմ ինձանից առաջ իմ քոյր մանուշակին, որ ձեզ

ուրախացնէ, մինչև որ ես էլ կըգամ իմ մէկէլ ընկեր ծաղիկների հետ:

Այսպէս ամեն բան իրանց կարգին ընկած՝ մեծ ուրախութիւն էին բերում մարդու վրայ Կարմիր կիրակի օրուան առաջին շաբաթ օրը: Սարեակներն էլ՝ ծառի ճղներին կանգնած, կարմիր արեգակի դիմացը, հազար ու մի տեսակ ճլվլացնում էին ու իրանք ածում, իրանք պարում:

28. ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Քեզ ողջոյն գուարթուն,  
Առուզահասակ պարուն,  
Քեզ ողջոյն բիւր անբուն  
Տալիս է Հայոց Տուն:

Անուշաւանի սօսիք տերևով,  
Ծրտերն ծառից իրանց ճռուողով  
Օրհնում են գալըդ, երկնքի գեսպան,  
Գու ես մեր կեանքի պաշար ու պաշտպան:

Երբ հեղիկ մօտեցար Մասիսի սարերին,  
Բրածին ամպերը տարազիր գնացին.  
Հին լեռը բացեց իւր թաւոտ կուրծքը.  
Քեզ կանաչ դիպայ սփռեց հովիտը.  
Սիրահար սոխակը իւր վարդի յետքից  
Վազեց Արարատ՝ շինել իւր բունը...

29. Ս Ա Ր Գ Ն Ա Լ Ը

Երբ գարունը բացում է, հայ գիւղացիք սարն են տանում տաւարը: Աղբիւրների գլխին, ծաղիկների մէջ

վրաններ են տնկում և տաւարը ներս անում այս անմահական դրախտը: Առաւօտը, երբ անկողնիցդ վեր ես կենում, հազար սարի ծայրին ամպն ու ծուխը միմեանց հետ խառնուած՝ երկինք են բարձրանում ու ցօղը անձրևի հետ նստում է մաքդկանց շրերի ու երեսների վրայ: Կանաչ կլթի տաւարի հետ են՝ կաթն են ժողովում, իւղ ու պանիր շինում. տղամաքդիկ տաւարն արօտ են քշում, կամ բուրդն ու գործուածքը, իւզն ու պանիրն են տանում փողոց, ծախում, իբանց տան պակասութիւնը լրացնում:

Էլ ինչ ասել կ'ուզէ, որ հարս ու աղջիկ այստեղ կուշ ու ձիգ անելով չեն ման գալիս կամ երեսները կալնում, ինչպէս տանը: Այստեղ մէկ ընտանիքի պէս են և ում օրէն (վրանը) մտնես, ամենքն առողջ, ուրախ ու գուալթ են. այն օղի ու ջրի մէջ, այն ծաղկի ու կանաչի հոտն ու համն առնողի հողին ու գոյնը ինչ կըլինի աւա: Ելբ սարումը հիւր է պատահում, էլ շաբաթով ու ամսով չեն թողում, որ հեռանայ. աղբիւրների քաջոցը, ջրերի խըշխըջը, ծառերի սըլսըլոցը, թռչունների ծըվըլըլը, հովուի սրինգը, գառան, ոչխարի ու տաւարի բառաչը՝ այս բոլորը կարծես քեզ ասում են. «Գրախտ ես ուզում, այստեղ կ'աց, այսպէս կ'աց. սիրտդ անմեղ, միտքդ խտտակ»:

30. Գ Ա Ր Ո Ւ Ն

Ո՛հ, ինչ անուշ և ինչպէս գով  
Առաւօտուց փչես, հովիկ:  
Ծաղկանց վըրայ գուրգուրալով  
Եւ մազերուն կուսին փափկիկ.  
Բայց չես հովիկ իմ հայրենի,  
Գնա՛, անցիր սրտիցս հեռի:

Ո՛հ, ինչ աղու և սրտազին  
 Ծառոց մէջէն երզնս, թռչնիկ.  
 Սիրոյ ժամերն ի յանտառին  
 Զմայլեցան ի քո ձայնիկ.  
 Բայց չես թռչնիկ իմ հայրենի,  
 Գնա, երգէ սրտիցս հեռի:

Ո՛հ, ինչ մրմունջ հանես, վտակ  
 Ականակիտ և հանդարտիկ.  
 Քո հայելուդ մէջ անապակ  
 Նայեն զիրենք վազդն ու աղջիկ.  
 Բայց չես վտակ իմ հայրենի,  
 Գնա, հոսէ սրտիցս հեռի...:

31. Գ Ա Չ Տ Ո Ի Մ Ը

Ո՛րքան հիանալի է լայնատարած դաշտը. ինչ հրա-  
 շալի ընդարձակութիւն, ինչ բազմազիւմի տեսարաններ ես  
 նշմարում չորս կողմդ: Ահա հարուստ վարելահողերը—  
 արտերը՝ աշխատասէր գիւղացու քրտնքի վաստակով գանգ-  
 րաւորուած, տատանում են իրանց պտղալից հասկերը:  
 Յորենի, գարու, հաճարի, վուշի արտերը՝ օրօրուելով,  
 քաղցը ժպիտը երեսին, ողջունում են միմեանց. մեզմ գե-  
 փիւռը խաղում է նրանց վրայ և երկրագործը՝ կանգնած  
 մօտակայ բլրակի գլխին, գուարճանում է, տեսնելով իւր  
 արտերի հէրանց գնալը\*): Արեգակի ճառագայթները փող-  
 փողում են նրանց վրայ:

Բայց ահա մի մուլթ ստուեր երկչոտութեամբ սահեց

\*) Արտերի մեզմ և ալիքանման տատանումը քամու առաջ կոչւում է հէրանց գնալ:

արտերի երեսով. դա մի կտոր ամպ էր, որ զովարար  
 ողջոյն մատուցանելով արտերին, եկել էր իմանալու, թէ  
 արդեօք ծարաւ չէն նրանք և իրանց ծաղկած հասկերի  
 դատարկ պտղամանները լցնելու համար կարօտ չէն իւր  
 օգնութեանը: Գիւղացին ձեռքերը տարածեց. «Աստուած  
 իմ, դարձեալ մի առատ անձրև, և այնուհետև ես կարող  
 եմ անվրդով ննջել ցերեկուան տաժանելի աշխատանքից  
 յետոյ»: Աստուած լսեց բարի գիւղացու ջերմ աղաչանքը  
 և մեղմ անձրևը, երեկոյից մինչև սուաւօտ, ուռողեց ամ-  
 բողջ դաշտերը:

Գիւղացին ուրախացաւ. այժմ նա հաց կ'ունենայ իւր  
 ընտանիքի և դարման իւր անասունների համար: Այդ  
 անասուններն էլ շատ են հարկաւոր նրան: Գրանց կաթը  
 նա ուտում է, զըրանցով հերկում է երկիրը, մինչև անգամ  
 զըրանց աղբը գործ է դնում հողը պարարտացնելու հա-  
 մար: Վարուցանքի համար հիւթալի սեահող է հարկաւոր.  
 դատարկ աւազի կամ կաւի վրայ հացաբոյս չի բուսնիլ:  
 Կան այնպիսի տեղեր, ուր ի հնուց բոյսերի և կենդանի-  
 ների մնացորդների փտելուց սեահող է գոյացել—այդպիսի  
 տեղերում գիւղացին համարձակ սերմ է ձգում. բայց կան  
 և այնպիսի նիհար տափեր, ուր հարկաւոր է արուեստա-  
 կան կերպով հողը պարարտացնել՝ ամեն տեսակ անասուն-  
 ների աղբ ածելով, որովհետև աղբից սև հող է գոյանում:

32. Վ Ա Բ Գ Ի Ո Ս Տ

Աստ գու ինձ, ստորդ վարդի,  
 Ո՛ւր ես ծըլել, ս՛ւր ես ծաղկել,  
 Ո՛ր հովիտի կամ ս՛ր դաշտի  
 Զարդարանքն ես դու եղել:

Արդեօք եղել ես եղեմում,  
 Եւ ջրել է քեզ մայր եփրատ,  
 Կամ սնուցել է իւր ծոցում  
 Քեզ ծերունի սարն Արարատ:

Ո՞ր անգութի ձեռն է քաղել  
 Քեզ քո թըփից մայրենական,  
 Կամ ո՞ր անգութն է քեզ տնկել  
 Այս աշխարհում պանդխտական:

Կամ թէ այն թուփ, քո օթևան,  
 Թառամեցան քեզ համանման,  
 Թէ սոխակները քաղցրաձայն  
 Մխիթարում են միշտ նրան:

Բայց դու չունիս մըխիթարիչ,  
 Ո՛վ թագուհիդ ծաղիկների,  
 Զունիս դու քեզ սիրոյ երգիչ՝  
 Թառամում ես երկրիցդ հեռի:

33. ԱՆՏԱՌԸ ԵՒ ՆՐԱ ՕԳՈՒՄՆԵՐԸ

Մտնենք այս ընդարձակ անտառը. այստեղ մենք կը-  
 տեսնենք շատ ու բազմատեսակ ծառեր՝ հացի, բոխի,  
 թխկի, հաճարի, սօսի, լորենի, կաղնի կայլն: Մակաւ չեն  
 նաև վայրենի պտղատու ծառերը՝ տանձենին, խնձորենին,  
 զկոին, հոնին և ուրիշները: Անտառում բուսնում են նաև  
 շատ թփեր, բանջարեղէններ, խոտեր և անտառային ծա-  
 ղիկներ: Անտառից մարդս մեծամեծ օգուտներ է քաղում:  
 Բացի նրանից, որ այնտեղ աւաժում է նրա տաւաբը, որ  
 նա իւր վառելափայտն այնտեղից է ստանում, նա մի մեծ և

անփոխարինելի օգուտ ևս ունի. ծառերը մաքրում են օդը:  
 Բացի զրանից անտառն արգելում է ջրի շուտով ցամաքե-  
 լուն և օդի խոնաւութեան մէջ հաւասարակշռութիւն է  
 պահպանում:

Գարնանը, երբ ձիւները հալւում են, ջուրը բոյսերի  
 արմատների և մամուռի մէջ պահուելով, արագ չէ սահում,  
 այլ նրա մեծագոյն մասը մեղմ հալուելուց և դանդաղ ընթաց-  
 քից հողի տակ մտնելով՝ շուտով չէ շոգիանում: Թէ որ-  
 քան մեծ նշանակութիւն ունի անտառը, երևում է նրա-  
 նից, որ երբ որևէ լեռան վրայից անտառն անխնայ կըտ-  
 րատում են, ամբողջ պտղաբեր նահանգներ մերկ անա-  
 պատ են դառնում. օդը զրկւում է իւր նախկին փափ-  
 կութիւնից, իսկ ձիւնից և անձրևներից գոյացած հեղեղ-  
 ները կատաղաբար ծածկում ու աւերում են դաշտերը: Ան-  
 տառների անհաշիւ կտրատելուց մեր երկրի շատ արգա-  
 ւանդ սարեր և զլախտանման դաշտեր կորցրել են լճանց  
 նախկին գեղեցկութիւնն ու փարթամութիւնը և ամայի  
 անապատի ձև են ստացել:

34. \* \*

Երբօր ճնշում է քո սիրտը մի վիշտ,  
 Մի վիշտ հոգեմաշ, ծանրը և յամառ,  
 Ապա մարդկանցից խուսափի՛ր դու միշտ,  
 Ուղղի՛ր քո գնացքը դէպի մուլթ անտառ,

Անտառն ու ժայռերն էլ են ընդունակ  
 Նոյնպէս բառերով վիշտ արտայայտել.  
 Զէ որ շատ անգամ մըրրիկն ու կայծակ  
 Նրանց կուրծքն ու սիրտն են պատառոտել:

Նրբանք մարդկանց պէս չեն խօսիլ քեզ հետ,  
 Որ լոկ խօսքերով տան մխիթարանք.  
 Այլ ցաւակցելով՝ քո գանգատներին  
 Չայնակից կըլինի նրբանց արձագանք:

35. Ե Ր Ա Չ Տ

Գարունը քանի գնաց, տաքացաւ. մայիսի կիսին կ'ա-  
 սէիր օգոստոս ամիսը լինէր... Այն այգիները, որոնք մի  
 քիչ ջրբոցիտ են, էլի կանաչի ծեղ երևում է նրանց մէջ.  
 Իսկ ինչ ներքի այգիների դուրսիցն է, Աստուած հեռու  
 տանի, — կ'ասես թէ ամայի անապատ լինին. կանաչ տեղ  
 երազումդ չես տեսնիլ: Աշտարակի որ փողոցովն անց  
 ես կենում, ամենի բերանիցն էլ լսում ես, թէ այս տարի  
 մենք ունեցած չունեցածներս պիտի վաճառենք, եթէ մի  
 քանի օր էլ այսպէս գնայ: «Աստուած մեր մեղքը մեր  
 երեսովն է տալիս. չորային լինելը բաւական չէ, թըր-  
 թուրն էլ մի կողմիցն է ծառերը սունգ անում (փշացնում).  
 Խնձորենիքը, ծիրանիքն ու շորենիքը կ'ասես թէ մի-մի  
 քրդի տաղաւար լինին, այնպէս են բռնուել թրթուրի ձե-  
 ուիցը: Տնաշէններ, մեր քրիստոնէութիւնը վերացել է, հա-  
 ւատներս բոլորովին պակասել. ամենայն տարի այս ժա-  
 մանակ սուրբ Գէորդի մասունքը երկու անգամ բերած  
 էինք լինում, այս տարի սուրբն էլ ենք մտքից գցել, Աս-  
 տուածն էլ հետը: Այս մեր կոտորուած երեխայքն էլ նու-  
 րին գոնէ չեն ման ածում, որ գուցէ Աստուծու սիրտը  
 քաղցրանայ, մի լոյս ու ճար անի մեզ»:

Այսպէս խօսում էին իրար հետ միքանի մարդ, ճան-  
 ճապանենց դռանը կանգնած, երբոր Գարեգինը շտապե-  
 լով անց էր կենում այնտեղից: «Գանգնիր, կանգնիր, կան-  
 չեց նրանցից մինը. Գարեգին վարժապետ, ախար այս

ինչ պատուհաս է. գրի սե ու սպիտակը դուր էք հասկա-  
 նում. ինչ է ասում գիրն այս տարուան համար՝ անձրև  
 պիտի գայ, թէ չէ՝ ձեռքներս լուանանք, յոյսներս կտրենք,  
 յետ նստենք»:

— «Իհարկէ չի գալ, ասաց Գարեգինը, մի տեղ որ  
 ջերմեռանդութիւն չլինի, սուրբերի պատիւը վերանայ,  
 Աստուածը մոռացուի, թափօր չլինի, այնտեղից Աստուած  
 չի հեռանալ: Վաղը ականջներդ ձէնի (ձայնի) պահեցէք,  
 պատրաստ կացէք, առաւօտեան գանգակի ձայնը որ լսէք,  
 դուրս եկէք, որ սուրբ Գէորդի մասունքը պէտք է բերենք.  
 գուցէ մի փարատութիւն ընկնի»:

Միւս օրը՝ արևը մի փոքր բարձրանալուց յետոյ,  
 գանգակները քաշեցին: Տիրացուները հազան ժամաշա-  
 պիկները. որը քշոցը վեր առաւ, որը խաչվառը, որն էլ  
 մոմերը բռնած՝ առաջ ընկան: Գարեգինն էլ՝ նրանց կար-  
 դի գցելուց յետոյ, շարականը խտրտեց, տարաւ. տէր-  
 տէրներն էլ շուրջառները ժամհարի կոնատակը տուած՝  
 գնացին դէպի Մողոնու ուխտատեղին:

Ժողովուրդն էլ՝ մեծ ու փոքր, մայր ու մանուկ, բո-  
 լորը տէրտէրների յետևից մասունքի առաջը դուրս եկան:  
 Վանահայր վարդապետը, երբոր ժողովրդի կամքն իմա-  
 ցաւ, փառաւորուի ինքը, իսկոյն պատրաստուեց, գնաց  
 ժամի դռները բաց արեց, մասունքները խորանից հանեց,  
 տէրտէրների հետ ինքն էլ շուրջառաւորուած, ամենքը  
 մի-մի մասունք վեր կայած, շարական ասելով, խաչ ու  
 խաչվառով, մեծ հանդէսով եկան դէպի Աշտարակ: Հէնց  
 որ դիւղին մօտեցան, ջերմեռանդ ժողովուրդը, որ այդ-  
 տեղ սպասում էր, գլուխները բաց, արտասուքն աչքներին,  
 թափուեցան առաջը: Կանայք ու մարդիկ, ձեռները եր-  
 կինք բարձրացրած, աղաղակում էին. «Ո՛վ սուրբ Գէորդ,  
 քո զօրութիւնին մատաղ, մեր տէրն ու պահպանը դու

ես, այս տաք ջրին մի հով ջուր ածան, մեր լաց ու աղա-  
ղակը լսիր, մեր երեսաներին խղճան: Այնուհետև հոգևո-  
րական դասը, բոլոր ժողովրդի հետ՝ գիւղի շորս կողմը  
Թափօր տալուց յետոյ, սուրբ Գէորգի աջը տարան եկե-  
ղեցի և սեղանի վրայ բազմեցրին:

Երեք օր սուրբ Գէորգը մնաց Աշտարակ: Երեք օրից  
յետոյ՝ սուրբ Գէորգի մասունքը ինչ հանդէսով որ բերել  
էին, նոյն հանդէսով յետ տարան:

Այն իրիկունը, երբ սուրբ Գէորգի մասունքը տարան,  
մի փոքրիկ ամպ Արագածի գագաթից վեր կացաւ, դէպի  
Մասիսը գնաց: Ամպը քիչ-քիչ շատացաւ, երկնքի երեսը  
թղպեց ու կէս ժամից յետոյ մի այնպիսի անձրև եկաւ,  
որ աշխարհ շինեց ցեխ ու քաթլախ. երեք օր միմեանց  
վրայ չկտրուեց անձրևը. այգիներն էլ կշտացան, տաւաքի  
արօտն էլ լաւացաւ, քարքարուտ տեղերն անգամ մէկ թիզ  
կանաչեցան, բոխն էլ դուրս եկաւ, արտերն էլ իրանց  
կարգին յառաջ եկան: Թըթուրը հօ՛ այնպէս փչացաւ, որ  
նշանն էլ չէիր գտնիլ: Ամեն մարդու բերանից փառք ու  
շնորհակալութիւն էր լինում Աստուծուն. ամենքն ուրախ  
էին, ամենքի սիրտը տեղն էր ընկել:

36. Ե՛կ, ԳԱՐՆԱՆ ԱՆՁՐԵՒ...

Ե՛կ, գարնան անձրև, Թափուի՛ր յորդառատ  
Ցրրտացած երկրի սառ կըրծքի վրայ.  
Թո՛ղ նորից երկիրն շունչ քաշէ ազատ,  
Թո՛ղ նըրա կըրծքին ջերմ կեանքը եռայ:

Երկա՛ր նա տանջուեց դառնաշունչ ձմրան  
Ցուրտ կապանքներում, քեզ ըստասելով.  
Նա շատ համբերեց, կենսատու գարնան  
Քաղցր կարօտը ջերմ փայփայելով:

Թափուի՛ր, այ անձրև, ինչպէս մարգարիտ,  
Ինչպէս երկնառաք ցօղը կենսաբեր.  
Ոռոգի՛ր դաշտեր, անտառ ու հովիտ,  
Կանաչով պատի՛ր լեռներ ու ձորեր:

Թո՛ղ յորդանալով աղբիւր ու գետակ,  
Մառցէ շրղթաներ անահ խորտակեն,  
Գուրս գան ավերից, վաղեն համարձակ,  
Ազատ խոխոջան, ազատ կարկաջեն:

Թո՛ղ քեզ լոյս-արև ժրպտայ սիրավառ,  
Եւ որպէս երկնից հաշտութեան նըշան՝  
Քո կաթիլներում փայլուն ու պայծառ  
Նա սիրով կապէ կարմիր ծիածան...

Ե՛կ, գարնան անձրև, Թափուի՛ր յորդառատ  
Ցրրտացած երկրի սառ կըրծքի վրայ.  
Թո՛ղ նորից երկիրն շունչ քաշէ ազատ,  
Թո՛ղ նըրա կըրծքին ջերմ կեանքը եռայ:

37. Ա Մ Պ

Յուլիսի տօթային օրերից մէկն էր: Արեգակը անխնայ  
կերպով այրում էր: Հրաբորբոք օրը անտաննիլի էր: Ամեն  
առարկայի վրայ տիրում էր թմրութիւն և տաղալուծիւն:  
Թռչունները լռել էին. ծառերը ցած էին թողել իրանց  
ոստերը. թառամել էին սիրուն խոտերը և կպել էին գետ-  
նին: Այլևս լսելի չէր լինում դաշտային ծաղիկների ու-  
րախ շշուկը. նրանք խոնարհեցրել էին իրանց դուխնե-  
րը և կամաց-կամաց մեռնում էին ծարաւից: Կովերը, ձի-  
երը, այծերը հազիւ հազ շարժւում էին: Չորս կողմում  
ամեն ինչ լուռ էր, ոչ մի ձայն չէր լսուում...

Մի կողմում, օդի ջերմութեամբ լցուած տարածութեան վրայ, երևում էին խրճիթներ. այնտեղ մարդիկ տըխրութեամբ նայում էին դէպի ժլատ երկինքը, որ նրանց անձրև չէր տալիս: Այդ սպաւոր գիւղերի մէջ այլևս չեն լուում ո՛չ ծիծաղ, ո՛չ կատակներ և ոչ ուրախ երգեր: Մինչև անգամ երեխաները, թուլացած օրուայ տապից, մոռացել էին իրանց խաղը, սուս էին կացել և թափուել էին մարագներում...

Երաշտութիւնը սարսափելի դժբաղդութիւն է շինականի համար, որ ապրում է միայն դաշտային դառն աշխատանքով: Երաշտութիւն— դա մի դանդաղ մահ է հազարաւորների համար, մահ աղետալի և սովատանջ: Նա աղքատացնում է մինչև անգամ նրանց, որոնց մօտ փոքրի շատէ պահպանուել է ուտեստի հին պաշարից... Զինականները հասկանում են այդ և տրտմութեամբ են նայում երկնքին:

Ամբողջ երկու ամիս նրանք ողորմութեան են սպասում երկնքից, — բայց դեռ ոչ մի կաթիլ անձրև չկայ... Այրուեց խտր. այրուեցան անտառները. նիհարացան, լղարեցին տաւարները: Մարդիկ յուսահատուած թափառում են որպէս ուրուականներ...

Արդէն մի քանի անգամ բարի քահանան սուրբ մատուցներ, խաշ ու պատկեր իւր հետ առնելով՝ հանդատան կատարեց անտառների և դաշտերի շուրջը, Աստուծուց անձրև խնդրելով: Զինականների ջերմեռանդ բազմութիւնը հաստատ հաւատով և արտասուռախառն աղօթքներով շրջապատել էր նրան: Զօրաւոր է հաւատը այդ խեղճ ու համբերող մարդկանց մէջ:

Ահա բաց կապտագոյն երկնքի վրայ երևաց ամպէ մի փոքրիկ թափանցիկ պատառ: Նա նմանում է մի սպիտակ թաշկինակի, որ հագիւ է նշմարւում: Նա կամաց

լողում է, կարծես վախենալիս լինի... Տառապեալ շինականները տեսան նրան և նրանց վշտալի սրտերում ծագեց յոյսի մի պայծառ նշոյլ... Մօտ է փրկութիւնը սովատանջ մահից... Բայց փոքրիկ է ամպիկը, դուցէ մի ըսպէից յետոյ կորչի երկնքի անսահման կապուտակութեան մէջ... Ո՛չ, նա չի դաւաճանիլ. նա կըցօղէ երկիրը բարբեր անձրևով:

Սպիտակ ամպիկը մեղմ սիրով նայում է անբաղդ գիւղերի վրայ, տխուր խրճիթների վրայ, և հետզհետէ աճում է, հաւաքում է իւր ուժերը, որ փրկէ սովատանջներին:

— Իզուր ես աշխատում, փաղաքշելով ասում է նրան արեգակի կիզող ճառագայթը. թող նրանք տանջուեն, դու ինչո՞ւ ես հոգ տանում նրանց կեանքի համար: Գու կանգնած բարձրում, փայլում ես ռսկու մէջ, իսկ նրանք այնտեղ, ներքևում, թաւալում են փոշիների մէջ: Քեզ ինչ պէտք են նրանք: Գու կ'ոչնչանաս, կրմեռնես, նրանց աղատելով: Մի՞թէ աւելի լաւ չէ քեզ համար՝ լողալ երկնքի կապուտակութեան մէջ, խաղալ մեզ հետ, սլանալ հոգմերի թևերի վրայ և զուարճանալ կեանքով:

Իսկ սպիտակ ամպիկը դէմքը խոժոռեց և դժգոհութեամբ երեսը շուռ տուեց արեգակի ուրախ ճառագայթներին: Նա սկսեց աճել և միջին գոյն ստանալ: Վերջապէս բոլորովին ծածկեց արեգակի շողշողուն ճառագայթները և ականջ չղրեց նրանց ձանձրալի խրատին՝ թէ կրմեռնես կ'ոչնչանաս... Ինչո՞ւ ես դու հոգ տանում ուրիշների համար, մտածիր միայն քո մասին... ապրիր միայն քեզ համար...

Ամպը ականջ չղրեց իւր օղային բարեկամներին և շուտով այնքան աճեց, որ դարձաւ ահագին սև մէզ, որ սիրալիր կերպով ցած էր իջնում թշուառացած դաշտերի և տխուր ծառերի վրայ: Լսելի եղաւ խուլ զղբգիւն, որ

հետզհետէ սաստկանալով, սկսեց որոտման մի հարցուածք միւսի ետեից աւելի բարձրաձայն տարածել նիհար անտառների, հեռաւոր լեռների մէջ և, օձի նման գալարուելով, նշմարուեց կայծակը... մի անգամ ևս, մի անգամ ևս... Տեղաց առատ զովացուցիչ անձրև: Երկար հեղուում էր նա, ոռոգելով ամեն մի արմատը տոշորուած խոտերի, տխուր խնձորենու, համբերատար ընկուղենու, սգաւոր ուռենու, և նրանք ազահուլթեամբ ծծում էին նրա զովացուցիչ կաթիլները... Ծառերն սկսեցին ազատ շունչ առնել. խոտերը կանաչ գոյն ստացան. ծաղիկները վեր բարձրացրին իրանց գլխիկները. թռչուններն սկսեցին ծղվլալ. երեխաները դուրս թափուեցան դէպի փողոցները և սկսեցին վազող վտակներից լճակներ կազմել: Կեանք ստացան գիւղերն ու դաշտերը:

Ամպը, կատարելով իւր բարի գործերը, ճշմարիտ է, մեռաւ, ցած թափուելով փրկարար անձրևի ձևով, բայց նա մեռաւ հաճելի մահով: Նրա կեանքն սպառուում էր ժպտալով, երբ նայում էր զուարթացած ծառերին, սլայծառ խոտաբոյսերին, ուրախ ծաղիկներին: Եւ նա, կորչելով երկնքի ընդարձակ տարածութեան վրայ, զգում էր, որ մեռնում է ոչ առանց օգուտ բերելու. կանանչ խոտը, յարութիւն առած բնութիւնը, շինականների ուրախ դէմքերը — նրա գործերն էին:

Այնուհետև ամպը բարակ շերտով սկսեց առաջ լողալ. թռչունների ուրախ ձայները, ծաղիկների ու դաշտային խոտաբոյսների սօսափման անուշ մեղեդին առաջնորդում էին նրան, մինչև նա աննկատելի կերպով անհետացաւ երկնքի անսահման կապուտակութեան մէջ: Նա կորաւ այնտեղ, վերևում, իսկ կաթիլների ձևով սկսեց ապրել այստեղ, ներքևում, ամեն մի թուփի, բոյսի, ամեն մի փոքրիկ կենդանու մէջ...

38. Ա Մ Պ Ե Ր

Հայոց երկնքով ամպեր են վազում  
Խիստ քամու ձեռից.

Սև-սև ամպերը սարերի նման  
Անցնում արտերից:

«Կացէք, այ ամպեր, ինչո՞ւ էք փախչում,  
Անձրև չէք թափում.

Մեր ծարաւ արտեր օրեր են համբում  
Ու ձեզ սպասում:

Քամի, դու քամի, խղճա՛ արտերին,  
Թո՛ղ այդ ամպերին,

Կանգնեն ու թափեն անձրևի շիթեր,  
Ջրեն մեր արտեր:

Քամին հանդարտեց, մեղմ անձրև թափուեց,  
Արտերը ջրեց.

Արտը բարձրացաւ, ցօղուն արձակեց  
Ու հասկեր բռնեց:

Գիւղացին գնաց, տեսաւ ու խնդաց,  
Խնդաց ու սաց.

«Փնօք Քեզ, ո՞վ Աստուած, որ տուիր մեզ հաց,  
Չենք մնալ քաղցած»:

39. ԱՄԱՌՆ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Ա

Ճաշուայ շոգն անց էր կացել: Մար ու ձոր գլուխները նորից բարձրացրել էին, որ փոքր շունչ առնեն: Արեգակը Մասիսի քամակիցը աչքը հանդարտ բաց էր արել,

մունջ-մունջ Երեւանու բերդին էր մտիկ տալիս և ուզում էր, որ կամաց-կամաց մայր-մտնի:

Թանձր խաւաչը, սև մառախուղը եկել, բոլոր դաշտերի, ձորերի երեսը բռնել, օդը ծանրացրել էր:

Թռչունը տեղիցը չէր ուզում շարժուել, հաւը բնիցը գլուխը հանել: Ամեն տեղից ոտքը խաղաղուել, ամեն տեղից ձայն ու ձոր լուել, պապանձուել էր:

Ջուր ջրոզը առուի վրայ էր թեք ընկել, քնած մնացել, վարուցանք անողը՝ հանդումը, այդեպանը իւր ծառի տակին՝ շուաքումը քուն մտել, հանգստացել: Մարդ, կին, մանուկ գիւղերումն էլ չէին երևում:

Հօտաղներն իրանց գութանի լծկանը բաց էին թողել, լուծը յետ արել ու մէկ ստուերի տակ գութանը մէկ կողմը, եզները միւս, ջրերի ափին վէրէին թափուել, քաղցը քուն մտել: Նախիրը մէկ դաշտում, ոչխարի հօտը միւս, շուաք տեղը նստել, ծնօտ ծնօտի էին քսում, վրնչացնում, արոճ անում: Հովիւն էլ, գլուխը մէկ քարի վրայ դրած, նդդել, աչքը կպցրել էր, որ շոգը քաշուի թէ չէ՝ վեր կենայ, հօտը իրիկնահովին մէկ լաւ խոտաւէտ տեղ տանի, արածացնի:

Արթուն շների մէկը այս ցցի վրայ, մէկը միւս բլրի ծայրին, կամ հովուի ոտի տակին՝ գլուխը դէլ, նօթերը կիտել, մարդ է մտել, որ թէ գոգ, գայլ, գազան սիրտ անեն, մօտենան, մէկէնիմէկ վրայ թռչի, պատառ-պատառ անի, իւր տիրոջ ոչխարները պահի: Մէկ կանաչ խոտ, մէկ դալար թուփ կամ մէկ ծաղիկ ո՛չ մէկ տեղ չէր երևում, որ մարդ հոտն առնի, կամ երեսին մտիկ տայ, սիրտը բացուի ու իւր ճանապարհի երկարութիւնը մոռանայ... այսպէս էր սար ու ձոր, դաշտ ու հանդ չորացել, խանձուել, պապանձուել: Միմիայն խոտերի ցօգուններն ու թփերի սոււ-սուր ծայրերն էին այստեղ-

այնտեղ ցից-ցից գլուխնին բարձրացրել, տխուր, տըրտում, մորթուած, պաշարուած կանգնել, մնացել:

Սև-սև գիշակեր ազնուները կամ վախուկ տուլաշներն էին հէնց մենակ մնացել, որ այստեղ, մէկ քարափի ծայրի, մէկ բուրջի գլխի, կամ թէ չէ՝ ճանապարհի միջում իրար գլխի հաւաքուել, նստոտել, կամ պտոյտ էին գալիս, իրար կացահարում, իրար թևերից քաշում, որ մէկի գտած որսը ձեռիցը խլեն, բաժին անեն:

Օձ, կարիճ, մողէս, բզէզ ու ինչ կերպ գազան սսես՝ մորեխ, մծեղ, հանդէս էին բաց արել. որը մէկ թփի տակից, որը մէկ քարափի գլխից, որը խոտերի միջին՝ կամաց-կամաց ժած գալով, պոչ ու գլուխ իրանց քաշելով. կամ ծլունդ լինելով, էլ յետ սուս անելով, կամ գետնի, ապառաժի վրայ սողալով, փշտացնելով, շուաքնելով, փրշացնելով, ծվվալով, ծղրտալով, ոտն էին ելել, ուզում էին իրանց արևի ձէնն ածեն, որն էլ իւր բնի առաջին արևակող անելով, գլխները հանել, մունջ-մունջ ականջ էին դրել, սուր-սուր աչքները ցցել, պելացել, շլացել, այս կամ այն կողմն էին մտիկ տալիս, որ ոտքը խաղաղուելիս՝ դուրս գան, միքիչ շունչ քաշեն, իրանց կերը ճանկեն, էլ յետ իրանց բունը մտնեն, էլ յետ գնան քնեն, հանգստանան:

Բագի պատածակի արանքից կամ քարի ծայրից էլ մէկ անճար բու, գլուխը վէր թողած, քիթ ու պոռնկ կիտած, ծանրացած, գետնին էր նայում, իւր սև օրը ողբում: Հաւի թշնամի ուրուրն էլ՝ թևերը փռած, ճանկերը սրելով, բացուխուփ անելով, կտուցը սրբելով կամ կուրծքը քըջըջելով, երկնքի երեսին, գլուխը կրծքի տակին քաշ գցած, սուր աչքերն այս կողմն այն կողմն էր գցում, պտըտում, պատրաստում, որ մէկէնիմէկ, ական թօթափել, վայր վազի հաւի լխպոր ճուտերի գլխին, որոնք մօր

թեքերի տակին կամ մօր գլուխը քորելով, թեք քաշելով, ծվծվալով, կտկտալով, կամ կտուց կոյի տալով, մօր կռքսալուն, ծվվալուն ականջ դնելով, սուսուփուս նրստում էին իրար հետ կամ քշուջ էին անում...

Բ

Այսպէս մեռել-լուել էր բնութիւնը ու ոչ մէկ շփուրթու մէկ տեղից չէր լուում: Միմշայն հեռու տեղից մէկ բարակ քամի եղբեն-եղբեն փչում, ծառի տեղեկները սըլ-սըլայցնում, ժամ էր գցում ու գոլ-գոլ մարդի երեսին, բերնին քնքուշ ձեռը քսում, շուտով անց կենում ու փշերի, խոտերի, քարափնների, ձորերի մէջը մտնում:

Ինչպէս ծխի մէջ խրուած՝ հեռու տեղից դաշտի գիւղերը, հանդերը, փոսերը մթնած, լուած, ինչպէս սև ամպի կտորներ կամ այրուած, խանձուած տեղեր, այտտեղից այնտեղից սեխն էին տալիս ու խառնիխուն երևում:

Արաքսը, ինչպէս մէկ նետ օձ կամ աքժաթի գօտի, արևմտեան կողմը, ձորերի միջիցը իւր սուր, լուսափայլ ճակատն ու գլուխը բաց էր արել ու մրմունջ, լուռ, հանդարտ գալիս՝ Մասիսի փեշին միջիչ խփում, շփում էր ու էլի խեթ-խեթ նայելով, նշան սպսանալիք տալով, ձէնը ձոր անելով, գլուխը պտշտելով, գնում, Զանգու ու Գառնի գետերը իւր ծոցն առնում և, խաղալով, խայտալով, վշվշալով՝ հեռանում քոյրերի հետ ու պուռնկ պուռնկի, լանջ լանջի, քամակ քամակի տուած, իրար գլխի, երեսի ձեռ քսելով, փաղաքշելով, հանար անելով, աչքերը խփում, նղղում ու ձաշուրի տափարակ ծոցումը ծեծում, ջարդուած քուն մտնում:

Այս տխուր հրապարակի շորերը շուրջը՝ աչքդ որ բաց չես անում, մէկ էլ ես տեսնում, որ երբեմն երկինքն ամ-

պակալած՝ ուզում է որ սար ու ձոր ոսնատակ տայ, Արագածի, Մասիսի ու միւս սարերի գլխին բամբաշի, գետին խցկի, որ համարձակում են իրանց զագաթն այնպէս բարձր վեր քաշել, որ բոլոր ամպերը վերևը ոտը բռնելու տեղ շունենալով, իրանց երկինք մօրիցը խոտված, վէր են գալիս ու նրանց գլխին քուլայ-քուլայ դիզում ու այնպէս իրար վրայ նստում, որ շատը, տեղ շունենալով, միւսներին քովն է տալիս, բոթբոթում, դուրս է գցում ու նրանց տեղը բռնում:

Այս հատուածի մէջ եղած օտար բառերի տեղը քուն հայերէն բառեր դրէք:

40. Բ Ո Մ Տ Ա Ն 2 Ի

Ամառն է: Կարծես կրակ է բարձրանում  
Գետնի երեսից և հուրհրատում.  
Ո՛չ շունն է հաջում, ո՛չ ձրձին երգում.  
Գորտն էլ է լուել, էլ չէ կրկում:

Ամենքն էլ փախել՝ հով տեղ են գտել,  
Իրանց բներում լուուել, պապանձուել.  
Միայն մի հատիկ մարդ է երևում  
Խոր ընկած դաշտում, առուի եզերքում:

Կանգնած է մարդը արևի տակին,  
Ոտն ու ծունկը բաց, բահը իւր ուսին.  
Մի շապիկ միայն ունի նա հագին  
Եւ մի սպիտակ թասակ կայ գլխին:

— Բայց ինչ մարդ է նա և ինչ է շինում,  
Արևի տակին լնչո՞ւ է այլուում:

— նա ընտանի է, ընտանի\*) է ջրբում:

Սեխն ու ձմերուկն այնտեղ են հասնում:

41. Կ Ա Ր Կ Ո Ւ Տ

Անցել էր դարուն, ամառ էր մտել, բիւր անթիւ բարիք գիւղացուն բերել. կանաչ արտերի ցորենն ու դարին, կորեկն ու հաճար ուռել ու լցուել, ոսկեգոյն ներկուել, և այգիների խնձորն ու տանձը, դամբուլն ու ծիրան հասել, կարմրել, ծառերը բռնել. իսկ սեխաստանի սեխն ու ձմերուկ. դղումն ու գազար փորերն ուռցրել, մեղրի համ առել...

Գետը պարզուել էր, խոտը երկարել, հօտեր, նախիրներ դաշտերը փռուել. ծառերի գլխին և կամ արտերում թռչունք բուն դրել, ձագուկներ հանել...

Սողում էր օձը խոտերի միջին. մեղուն թռչկոտում ծաղկից դէպ՝ ծաղիկ. կրիան էլ վիզը հանած պատեանից, քաշուում, քաշկրտուում թփերի տակին...

Պայծառ էր օրը. պայծառ էր երկինք. ուրախ են թռչունք, անասունք, մարդիկ...

Բայց այն ինչ ամպ է, որ սարի գլխից գալով գալիս է ու իրան յետքից, կարծես շղթայած, քաշում է բերում մեծ ու սև ամպեր՝ ամեն տեղ փռում...

Մի բոպ է ևս, խորին մթութիւն ամեն ինչ պատեց. որոտաց երկինք, երկիր դրդաց. փայլակն ու կայծակ իրարու խառնած, մարդկանց սրտերը ահ ու դող գցեց: Մռնչաց քամին, շարժուեցին ծառեր, կաթեց, կաթկաթեց, յորդ անձրև թափուեց. անձրևի ետքից սառցէ գընդակներ, շրթ՛խք ու շրթ՛խք, երկիր գլորուեց: Թափուում

\*) Բոստան—սեխաստան, բոստանի՝ բոստանը մշակող:

է, թափուում, սար ու ձոր ծածկում. ոչ դաշտ է հարցնում, ոչ այգի ասում:

«Ա՛խ, կարկճւտ, կարկճւտ, կանչում են մարդիկ.

Այս ինչ պատիժ է, խնայէ, երկինք»...

Ծերը ծնկաչոր, արտասուքն աչքին, Աստուած է կանչում՝ խնայել երկրին. պառաւր հանած երկթէ կասկարան բակն է շարտում ու նզով կարգում. հարս ու աղջիկներ, պատի տակ շարուած, սուր դանակներով կարկուտ են կտրում՝ երկինքին նայում. իսկ նրանց մօտը մշակ երկրագործ յուսահատ կանգնած, ձեռը իւր ծոցում, ախ-վախ է քաշում, գլուխը շարժում...

Բայց հանգերի մէջ այս ինչ շփոթ է ու իրարանցում... Հօտը ցրուել է, նախիրը փախել, ձիերը խրտնել, դէս ու դէն ընկել. թռչունքը թռել, բունի մէջ պահուել. հովիւ, հորթարած, փայտհատ, կովարած՝ ամենքն էլ իրանց գործերը թողած՝ թփերի տակին մնացել են սառած...

Գազարեց կարկուտ, որոտը լռեց. ամպերի ձեղքից արևը նայեց. երկիրը ժպտաց, նորից փայլ առաւ, բայց տխուր փայլ էր, որ նա ստացաւ:

Այգեպանն վազեց իւր այգին մտաւ, դէս ու դէն նայեց, մնաց քարացած.— ծառեր տերեթափ, ճիւղեր կոտրատուած, բոլոր պտուղներ կարկտահար եղած:— «Վայ իմ աշխատանք, ափսոս իմ այգի», ասաց հեռացաւ, աչքերը լցուած...

Արտատէրն գնաց, իր արտը հասաւ: Թուլացան ոտներ, սևացան աչքեր, երբ տեսաւ հասկը ջարդուած, փշրուած, հողին հաւասար, անգութ հեղեղից աւազով

ծածկուած .«Կորու իմ յոյսը, փշաջաւ իմ արտ», ասաց  
ու գնաց սիրտը մորմորուած...

Կրտում մնացած թռչունքն էլ թռան, գտան իրանց  
բուն. բայց ան, ինչ տեսան. բունը աւերուած, ձագուկ-  
ներն ընկած, չորսից միայն մէկն ողջ էր մնացած. իսկ  
այն միւսները թափուած ցեխի մէջ, անշունչ ընկել են,  
աչքները փակել՝ որի գլուխը, որի թևիկը կարկտից ջար-  
դուել:

Ծրվելաց թռչունը, սրգաց իւր ձագուկ,  
Դէս ու դէն ընկաւ՝ արեց ողբ ու սուգ...  
Այսպէս ամեն տեղ, որ մի ժամ առաջ  
Տիրում էր յոյս, կեանք, ցնծութիւն անբաւ,  
Այժմ յաջորդեց, կարկրտի շնորհիւ,  
Յուսահատութիւն, տառապանք ու ցաւ...

42. Ա Ղ Օ Թ Ք

«Տէր, եթէ գշրթունս իմ բանաս,  
Բերանն իմ երգեսցէ գորհնութիւնս քոս:

Գիշեր ու ցերեկ, Տէր, Քո սուրբ անուան  
Մենք պիտի լինինք յաւէտ փառաբան.  
Թէ արև ծագէ, քարոզ քո փառաց,  
Թէ գիշեր հասնի, պարզեղ ողորմած.  
Մենք խոնարհ հոգով Քո մեծ բարութեան,  
Գանգնած ենք՝ պատրաստ լինել սրբաբան:

Բայց մարդիկ վաղուց, մոռցած Քո խրատ,  
Դահիճ են դարձել եղբարցն հարագատ.  
Ուրացած անմահ խօսքդ մարդասէր,  
Հգօրն աշխարհին դարձել է արդ տէր,

Եւ փոքրը չունի այլևս բերան՝  
Կարդալ սաղմոսը Քո օրհներգութեան:  
Ընդունիլը արդ, Տէր, մեր խունկն աղօթից,  
Տուր մեզ վայելի խոստացած բաղդից՝  
Թէ վաստակեալներն ու բեռնաւորներ  
Պիտի գտանեն հանգիստ երկնանուէր.  
Եւ բաց մեր շրթունք, Տէր Աղովնայի,  
Երգել օրհնութիւնն Քո անբաւ փառքի:

43. Ա Ղ Ո Ի Ն Ք

Աշունքացաւ: Արարատեան դաշտի կանաչ այգիները,  
որոնք մարդու սիրտ ուրախացնում էին իրանց գեղեցիկ  
տեսքովն ու անուշ հոտովը, Աստուծուց փռած կանաչ  
խալիշաններովը, հազար տեսակ ծաղիկներովը, հիմա այն  
դրութեանն էին, որ մարդու սիրտ չէր տալիս, որ նրանց վրայ  
նայէ. խաղողի թփերը, որ մի օր գլուխ գլխի կպցրած՝  
իրանց սաթի նման ողկոյցներով մարդիս բերանի ջուրը  
բերում էին ու նրա երեսին ծիծաղում, հիմա մեռած  
մարդկանց գերեզմանների նման հողի կոյտերով էին ծած-  
կուած: Ծառերը, որ մի թեթե քամուց իրանց տերեւե-  
րով տարուբերում ու մարդու տխրած սիրտն էլ բաց էին  
անում, հիմա մերկացած, մի տերեւ էլ չես գտնիլ վրա-  
ները—չոր-չոր չոփերն են երևում միայն բիզ-բիզ: Ջրերի  
ափերը, որ բազմերանգ խոտերի և ծաղիկների շատու-  
թիւնով մարդու ախորժակը բաց էին անում, հիմա հէնց  
իմանաս թէ ութ օրէն մեռած մարդու երես են դարձել:  
Ամեն բան էլ փոխուած՝ մի տխուր տեսարան է ներկայա-  
ցնում:

Բայց գործի տէր մարդիկ նոր են սկսում ուրախա-

նալ. այգու բաներից պրծել են ու դադարել. ունեցող-  
 շունեցողն էլ հիմա տանիցը մաքուր հագնուած է դուրս  
 գալիս: Մարդ չկայ, որ իրան կարողութեան չափ գինի  
 շունենայ: Ով որ հոգս ունի, ծախում է գինին ու իրան  
 տունը նորում, ձմեռուայ պատրաստութիւնը տեսնում:  
 Մի գիւղացի իւր ցորենի աւելորդը, միւսը իւր գինու ու  
 արաղի մի մասը, երրորդը իւր ձեռատունկ ծառաստանի  
 կտրուածքը՝ ամեն մարդ իւր առատութիւնից մի բաժին  
 վաճառում, իրանց միւս պակասութիւնները ծածկում են:  
 Ում հասած աղջիկ կամ տղայ ունի, շտապում է հարսա-  
 նիք անել: Գիւղացու ուրախութիւնները, մեծ մասամբ,  
 աշնան սկզբներումն է լինում:

44. Ա Յ Գ Ե Կ Ո Ի Թ

Ցերեկը գիշերին յաղթելով ցրիւ տուեց նրա թանձր  
 մուժը. մարդկանց քունը փախաւ գնաց աշխարհի տակը.  
 Սուրբ-Խաչի մեռելոցին, երկուշաբթի օրը, արևը գեռ  
 նոր էր իւր դուխը հանել, որ հինգ-վեց հարիւր հոգի  
 կարբըցիք ու հանավանքցիք, կթոցները շալակներին, մի  
 երկու ցամաք հաց միջին, մօտեցան Աշտարակի այգիներ-  
 ըին: Աշտարակցիք այսօր մի մարդ են ուղարկում բա-  
 նուորներ բռնելու: Գեռ արևը նոր էր բարձրացել, որ  
 այնքան բանուորներից մէկը չմնաց. բոլորը ցրուեցան  
 այգիները: Քաղն սկսուեց: Խաղողի տեսակները՝ իծա-  
 պտուկը, քիշմիշին, ասկեարին, մնխալին, կոթոռնջը, եգ-  
 նաջը, ճիլալը, եզանդարին, մէկ խօսքով ինչքան պա-  
 տուական խաղողներ կային, բոլորը թլթլում էին, բոլորը  
 քաղող էին կանչում: Կեանքը եռում էր այգիներում: Քա-  
 ղող քաղողի, ուտող ուտողի, տանող տանողի էր: Աղբա-  
 ների, շունետրների աչքն էլ լիքն է այդ օրերը: Սրանից

յետոյ, մինչև այգեկութի վերջը, ինչ որ այգետէրերի  
 դրութիւնն է, Աստուած ոչ շհանց տայ. մարդ որքան էլ  
 հարուստ լինի, հագին այնպիսի ցնցոտի կըլինի, որ ծը-  
 լանքներն ուռնու տերևի պէս երկար-երկար քաշ ընկած  
 կըլինին. բոլորը պատառոտուել են խաղողի թփերի մատ-  
 ներիցը կամ տաշտակներիցը: Կանայք, որոնք տանն են  
 քնում, առաւօտանց շտապելով իրանց բանը կըպրծնեն  
 ու՝ դէպի այգին. մէկ խօսքով՝ մի մաքուր շոր չես գտնիլ  
 որ շիրտ եղած, կուպը դարձած չլինի: Հէնց որ քաղից  
 պրծան, բոլոր խաղողը ջեկջրկեցին. պահունին տուն տա-  
 քան՝ կախան անելու, իսկ մնացածը հնձանը հաւաքեցին:  
 Քաղը վերջանալուց յետոյ խաղողատէրերը և նրա վար-  
 ձուորները ոտները հանեցին, խտակ լուացին, Աստու-  
 ծու անունը տուին, մտան առագաստի մէջն ու խաղողը  
 տրորեցին. տրորելուց յետոյ դիւր դրին, ժողովեցին և  
 վրան տախտակներ շարեցին, որ քամուի:

Մարդու սիրտ փառաւորում է, երբ որ քաղցուն,  
 Աշտարակցու սրտի ուրախութիւնը, նրա տարեկան ապ-  
 բուստը, առու է լինում առագաստի միջով ու թափում  
 տաքարը: Աշտարակցու սրտին զանգի ձայնից քաղցը է  
 թուում այն զընգզընգոցը, որ լսում է տաքարից, քաղցուն  
 նրա մէջը լցուելիս. բայց մանաւանդ սրբան մեծ է լինում  
 նրա ուրախութիւնը, երբ որ, մին էլ ես տեսնում, տաքա-  
 րը շրթունքներից հեռ լցում և քաղցուն եկած տեղիցը  
 յետ է դառնում, առագաստումը լճանում, իմաց տալով  
 իւր տիրոջը, թէ ինձ կրիւ, պրծիւ, կարամներդ լցրու:  
 Քանի ու քանի փառք և գոհութիւն է վեր ուղղում մարդ  
 այդ ժամանակ դէպի Արարիչը:

45. 2 Մ Ե Ռ

Բարեկենդան էր: Չիւնն եկել, դիզուել, սար ու ձոր բռնել էր: Պարզըկայ գիշերն այնպէս էր գետինը սառցրել, որ ամեն մէկ ոտը կոխելիս՝ հազար տեղից տրաքտրաքում, ճրճում, ճաքճքում էր և մարդու մարմինը սրտացնում, ձայն տալիս: Ամեն մէկ ծառի ճղներից, ամեն մէկ տան բաշից՝ հազար տեսակ սառուցի լուլայ, հազար տեսակ ձիւնի քուլայ՝ կախ էր եղել ու բիզ բիզ իրար վրայ սառել: Հէնց գիտես սար ու ձոր կամ նոր էր ծաղկել, կամ նոր ծերայել՝ մահուան գուռն ընկել: Թռչուն, դաղան, անասուն, սողուն՝ որք փէտացել, այստեղ-այնտեղ վայր էր ընկել, որն էլ վազուց, ամսով առաջ, բունը մտել՝ ձայնը կտրել, պաշարը վայելում, գարնան դալուն էր սպասում: Գետերի, առուների երեսը սառուցը մէկ գագ եկել, հաստացել, իրար վրայ դիզուել և այնպէս էր ջրի, աղբիւրի բերնին հուպ տուել, որ մօտերին կանգնողը միմիայն նրանց խուլ ձայնն էր լսում, որ սառուցի տակին տխուր-տրտում քլքլում էր ու էլ յետ այստեղ, այնտեղ կամաց-կամաց ձայնը կտրում, պապանձում, սառչում:

Արեգակն այս առաւօտ որ քնատեղիցն ու աղօթարանիցը գլուխը չբարձրացրէց ու աչքը աշխարհի վրայ չգցէց, շողքը (ճառագայթները) սարերի գագաթին, դաշտերի գլխին այնպէս էր փայլում, պսպղում ու սառցի, ձնի հետ խաղում, ծիծաղում, կանաչ ու կարմրին տալիս՝ որ հէնց իմանաս ազամանդ, գմբուխտ, ետղուլթ ու հազար տեսակ անգին քարեր լինէին՝ դաշտերի, սարերի գլխին, երեսին, կրճքին փռած: Սարերի սառը բուքը, ձորերի դառնաշունչ քամին այնպէս էր հրապարակ բաց արել,

գոռում, փշում, հոսան անում, ձիւնի թեփը իրար գլխով տալիս, որ ճանապարհորդի քիթ ու պոռուկը կպցնում, ճաքացնում, երեսը պատում, գլխին հազար անգամ խրփում, աչք ու բերան լցնում, շատին էլ կամ ձորերը գցում, խեղդում կամ ձնումը թաղում, շունչը կտրում, կամ ոտ ու գլուխ փէտացած, ճանապարհից խոկում, սար ու ձոր գցում, խեղդում կամ քարէքար էր տալիս:

46. Ս Ա Ռ Ն Ա Մ Ա Ն Ի Ք

Չըմեռն է, ձըմեռ, սիւրճն երեխէք,  
 Չըմեռն է, և դուք գողում, մըսում էք,  
 Բայց դուք մենակ չէք, ես էլ եմ մըսում,  
 Ես էլ եմ ձեզ պէս գողում, սարսըռում:

Եւ գիտէք արդեօք ինչ է ձմեռը,  
 Այդ պատկանելի համարուած ծերը:  
 Ո՛հ, մի հարցնէք, ես սարսափում եմ,  
 Երբ զըրա արարք մէկ-մէկ յիշում եմ:  
 Այդ անիրաւը ուր ոտք է դնում,  
 Մահ է տարածում ամեն կողմերում:  
 Երեսին առած ծերունու գիմակ,  
 Մեզնից ծածկում է բուն դէմքն այլանդակ:  
 Չատ ժամանակ չէ, ինչ որ դա եկաւ,  
 Եւ դուք լաւ տեսաք, թէ ինչեր արաւ:  
 Դըրա երկիւղից գետը քար կտրեց,  
 Քըչքըչան առուն լռեց, պապանձուեց,  
 Դալար բոյսերը սառան, փէտացան,  
 Նախշուն հաւերը թըռան, հեռացան:  
 Բայց էլի շատին իր ճանկը գըցեց,  
 Քուք, բորան արաւ, բոլորին խեղդեց,

Սիրուն վարդենու թուփը չորցրրեց,  
 Սոխակի լեզուն տակիցը կըտրեց...  
 Ջրրաղաց չըկայ—ջուրը սառել է.  
 ձանապարհ չըկայ—ձիւնը կապել է.  
 Թէ մարդ, թէ տաւար միակերպ քաղցած,  
 Ողբում-լալիս են, մահուան դուռն ընկած:

Օրը կարճացել, գիշերն երկարել,  
 Լոյսը նուաճուել, խաւարն է տիրել,  
 Երկինքն ամպապատ, գետինքը սառած,  
 Գարունը հեռու, ցուրտը կատաղած...  
 Այսպէս է ահա սոսկալի ձըմրան  
 Ալիքով ծածկած պատկերը դաժան...

Ցուրտ է, սաստիկ ցուրտ, սիրուն երեխէք,  
 Եթէ ինձ նման դուք էլ մըրսում էք,  
 Եկէք միասին մի հնար գըտնենք,  
 Ձըմրան ձանկերից մեր գլուխն ազատենք.  
 Ես իմ բազմամեայ հասակիս փորձով,  
 Դուք ձեր մանկական անարատ մտքով,  
 Եթէ կամենաք, խելք-խելքի կըտանք  
 Եւ, ինչից ասես, կըրակ կըստանանք—  
 Կրակ լուսատու, պայծառ, անստուեր,  
 Որ տաքացընէ սառնեղէն սըրտեր,  
 Որ կենդանացնէ զօսացած ձեռներ,  
 Որ հալեցնէ սառցապատ լեռներ...

47. Ի Մ Յ Ա Ր Ե Ի Ա Ն Ն Ե Ր Ը

Տունը, ուր ես բնակում եմ, մի բարձր և երկար  
 շինութիւն է՝ նա շատ նոր չէ և դռնում է Ջուշի քա-

ղաքի մի հեռացած ծայրում, բաժանուած միւս տներից  
 մեծ ու խոր ձորով, որ սկսում է նրա հիւսիսային կող-  
 քից: Այդ ձորը շատ մաշյ տեսք ունի: Գարնանային հե-  
 ղեղները տարէցտարի բանդում, խորացնում են նրան.  
 զառիվայրը, որ սկսում է տան պատերի մօտից, աւելի  
 և աւելի ուղղաձիգ է դառնում:

Իմ վարձած երկու սենեակների առջև կայ մի փոք-  
 րիկ դատիկոն: Այդտեղից երևում է մեծ բլուրը, որի գա-  
 ուիվայր լանջերի վրայ խիտ կուտակուած են տները: Բայց  
 միշտ իմ ուշադրութիւնը ամենից շատ զբաւում է մեր  
 տան ներքին յարկը: Այդտեղ ամեն անգամ աչքիս երևում  
 է սևացած մաշյ պատը մի փոքրիկ պատուհանով և նոյն-  
 պիսի դռնով, որ բացում է գէպի ձորը: Սկզբում ես  
 կարծում էի, թէ այդտեղ նկուղ է, ուր պահում են ան-  
 պէտք բաներ: Բայց շուտով իմացայ, որ դա բնակարան  
 է մի փոքրիկ ընտանիքի՝ մի այրի մօր և մի փոքրիկ  
 աղջկայ: Վերջինիս շատ անգամ էի տեսնում շէմքում նըս-  
 տած, գլուխը ցած դցած, մենակ խաղալիս: Նրա անունը  
 Հեղինէ էր...

Բարձր, երկար տան միւս սենեակներում կենում են  
 միքանի ուրիշ տնկիցներ: Ահա դրանք էին իմ հարեան-  
 ները:

ձմեռն է:

Տխուր ու ցուրտ օրերը անփոփոխ յաջորդում են  
 միմեանց:

Ձիւնն ու ցելը բոլորովին արգելում են տանից դուրս  
 գալ: Տաք վառարանը թմրացնում է անդամները, իսկ  
 ձմեռային երկնը գիշերները բոլորովին ծուլացնում են  
 մենակ մարդուն, որ սովոր է անփոփոխ ընկերութիւն վա-  
 րել մի կոյտ գըրքերի և մի գըշի հետ միայն: Չմեռը իւր  
 սառը կնիքը դրել է այդ մշտական ընկերների վրայ:

Տաղտկայի միանմանութիւնը մաշում է ինձ: Ինչ կը լինէր դրութիւնս, եթէ հարկան սենեակում չապրէր մի բազմամարդ ընտանիք, բաղկացած գլխաւորապէս փոքրիկ արարածներէց: Մի պատ միայն բաժանում է ինձ նրանցից, բարակ պատ, որ սակայն, չէ կարողանում անջատել իմ հոգին այն ուրախ, անհոգ և մշտածիծաղ կեանքից, որ նրա միւս կողմն է տիրում: Լուսաբացին այնտեղ արդէն ոտքի է լինում կանգնած այդ ազմկաւոր աշխոյժ կեանքը, որ լուծ է միայն ձմերային գիշերուայ կէսին: Անընդհատ լսում են ծիծաղի, ուրախութեան, ոտտիւնների ձայներ, լսում են մանկական երգի կցկտուր, խառնիխուռն հնչիւններ. երբեմն լինում է և պար: Ծիծաղում է ընտանիքի մայրը, ծիծաղում են երեխաները, ուրախութեան ձայներ է արձակում խուլումունջ փոքրիկ տղան: Ուրախութիւնը սրտի գործ է, անպատճառ լեզու չի հարկաւոր նրան արտայայտելու համար:

Այդ կենդանի աղաղակների ժամանակ գործել չի կարելի, և ես լուռ նստում եմ և ականջ դնում. լսում եմ պատի քամակին տիրող իրարանցումը, որ հոգում է օրուայ ապրուստը և հէնց այդ պատճառով գուարթարար, հրապուրիչ է ինձ համար: Լսում եմ և ինքս էլ ուրախանում, մինչև անգամ սկսում եմ երգել: Բայց լինում է ժամանակ, երբ երգեցողութիւնը խանգարում են ծանր ու զգոյշ քայլերը, որոնք անցնում են սենեակիս մօտով: Ընտանիքի հայրն է դա, որ զայիս է տուն ծանր աշխատանքից հանգստանալու: Եւ յոգնած անդամներին ուրիշ հանգստութիւն չկայ, բացի այդ ազմուկով լիքը սենեակը: Երջանիկ մարդ:

Երեկոն մօտենում է: Մոխրագոյն ամպերի տակ հետքզհետէ հաստատուում է խաւարը: Ես դուրս եմ գալիս դստիկոն՝ ծառայիկ կանչելու համար: Զիւնի առատ տա-

րափը թափւում է մեծ եռանդով. ձորը արդէն մթնել է, աւելի ևս տգեղացնելով իւր կերպարանքը: Պիսամթութեան մէջ ես նկատում եմ մի մարդկային պատկեր, մի ուրուական, որ ձորի խորութիւնից բարձրանում է նեղ զառիվեր շաւղով, որ դեռ նշմարելի է ձիւնի մէջ: Նրա մարմինը խոնարհուած է մի ծանրոցի տակ, քայլերը դողդոջուն. նա քաշ է տալիս իւր անաղին ասիական կօշիկները, միևնոյն ժամանակ ոյժ է գործ դնում յետևից եկողի համար էլ, որ կպած է նրա կանացի հագուստի փէշից: Ծառային մոռանում եմ, ուշադրութիւնով նայում եմ այդ պատկերին, որ նոյնինքն աղքատութիւնն է: Ահա նա բոլորովին դուրս եկաւ ձորից և կանգնած է փոքրիկ դրոան առաջ: Դա ներքին յարկի բնակչուհին է, այն միայնակ կիներ: Դիւրի վրայ կրում է լուացքի անաղին կապոցը. իսկ նրա յետևից եկողը աղջիկն է՝ Հեղինէն: Փոքրիկ արարածը լսիկ-մնջիկ հեկեկում է. նրա գլուխն ու դէմքը փաթաթած են ցնցոտիներով. նա հիւանդ է:

Խեղճ...

Նրա համար պառկելու մի տաք անկիւն չկայ... ո՛չ մի տեղ...

48. Ա Ղ Ք Ա Տ Կ Ի Ն

Յուրտը փչեց, ձրմեռ սաստիկ,  
 Զիւնը ծածկեց գետինը.  
 Ամենայն մարդ մրտաւ իւր տուն,  
 Պատսպարուիլ ցրտիցը:  
 Ժամի դռնում դողդողալով  
 Կանգնած է մի աղքատ կին,  
 Նրա հանգերձ պատառ-պատառ,  
 Զունի շապիկ իւր հագին.



# Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Ե Ր Ր Ո Ր Դ

(Կենդանական աշխարհից)

## 49. ՄԱՐԳՈՒ ՄԱՐՄԵՒ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Մի անգամ մարդու մարմնի անդամները վիճեցին միմեանց հետ և վճռեցին այլևս չծառայել իրար: Ռտներն ասացին՝ ինչի մենք պէտք է կրենք մեզ վրայ ամբողջ մարմինը. թող նա իրան համար ուրիշ ոտներ շինէ և ման գայ, որքան կամենում է: Չեռները նոյնպէս ասացին՝ մենք այլևս չենք կամենում ուրիշների համար ծառայի պաշտօն վարել, շինեցէք ձեզ համար ուրիշ ձեռներ և թող նրանք գործեն: Բերանը փրնթփրնթաց՝ հապա ես յիմար եմ, ինչ է, որ ոչինչ օգուտ չունենալով՝ ստամոքսի համար սկսեմ կերակուր ծամել, որ նա յետոյ, պարոնի նման ձգուած, մարսէ նրան. չէ, թող իրան համար ուրիշ բերան գտնէ. ես այսուհետեւ էլ չեմ կամենում նրան ծառայել: Աչքերն ևս շատ էին զարմանում, որ իրանք պէտք է նայեն ամբողջ մարմնին և շարունակ հսկողութիւն անեն:

Այսպէս խօսեցան միմեանց հետ մարդու մարմնի բոլոր անդամները և վճռեցին այլևս միմեանց չծառայել: Բայց զիտէք ինչ պատահեց: Որովհետեւ ոտները չէին կամենում ման գալ, ձեռները զաղաբեցին գործ շինելուց,

բերանն էլ չէր ուտում և աչքերը փակուեցան, ապա ամբողջ մարմինը, անսնունդ և անշարժ մնալով, սկսեց թուլանալ, նիհարիլ և փոքր էր մնացել, որ մեռնէր: Բոլոր անդամները, որոնցից կազմւած էր մարմինը, ծանրացան, և աւելի վաթար վիճակի մէջ կ'ընկնէին, եթէ չը հասկանային, թէ որքան անմիտ է իրանց վարմունքը:

— «Ո՛չ, վատ է այս տեսակ ապրելը», մտածեցին նրանք, հաշտուեցան և սկսեցին ըստ առաջնոյն միասին և միաբան գործել: Այնուհետեւ ամբողջ մարմինն էլ ուղղուեց, նորոգուեց և առողջ, ուժեղ դիրք ստացաւ:

## 50. ԿԱՐԱԳԸ, ՁՈՒԿԸ ԵՒ ԽԵՉՔՔԸ

Երբ ընկերաց մէջ միութիւն չըկայ, Ոչ երբէք նրանց գործն առաջ կ'երթայ. Գործ էլ մի կոչիր դու այն աշխատանք, Այլ անտանելի վիշտ ու չարշարանք:

Մի օր Կարապը, Ձուկն ու Խեչափար,—  
 2եմ զիտում ինչպէս որ գտան իրար,—  
 Մի բեռնաբարձ սայլ տանիլ կ'ուզէին.  
 Երեքը մէկէն լծուեցան սայլին.  
 Երեքն էլ արիւն-քրտինք են մտնում,  
 Սակայն իւր տեղից սայլը չէ շարժուում:  
 «Չարմանք, ասում են նրանք մէկ մէկու.

2ըգիտենք ինչո՞ւ

2ենք կարողանում շարժել այս սայլը.  
 Ո՛չ ճամբան է վատ, ո՛չ ծանր բեռը»:

Հապա չես ասիլ՝

Կարապն սկսեց դէպի վեր քաշիլ  
 Խեչափարը յետույետ,  
 Ձուկն իւր կողմից դէպի գետ:

Ծուռը ով էր, կամ թէ ունի էր իրաւունք,  
Այն թողունք.

Բայց բանն այս է որ  
Հէնց մինչև այսօր

Սայլն այնտեղ է բեռնովը.

Այսպէս կ'ասէ Կրիտիկը:

51. Ա Ր Ա Մ Ը

(Արտաքին զգայարանք)

Արամը շատ շուտ գարթնեց, բացեց իւր աչքերի վարագոյրները՝ երկար ու թուխ արտեսանունքը. նրա յետևից շարժուեցին, բարձրացան աչքի ծածկոցները— շարժական կողերը: Արեղակի ճառագայթները ներս մըտան սենեակը, լուսաւորեցին պատուհանում գրած ծաղկամանը և պատի վրայ կախած փոքրիկ գանգրաւոր մանուկի պատկերը, որոնց վրայից արտափայլելով՝ ընկան Արամի փոքրիկ աչքերի ոսպի վրայ, անցան ջրային մասի միջով և պատկերացան ցանցաթաղանթի վրայ: Այնտեղ նեարդային մոխրագոյն թելերը յափշտակեցին նրանց և հաղորդեցին գլխի ուղեղին, որի միջնորդութեամբ իսկոյն ամենայն բան իմացաւ տանուտէրը— հոգին:

«Ա՛, արդէն լուսացել է և ինչպէս գեղեցիկ առաւօտ է», ասաց Արամը և իսկոյն վեր թռաւ անկողնուց: Նա ձեռներով շփեց իւր գեղեցիկ, դուրս ցցուած ճակատը և արագապէս սկսեց հագնուել: Հագնուելուց յետոյ՝ նա շտապով ձեռներն ու երեսը սառը ջրով լուացաւ և մաքուր երես սրբիչով սրբեց: Արամը սառը ջրի շօշափումից աւելի ևս գուարթացաւ, կենդանացաւ:

Այդ ըոպէին էր, որ օդի արագ հոսանքը ներս մտաւ

նրա ականջը, ցնցեց խողովակի առաջը կապող թմրկամաշկը և նրա յետևից շարժուեցին երեք փոքրիկ ոսկրները՝ մուրձը, սալը և ասպանդակը: Այս փոքրիկ շփոթութիւնը ականջի հեղանիւթին շարժողութիւն պատճառեց, որի միջի քնքուշ նեարդը՝ այդ շարժողութիւնից գրգռուելով, յանձնեց դրա տպաւորութիւնը ուղեղին: Արամը եռանդագին կոչեց. «Ա՛խ, ինչպէս քաղցր է երգում մեր պարտէզում թռչնակը»:

Արամը մօտեցաւ լուսամուտին, գլուխը դուրս հանեց դէպի պարտէզ և կամենում էր դուարճանալ թռչունի գեղեցիկ երգով. բայց այդ ըոպէին ծաղկային անուշահոտ փոշիով լիքը օդը, ներս մտնելով նրա մաքուր քթածակերից, շօշափեց այնտեղ տարածուած լորձային մաշկը: Ծաղկի փոշիները գրգռեցին նրա մէջ ճիւղաւորուած նեարդերը, իսկ սրանք այդ տպաւորութիւնը հաղորդեցին մայր ուղեղին և իմացրին նրան, թէ ինչ է պատահում իւր շուրջը: Լեզուի նեարդերը շարժուեցին և Արամը ուրախաղին բացականչեց. «Ի՛նչ գեղեցիկ անուշահոտութիւն է բարձրանում մեր պարտէզի ծաղիկներից»:

Արամը կամենում էր դուրս դնալ պարտէզ, փունջ կապել այդ անուշահոտ ծաղիկներից. բայց այդ ըոպէին օդը մերձակայ սենեակից մօտեցրեց նրա շրթունքներին և լեզուին սուրճից, սերից և պատրաստի նախաճաշիկից բարձրացած խոնաւութիւնը: Նրա բերանում առատ լորձուէք գոյացաւ, բերանի և լեզուի ծծիկների նեարդերը յափշտակեցին այդ խոնաւութիւնը, հաղորդեցին գլխի ուղեղային գանգուածին և տանուտէրը— հոգին, կարծես, ասաց Արամին. «Նախաճաշիկը պատրաստ է, իսկ դու ուտելու ցանկութիւն ունիս»: Արամը ուրախ մտաւ սեղանատուն, վազեց ողջունեց իր մօրը, նրա ձեռների նեարդերը շարժուեցին և ահա նա մատներով շօշափեց, թէ

որքան փափուկ է այն հացը, որ նա վերցրեց և սկսեց ախորժակով ուտել: Նախաճաշելուց յետոյ նա գուարթագին խաղում ու վազվզում էր պարտէզում և ծաղիկներէ տեսքով ու նրանց անուշահոտութեամբ զմայլում էր:

52. Մ Ա Ն Ո Ի Զ Ա Կ

Ո՛հ, մի ողբալ դու, թառամած  
եւ թալկացած մանուշակ,  
Որ քո անոյշ բոյրըն առած,  
Քեզ ձրգեցին ոտի տակ:

Աւելի պարզ էր շողշողում  
Մեր գարունը մանկութեան,  
Բայց մեզ համար այս աշխարհում  
Նա չըբացաւ յաւիտեան:

53. Գ Ա Ր Ե Գ Ի Ն Ը

(Գլուխ)

Գարեգինը երբ ծնուեց, շատ փոքր էր և թոյլ, ինչպէս առհասարակ թոյլ են լինում բոլոր նորածինները. նրա գլուխը այս ու այն կողմն էր տատանում, որովհետեւ դեռ ոսկորներ չունէր: Գլխի աճառները (ղրրձ-ղըրձուկները) իրանց ասեղնաւոր ծայրերով դեռ չէին միաւորուել միմեանց հետ: Սկզբումը Գարեգինը միայն ճշում էր, իսկ փոքր ժամանակից յետոյ աւելի բարձրաձայն էր ցանկութիւն յայտնում ուտելու. նա այնպէս գոռում ու լաց էր լինում, որ կարծես ողջ տունը իրանն է. միևնոյն բանը նա անում էր, երբ անհանգիստ էր պառկած լինում,

կամ երբ նրա բարակ ու կարմիր մաշկը փոքր ինչ ցուրտ էր զգում: Նրա բերանի, լեզուի ու շնչափողի կապերը դեռ այնքան ամրացած չէին, որ կարողանային շրջապատողներին հասկանալի ձայնով արտայայտել նրա զգացմունքը: Գմացարարի մտնով վրայ մզելը այդ զգումը

Գլխի ուղեղն էլ դեռ այնքան ամրացած չէր. առհասարակ նրա գլուխը դեռ կանոնաւորուած չէր, այդ պատճառով էլ չէր կարողանում նրան գործ ածել, ինչպէս իրան պէտք էր և յարմար: Գարեգնի բերանում դեռ ատամներ չկային. շրթուքները ձգուում էին դէպի ամենայն բան, որ մերձենում էր նրանց:

Բայց սակաւ առ սակաւ նրա վերին անշարժ ծնօտի և ստորին շարժական ծնօտի վրայ սկսան ուռչիլ ու կարմրիլ շնդերը և նրանց տակից դուրս երևեցան առաջին երկու կտրող ատամները, որոնք սպիտակ էին և գեղեցիկ: Այն ժամանակ Գարեգինը աւելի էր աշխատում ամեն բան բերանը կոխել, որովհետեւ նրա շնդերը սաստիկ քոր էին գալիս: Գարեգնի մարմնի մէջ այդ ժամանակ շատ ֆոսֆօր ու կիր էր ժողովուել. նրա աճառներն սկսել էին պնդանալ, ոսկոր դառնալ. հոգին ևս սկսել էր իր առաջին գործողութիւնները: Գարեգինն սկսեց ճանաչել հօրը, մօրը, ժպտալ նրանց երեսին... Բայց միևնոյն ժամանակ նա այժմ աւելի էր հիւանդանում, նիհարանում, գոռում, լաց լինում: Այն սպիտակ ոսկորները, որոնք իրանց արմատից ծլում-շարուում էին նրա ծնօտի վրայ, ինչպէս երևում է, շատ էին անհանգիստ անում նրան:

Գարեգինը փոքր առ փոքր մեծանում էր: Աստիճանաբար նրա գլուխը կանոնաւորուեց, կոյրացաւ. դուրս ցցուած ճակատից սկսած դէպի բարձր գազաթը, ծոճրակը և քունքերի մի մասը զանգրաւոր մագերով ծածկուեցին, որոնց արմատները գլխի մաշկի մէջ եղած մա-

ծուցիկ հիւթը ծծելով՝ ամրապէս հիմնաւորուեցին: Այսպէս փոքր առ փոքր նրա երկու ծնօտների վրայ ատամները դուրս եկան, որոնց երեսները ծածկուած էին մաքուր և սպիտակ էմալով (արծնապակի): Գարեգինն էլ այն մանուկը չէր. նրա դէմքն աւելի խոհուն կերպարանք էր ըստացել: Նրա փափիկ, վարդագոյն շրթունքներն այժմ պարզ արտասանում էին ոչ թէ անկապ բառեր, այլ ամբողջ պարբերութիւններ: Այժմ ոչ թէ նա չորեքթաթ էր անում, կամ առաջուայ պէս կարասիներից բռնելով էր ման գալիս, այլ ազատ ու համարձակ թռչկոտում էր ու խաղում:

Ան՝ Գարեգինը նստած է սեղանի մօտ և պատրաստում է իւր դասերը. նա այժմ դիտէ, որ թէև ինքը շատ մեծ չէ, բայց մարդ է, որովհետև այնպիսի հողի և այնպիս մարմին ունի, ինչպէս միւս մարդիկը: Նա դիտէ և այն, որ իւր գլուխը բաղկանում է միքանի մասերից, որոնցից առաջին մասը կոչւում է դէմք, վերին մասը — դագաթ, յետին մասը — ծոծրակ, իսկ կողմնային մասերը — քունքեր: Գէմքն ունի ճակատ, յօնքեր, աչքեր, քիթ, այտեր, թշեր, բերան և ծնօտ. վերջինս բաղկացած է վերին և ստորին ծամելիքից, որոնց վրայ շարուած են սպիտակ ատամներ: Ատամների թիւը (չափահասներինը) 32 է: Ատամները բաժանուում են՝ առաջատամների, որոնք կտրոզ էլ են կոչւում. նրանց աջ և ձախ կողմումը գտնւում են ժանիքները, իսկ ժանիքներից յետոյ — սեղանատամները, իւրաքանչիւր ծնօտի վրայ հինգ-հինգ ամեն մի կողմից: Առաջատամներով կտրում են ուտելիքը, ժանիքներով նրան բռնում կամ պատառոտում են, իսկ սեղանատամներով մանրացնում են նրան, որպէս երկանով, ուստի դրանք ազօրիք էլ են կոչւում:

Այս բոլոր բաներն այժմ Գարեգինը լաւ և գիտակ-

ցաբար գիտէ, հասկանում է, նոյնիսկ կարող է հաղորդել ուրիշներին. բայց երբ նա աւելի մեծանայ և իւր կըրթութեան վրայ հիմնաւորապէս ուշք դարձնէ և երբ նրա վերջին սեղանատամներն էլ դուրս գան, որոնք կոչւում են հասունութեան ատամներ, այն ժամանակ նա շատ քան կըստվորի և աւելի հիմնաւորապէս:

54 Մ Ա Ն Ո Ի Կ Ի Ն

Ինչո՞ւ այդպէս ամբողջ օրը  
 Չարչարում ես, անչափ տանջւում,  
 Միթէ քեզ էլ մթնոլորտը  
 Ծանր է գալիս, ծանր է ազդում:  
 Գու մանուկ ես, դեռ քեզ շատ օր  
 Խոստանում է քո արևը.  
 Գու դեռ ժպտան, խաղան անհող  
 Եւ հեզ ընկիր մօրդ գիրկը,  
 Ու թոթովիր մի երգ սիրուն  
 Քո մանկական անուշ ձայնով,  
 Ու միշտ յիշիր դու այն անուն,  
 Որ պաշտում է քեզ իւր սիրով:  
 Մայրըդ է, որ օր ու գիշեր  
 Անթարթ աչքով քեզ է հսկում,  
 Եւ կարգալով շատ աղօթքներ,  
 Երկար օրեր է միշտ խնդրում:  
 Խաղան, մանուկ, թրրթռալով,  
 Քնիր, զարթիր սիրահեղիկ.  
 Մայրըդ կ'երգէ քեզ փարելով,  
 Որ շատ ապրիս դու երջանիկ:

55. Ա Ր Չ Ա Ի Ի Ր Ը

(Ներքին գործարաններ)

Արշաւիրը առաւօտեան վաղ վեր կացաւ, մի բաժակ կաթ խմեց, հետն էլ մի կտոր հաց կերաւ ու գնաց ուսումնարան: Նա վեր էր աւել իւր պայուսակը, որի մէջ դրած էին նրա գրքերն ու միւս դասական իրեղէնները, և մտածում էր այդ օրուան դասերի վրայ: Իսկ հացը, որ նա կերել էր, այդ ըոպէին ճանապարհորդում էր նրա մարմնի մէջ: Ատամները լաւ ծամել էին նրան, լորձիւնի բշտիկները նուրբ լորձիւնով պատել, իսկ փափուկ լեզուն շտապով ներս էր մղել որկորի մէջ: Ճանապարհին նա քիչ մնաց որ ընկնէր շնչափողը, բայց փոքրիկ մսեայ խցանը—կատիկը ծածկեց նրա անցքը և ծամած պատառը սահելով դլորուեց զէպի ցած և ընկաւ այն մսեայ պարկի մէջ, որ ստամոքս է կոչւում: Այդտեղ տաք էր ու մութը և որ կողմը դառնում էր, ամեն կողմից նրան շրջապատում էր ստամոքսային տհաճելի հիւթը, որ կողքից պատրաստում է կարծր փայծախը: Բայց նրան չէր վաճակուած երկար ժամանակ շրջել այնտեղ, որովհետեւ իւր ընկեր կաթի հետ ստամոքսային հիւթի մէջ լուծուելով՝ դարձաւ մի տեսակ թանձր խիւս: Խիւսը ստամոքսի ստորին դռնով ցած իջաւ. այդտեղ խառնուեցին լեզիի կաթիլներ և աւելի կերպարանափոխուած՝ աղիքներով առաջ գնացին: Այդ ուղին առաջ լայն անցք էր. փոքր առ փոքր նա նեղանում ու նեղանում էր և հէնց ինքը հիւթն էլ աստիճանաբար փոխւում էր: Այդ նեղ անցքերից անցնելիս նա կարմիր դգեստ էր հագել և իբրև արիւն այլևայլ երակներով վազում էր զէպի մարմնի ամեն կողմերը:

Արիւնը որքան հեռանում էր, այնքան իւր պիտանի մասերով սննդելով մարմնի այլևայլ մասերը, ինքն ստանում էր նրանց անպէտք հիւթերը և նրա կաթիլները աստիճանաբար մզանում էին: Կարծր ոսկորներին մօտենալով՝ նա իւր դեղին գիճուլթիւնից նրանց էլ իրանց սնունդը տուեց — ֆօսֆոր և կիր: Եւ ահա նա բոլորովին մզացած, ամբողջ մարմինը ման եկած, ուղեղի մեծագործութիւններին և շարունակ սեղմուող ու բացուող մկնամսերի գործունէութեանը ականատես լինելուց յետոյ, վերջապէս թափւում է այն աւազանը, որ երկու մուտք ունի և երկու ելք, և որին մարդիկ սիրտ են անուանում:

Սիրտը ձևով տանձի նման է: Կաթիլ առ կաթիլ վերեկից ու ներքեկից ներս են մտնում ու դուրս են գալիս այդ մսեղէն պարկից արեան կաթիլները և նրա դռնակներն ուրիշ գործ չունին, բացի փակուելն ու բացուելը: Սիրտը մսեղէն միջնապատով բաժանւում է երկու հաւասար մասերի՝ աջակողմեան և ձախակողմեան, որոնցից իւրաքանչիւրը նոյնպէս երկու բաժանմունք ունի՝ վերին և ըստորին: Անմաքուր արեան կաթիլները թափւում են սրտի աջակողմեան վերնասենեակը և հրելով ու բանալով փոքրիկ դռնակը, մտնում են աջակողմեան սրտախորշը: Բայց սիրտը անմաքուր արիւն չէ սիրում, ուստի մկնամսերի անդադար սեղմուելովը մի այլ ճանապարհով հալածում է նրան զէպի այն ընդարձակ թեւերը, որոնք կազմուած են բազմաթիւ բշտիկներից: Մարդիկ դրանց թոքեր են անուանում: Այդտեղ կաթիլները հանդիպում են օդին, որով լցւում ու դատարկւում են թոքերը: Օդը քթի և բերանի խոռոչներից արագապէս մտնելով, անցնում է զէպի թոքերի բշտիկները, շուտափոյթ նայում է նորեկ հիւրերին, որոնք փաթաթուած են մուգ վերարկուի մէջ, մօտենում է նրանց և նրա այրող ոյժը—թթուածինը յա-

փշտակում է արիւնի մուգ ծածկոցը և դրա փոխարէն տալիս է նրան վարդագոյն զգեստ. այդ ընդհանր սեղմում են թորքերի բշտիկները և օդը արագապէս դուրս թռչելով միկնոյն ճանապարհով՝ տանում է իւր հետ արեան անպէտք մասը—ածխային թթուն։ Արեան մարուը վարդագոյն կաթիլները, թողնելով թորքերը, նորից վերադառնում են դէպի սիրտը, բայց այժմ մտնում են նրա ձախակողմեան մասը—նախ վերին բաժանմունքը, ապա ստորին և այնտեղից դուրս գալով՝ դարձեալ սկսում են իրանց վաղեմի ճանապարհորդութիւնը։ Այդպիսով նրանք տալիս են Արշաւիւրին կեանք, ոյժ և առողջութիւն։

Արշաւիւրն ուսումնարանում աշխատում էր առանց իմանալու, թէ ինչ բաներ են կատարւում իւր ներսը։ Նա մինչև անգամ մոռացել էր, թէ ինքը հաց ու կաթն է կերել։

56. Հ Ե Տ Ա Ք Ր Ք Ի Ր

- «Քարի եկար, հագար բարի, բարեկամ,
- «Ո՛ւր էիր՝ տեսնամ»։
- «Թանգարանիցն է գալըս.
- Չորս ժամ եղաւ մանգալըս։
- Ամենայն կողմ պտրտեցի, պըրպտացի,
- Բոլորը տեսայ, ոչինչ չըթողի։
- Աշխարհումս ինչեր են եղել,
- Իրաւ խելքից, մըտքից վեր.
- Ո՛ր կողմ նայես՝ արմանք-գարմանք, հրաշալիք.
- Ո՛րն էլ դիտես՝ մէկը միւսից գեղեցիկ.
- Ի՛նչ գազաններ, ի՛նչ թռչուններ,
- Թիթեռնիկներ, բըզեզներ,

մտնե՛ք ի՛նչ զատիկներ, ի՛նչ կերպ ճանճեր, ի՛նչ սրճա՛ն արա՛յ Որքան՝ ոսկի եզնակներ՝ ինչպարսկ փնտրմունքս։ Ո՛րը կանաչ՝ զմրուխտի պէս, փնտրմունքս, մի նշուխտ՝ Ո՛րը կարմիր՝ բուստի պէս, փնտրմունքս։ Հապա մանրիկ բոտոտները, հաւատա՛մ, փնտրմունքս։ Գընդասեղի զլխիցն էլ շատ փոքրը կայ»։

«Հապա փրդին ի՛նչ ասիր,

Ի՛նչ անագին վիթխարի,

Հարկաւ մտքով կարծեցիր,

Թէ՛ մի լեռ է սոսկալի»։

— «Միթէ փիղը այնտեղ էր»։

«Այնտեղ էր. ի՛նչ, չըտեսնար»։

— «Ափսո՛ս, ի՛նչ ասեմ, սղալէր,

Փիղն աչքովս չի ընկեր»։

57. Հ Ր Ա Ը Ա Լ Ի Տ Ն Ա Կ

Ես մի հրաշալի տուն եմ ճանաչում, որի մէջ ամեն բան կարգաւորուած է և շունի ոչինչ պակասութիւն։ Նա ունի կանոնաւոր աղօրիք, ունի խոհանոց, ուր գիշերցերեկ տաք կերակուր է պատրաստւում։ Տունը շատ մուտքեր և անցքեր ունի, որոնցով արիաջան ծառաները կրում են տաք կերակուրը դէպի նրա ամենայն անկիւնները։ Տունը մի հմուտ տնտես ունի. նա այնքան աշխատասէր է, որ գիշեր ու ցերեկ մի ընդէ չէ հանգստանում. անդադար թըխկթըխկացնելով՝ նա իւր առոյգ և արագաշարժ ծառաներին մղում է այլևայլ կողմեր, ուր որ հարկաւոր է լինում՝ կամ կերակուր, կամ ըմպելիք, կամ ջերմութիւն։

և կամ որեէ անկիւնը նորոգելու համար նոր նիւթ: Տունն ունի ընդարձակ դահլիճ, ուր մարտը օղը ազատ ներս է մտնում, ունի նոյնպէս երկու պայծառ լուսամուտներ շարժական փեղկերով: Գիշերն այդ փեղկերը փակում են, իսկ ցերեկը բացում: Տան մէջ ապրում է անտեսանելի տանտիկինը: Թէև նրան չի կարելի տեսնել, բայց նա ամեն բան զիտէ և ամենին բարեկարգողը և կենդանացնողը նա է. նրա համար է հոգում տնտեսը, նրա համար են գործում փոքրիկ ծառաները. նա ինքն է նայում պայծառ լուսամուտներից. նա է բանում և փակում նրանց: Գիշեր և ցերեկ քնել չըզիտէ նա. նրա աչքերը—միտքը շատ հեռու են տեսնում: Եթէ տանտիկինը դուրս է գնում տանից, այնուհետև ամբողջ տունը խոր քնով ծածկում, թուլանում ու լուում է. տնտեսը դադարում է գործելուց, ծառաները կաշկանդում են անցքերում և ամբողջ տունը խոր լուսթեան մէջ մտնելով՝ սառչում է և քայքայում: Բայց ո՞ր է գնում տանտիկինը: Նա գնում է այնտեղ, որտեղից եկած էր. նա գնում է երկինքը: Երկրի վրայ նա ժամանակաւոր հիւր էր, հեռացաւ հիւրը և նրա բնակարանը—մարմինը զրեցին մի այնպիսի արկղի մէջ, ուր ոչ կարելի է կանգնել, ոչ շարժուել և ոչ ուտել: Արկղն ամփոփեցին հողի մէջ և տունը քայքայուելով հող դարձաւ:

58. ԾԱՌԵՐՆ ՈՒ ԿՆՅԻՆԸ

Ծառերն անտառում երբ շատ նեղացան  
 Կացնի ձեռիցը ու էլ չիմացան՝  
 Ի՞նչ անեն, որ իրանց գլուխը պահեն,  
 Խորհուրդ արին որ մի հնարք գտնեն:  
 «Կացինն ո՞վ է որ՝ մեզ կարողանայ  
 Զօր անել—յաղթել, ի՞նչ մեծ բան է նա»:

Այսպէս ձայն տուեց ծառերից մէկը.  
 «Մենք որ կոթ չտանք, կացինն ի՞նչ է որ  
 Յանդգնի անել մեզ կտոր-կտոր»:

Թող իմացողը ինքն իմանայ  
 Եւ իզուր տեղը կացնից չնեղանայ.  
 Ո՞վ որ կոթ կրտայ պողպատէ կացնին,  
 Թող «հողուցն» ասէ առաջ իւր անձին:

59. ԿԱՊԻԿԻ ԵՂԻՆՅՐԸ

Փոքրիկ կապիկի մայրը վախճանուեցաւ և նա բոլորովին որբ մնաց: Տխրադէմ նստած էր նա ծառի վրայ և իւր սև օրը լալիս էր: Կապիկը դեղեցիկ չէր. նրա դէմքը փոքր էր և կնճռոտ, բունը վտիտ և ունէր չորս երկար ձեռներ: Նա դեռ ևս չէր կարողանում մէկ ծառից միւսը յատքել և նրանց վրայ բարձր ու ցածր անել՝ կերակուր ձարելու համար... Ինչպէս երևում է, նրան վիճակուած էր քաղցածութիւնից մեռնել, ինչպէս կըմեռնէր մի փոքրիկ մանուկ, եթէ մօր մահից յետոյ բոլորովին անտէրունչ մնար: Ուրեմն ո՞վ պիտի հոգար մեր կապիկի համար: Նրա ցեղակիցներն ապրում էին խմբերով, որոնց մէջ էր և նրա մեծ եղբայրը. սա ամբողջ խմբի մէջ ամենաճարպիկ խեղկատակներից մէկն էր և միքանի տարի շարունակ արդէն շատ աւերումներ էր անում անտառում: Եթէ մի տեղ կռիւ պատահէր, պէտք է հաստատ իմանայիք, որ կռուողներից մինը նա էր: Եթէ կապիկները ժողովուէին արշաւելու և կործանելու գիւղացիներին սիմինդրի արտե-

ըր կամ ասպատակելու նրանց այգիները, անպատճառ մեր կապիկի եղբայրն այս արշաւողներից առաջինը կըլինէր: Այդ խեղկատակը տեսաւ իւր եղբօրը և բարձրացաւ դէպի նա: Կարելի էր կարծել, թէ կամենում է փորձանք բերել նրա գլխին, կամենում է ցնցել ու վայր գլորել նրան ծառից: Բայց ոչ: Նա նստեց եղբօր կողքին և քնքշաբար բռնեց նրա ձեռքից: Մանուկն սկսեց փարիլ նրանով և իւր առաջին ձեռներով փաթաթուեց նրա պարանոցով, իսկ յետին ձեռները պատ տուեց մէջքին. նա մեծ կապիկի հետ վարուում էր ինչպէս իւր մօր հետ. իսկ վերջինս խնամում էր նրան իբրև ծնող. իւր կենդանի բեռը գրկած՝ նա թռչում էր մի ծառից միւսը. միջատներ էր որսում և կերակրում նրան. ջոկում էր նրա համար ամենահիւթալի պտուղներ. նրա հետ և յատկապէս նրա համար որոնում էր թռչունների բներ և հանում էր նրանց միջի ձուանիւրը:

Երբ փոքրիկ կապիկը սակաւ ինչ մեծացաւ և ուժեղացաւ, այն ժամանակ նրա դաստիարակը ցոյց տուեց, թէ ինչպէս պէտք է ցատկել և վեր ելնել ծառը. սա սովորեցրեց նրան այն ամեն խորամանկութիւնները, որ պիտի իմանայ իւրաքանչիւր կապիկ, եթէ կամենում է կուշտ լինել և չընկնել փորձանքի մէջ:

Մի անգամ փոքրիկ կապիկը ծարաւեց և եղբայրը տարաւ նրան սառն աղբիւրի մօտ: Յանկարծ թփերի տակից բարձրաձայն հաջելով դուրս վազեց որսի շուներ: Բոլոր կապիկները, որոնք այնտեղ ներկայ էին, շուտափոյթ փախան այլևայլ կողմեր և թռչունների պէս թագ կացան ծառերի վրայ: Միայն փոքրիկ կապիկը չկարողացաւ վեր բարձրանալ ծառը: Երկիւղի առաջին ըոպէին՝ նա ցատկեց մի բարձր քարի գլուխ և ամբողջ մարմնով դողում էր. իսկ չար շունը քարի մօտից կատաղաբար հաջում էր նրա վրայ: Ահա հեռուից երևաց և որսորդը: Խեղճ կապիկն անշուշտ

կըկորչէր, եթէ եղբայրը նրան չփրկէր: Երբ սա նկատեց, որ իւր սանիկը վտանգի մէջ է, խսկոյն յետ դարձաւ և համարձակ ընթացաւ դէպի քարը. յետոյ զայրացած նայեց շանը և այնպէս սպառնազին կրճտացրեց ատամները, որ նա չհամարձակուեց յարձակուիլ կապիկի վրայ: Այսպիսով նա հասաւ իւր որդեգրին, գրկեց նրան և բարձրացաւ ծառը: Որսորդը, գթաշարժուած նրա անձնանուիրութիւնից, չարձակեց հրացանը և այսպիսով փոքրիկ կապիկը մահից ազատուեցաւ:

60. Կ Ա Պ Ի Կ Ն Ե Ր

Ուրիշներից թէ խելքով առնես քեզ մի օրինակ,  
 Զարմանք չէ որ մեծ օգուտ շահիս ամեն ժամանակ.  
 Բայց թէ հետևիս մէկին կուրօրէն,  
 Վայ ու թուր ու մուր լսիր ամենէն.  
 Այս բանիս հաստատութիւն  
 Առ քեզ ահա նոր պատմութիւն:

Ով որ կապիկ տեսած ունի՝ նա գիտէ,  
 Թէ այս վտիտ կենդանին  
 Ուրիշներին տընազ տալ շատ կըսիրէ,  
 Կուզէ նմանն անել ամեն տեսածին:

Աֆրիկէի մէջ կապիկը խիստ շատուոր է ու ցեղ-ցեղ.  
 Մի օր մի մեծ ծառի վրայ ժողովուեցան միատեղ.  
 Ո՛րը վերևից, ո՛րը ներքևից,  
 Ո՛րն էլ ճգների տակից ու գլխից  
 Ծըկրակում էր աչքը տնկած ու նայում,  
 Թէ որսորդի մէկն ինչ կերպով  
 Գետնի երեսին մի ցանց փրոռելով,

Ինքը նորա մէջն էր գլորում  
Տակըն էր մտնում, վերև բարձրանում:

Ամեն կապիկ մօտինին հրրում, նըշան էր տալիս,  
Եւ ասես թէ ահանջն ի վեր այսպէս լինէր ասելիս.

Մըրան նայիր, եղբայրիկ, ինչ է անում ժամերով,  
Ի՞նչպէս եխում-մտնում է ծումը ուելով, յոգնելով,  
Մերթ պառկում է, երկարում և մերթ կըծիկ է դառնում,  
Այնպէս որ ոչ ոտքերը և ոչ ձեռքն է երևում.

Մենք զըրանից, եղբայր, ինչո՞վ ենք պակաս,  
Այդ արհեստը չունինք, սակայն ինչ վընաս.

Եկէք, մենք էլ փորձ փորձենք,  
Գուցէ իրանից անցնենք.

Նա հերիք խաղաց իւր ուզածին պէս,  
Տեսնենք՝ երբ կ'երթայ—հեռացածին պէս...»:

Մկկէլ տեսնես իրօք ելաւ, մէկ կողմ գընաց որսորդը,  
Այնտեղ թողեց իւր ցանցերով թակարդը:

«Շուտ անենք, ասին կապիկը իրարու,  
Բոպէ չըկորցնենք, երթանք փորձելու»:

Իսկոյն ծառից վայր թափուեցան խեերը,  
Յանցի վըրայ շարուեցան նոր հիւրերը՝

Տակը մըտան, վըրան ելան,  
Կըծկըւեցան, գըլորուեցան:

Կապիկների կանչ ու ճիշը աշխարհ բռնեց խնդալուց.  
Բայց ինչ փորձանք՝ թակարդի մէջ բըռնըւել են շատ վաղուց.

Չեն իմանում, ինչպէս ազատուեն՝  
Տակից դուրս գալու հընարը չունեն:

Որսորդն էլ այդ էր կամենում,  
Շուտով պարկեր է վեր առնում,  
Գալիս՝ հիւրերին մօտենում:

Ո՛ւր փախչէին, ինչ անէին,  
Նըրա ձեռին գերի էին:

Բըռնեց ամենքին,  
Ծախեց թանկագին:

61. Ո 2 Խ Ա Բ

Ոչխարը մի հանդարտ և անվրդով կենդանի է: Բնութիւնը նրան պաշտպանուելու զէնք չի տուել, այս պատճառով նա մի թեթեւ որս է իւր բոլոր թշնամիների համար: Ընտանի ոչխարներն իրանց վայրենի ցեղակիցների ճարպիկութեան և անվհահրութեան հետքն անգամ չեն պահել: Ոչխարը մարդու հետ միասին տարուել է աշխարհիս ամենայն մասերը, բայց սառը կամ տաք երկիրներ տանելը նրան ոչինչ օգուտ չի տուել: Այսպիսով թէև բաւականաչափ փոխակերպուել է ոչխարի արտաքին տեսքը, բայց ամենայն տեղ նա մնացել է նոյն անբաղդ ոչխարը:

Ոչխարի արտաքինը գեղեցկութիւնից զուրկ չէ. մարմնի և անդամների մեծութիւնը համապատասխան են, զըլուխը տղեղ չէ, իսկ բարակ ոտները կոկ են և սիրուն: Բայց ոչխարի կերպարանքը չունի արտայայտութիւն. աչքերն անիմաստ և անուռ են նայում. ամենայն վտանգ նրան շփոթութեան, անգիտակցութեան և կաշկանդման մէջ է գցում, և ոչխարը կամ անմտաբար իւր տեղը կանգնած է մնում, կամ առանց մտածելու սուաջ է վազում: Նա փախչում է միամտաբար, գլուխը վեր բարձրացրած, առանց չորս կողմը դիտելու, առանց յետ նայելու. իսկ

սա վատ նշան է թէ կենդանիների և թէ մարդկանց համար: Հրդեհը, հրացանաձգութիւնը, որոտումն ու կայծակը բոլորովին շփոթում են նրան:

Ոչխարը սեփական կամք չունի, նա կատարելապէս ենթարկւում է առաջնորդողին՝ արու ոչխարին, հօտը պաշտպանող շանը, երկարամազ այծին և հովուի սրնգին: Եթէ ոչխարների առաջնորդողը փարախից դուրս գայ և ցատկէ մի տեղով, միւս բոլոր ոչխարները, անդիտակցաբար նրան հետեւելով, կը ցատկեն. եթէ նա նեղ շաւղից ջուրը գլորուի, շատերը՝ նրան հետեւելով, կը գլորուեն նոյն ջրի մէջ. նրանք այդ ժամանակ ոչինչ չեն կամենում, բայց հետևում են իրանց առաջնորդողին, որովհետև սեպհական կամք չունեն:

Ոչխարների մայիւնը համարեա միաձև է և անմիտ: Ձին խրխնջում է համարձակ, ուժեղ և խելացի. նոյն եռանդով բառաչում է և եզը. իսկ ոչխարը մայում է անվստահ, երկչոտ, համարեա երեխայաբար: Բայց չնայելով այս բանին, մայրը ճանաչում է իւր գառան ձայնը, իսկ գառը որոշում է իւր մօր մայիւնը հազարաւոր ձայների մէջ և երկուսն էլ անխափան գտնում են միմեանց: Թըշնամու ձեռքն ընկնելով՝ ոչխարն անմոռնչ տանում է ամենատեսակ տանջանքներ. նա հազիւ է ընդդիմանում, երբ մտադործը դաշոյնը նրա կոկորդն է կոխում:—Ոչխարին բարկացնելն էլ դժուար է, արու ոչխարն է միայն մի աննշան բարկութիւն արտայայտում: Մինչև անգամ մայրական սէրը նրա սառնասրտութիւնը չի վրդովում. բոլոր կենդանիների մէջ միայն ոչխարն է, որ թողնում է յափշտակել—տանել իւր մայող գառը, առանց արտայայտելու ո՛չ զրկանք ու ցաւ, ո՛չ տխրութիւն ու խռովութիւն:

Բայց չնայելով այս անմեղ կենդանու բոլոր մտաւոր անընդունակութիւններին, նա է, համարեա, ամենաօգտակարը բոլոր ընտանի կենդանիներից: Ոչխարը ամ-

բողջովին մարդու օգտին է ծառայում: Նրա երկար և փափուկ բրդից պատրաստում են թէ նուրբ և թէ հաստ մահուղներ, որ մարդու ամենալաւ հագուստն է: Նրա մորթուց տաք մուշտակներ են կարում. նրա ճարպից պատրաստած մոմերը մենք վառում ենք, դմակը իւրի տեղ ենք գործածում: Նրա կաշուից կօշիկների համար պատուական ապրանք է պատրաստւում. միսը համեղ կերակուր է. կաթնից շինում են իւղ և պանիր:

62. ԳՆՅԼՆ ՈՒ ԳՆՈՂ

Ուժովի մօտ միշտ տկարն է մեղաւոր.

Այս բանիս պատմութեան մէջ օրինակներ

կան բիւրաւոր.

Բայց պատմութիւն չէ մեր այստեղ գրրածը,

Ուստի տեսնենք առակաց մէջ ասածը:

—

Գառնուկի մէկը ամառուայ տաքին,

Առուի մօտ կ'երթայ, որ քիչ ջուր խըմէ.

Բայց ինչ կ'ասես խեղճին եկած փորձանքին.

Նոյն տեղերից դիմացը մի գայլ կ'ելնէ:

«Ի՛նչ լաւ որս գըտայ, ասում է մտքում.

Բռնեմ գառնուկը՝ տեղ տամ իմ փորում»:

Եւ օրինաւոր ձև տալ ուզելով անօրէն գործին,

Գանչում է բարձրից. «Այդ ինչ լըբութիւն, ինչ յանդգնու-

թիւն,

Որ գաս իմ ջուրս քո պիղծ բընշովըդ այդպէս պըղտորես,

Նայիր, ինչ արիր՝ բոլոր ցեխ, աւազ. ինչպէս խըմեմ ես.

Հիմա գըլուխըդ ես կըջախջախեմ

Եւ ոսկորներդ իրար կ'անցընեմ»:

—Աման, աղան, ծառաղ եմ,

Թէ հրաման տայր, միայն այսքանը կ'ասես,  
Որ ձեր գերագանցութեան կանգնած տեղից հարիւր քայլ  
Ցած եմ կանգնած ողորմելիս. զուր տեղը միք նեղանալ.

Ո՛նց կարող եմ ես պղտորել ձեր ջուրը:  
— «Մի՛թէ ուրեմն սուտ եմ ասում. տեսա՛ր կերած ապուրը.  
Հապա միտքդ չէ գուցէ, հէրու չէ՛ մէկէլ տարի,  
Գու կրկին այստեղեցում ինչ վնաս արիւր ինձի.

Եթէ դու մոռացել ես,  
Ես չեմ մոռացած, գիտես»:

— Գըլխիդ դուրբան, ծառադ եմ,  
Հազիւ մէկ տարուայ լինեմ, —

Ասաւ գառնուկն արմանալով: — Նա դարձաւ՝

«Թէ դու չէիր, եղբայրդ էր»: — Եղբայր չունիմ ես, ասաւ:

«Տօ, անիրաւ, նա քո եղբայրդ չէր մի.

Թէ այդպէս է՝ սանահէրդ էր, կամ խնամի:

Վերջապէս ինչ ես երկարացրնում,

Ով էլ լինի՝ ձեզնից մէկն էր, ես չեմ իմանում.

Գուք ամէնքդ էլ, այ անպիտաններ,

Ոչխարներ, շներ ու չար հովիւներ,

Անիծից արմատք, ինձ թշնամի էք.

Ձեռներիցդ գայ՝ արիւնս կրխմէք:

Ես էլ ոխս քեզանից հանեմ՝ սիրտըս հովացնեմ»:

— Վայ ինձ, յանցանքս ինչ է, աղա, ինչ անեմ:

— Չայնդ կտրիր, փո՛ւճ կենդանի.

Հիմա նստիմ յանցանքներդ համբեմ պիտի.

Քո յանցանքիդ մէկը որն է գիտենալ կ'ուզես.

Այս է ահա, որ քէ՛Քըս կրտայ՝ ուտել, լափել քեդ:

Այս ասաց ու խեղճ գառնուկը քաշեց, տարաւ,

Անտառի մէջ պատառտեց ու կերաւ:

Ձին խելացի կենդանի է: Մարդս նրանից շատ օգուտ-  
ներ է ստանում: Գուք նրան ամենայն տեղ կըտեսնէք՝  
դաշտերում, երբ նա քաշում է արօրը. — ճանապարհնե-  
րում, երբ նա ամենայն ջանք գործ է գնում, որ դառի-  
վայրի տակից վերև հանէ բեռնած սայլը. — ախոռում, երբ  
նա ախորժակով ուտում է գարին. — արօտատեղերում, երբ  
նա ազատ արածում է ջուկի մէջ: Բարի, շաքրաշ, գեղե-  
ցիկ կենդանի է ձին: Ապա մտաբերեցէք, թէ ինչ առանձ-  
նութիւններ էք նկատել նրանում: — Նրա գլուխը երկայն  
է, բայց գեղեցիկ, դնչի ծայրը դուրս ընկած, ականջնե-  
րը մանր են և դէպի վեր են նայում. երբ մի օտարոտի  
ձայն է լսում, կամ երբ քայլերից կամ ձայնից ճանաչում  
է իւր տիրոջը, այդ ականջները խըլշում — վեր են ցցում:  
Ականջների մէջտեղը, ճակատի վրայ, նա մի մաղէ փունջ  
ունի. իսկ նրա գեղեցիկ ու խոշոր աչքերը որքան իմա-  
ցականութիւն են արտայայտում: Ուշադրութեամբ դիտե-  
ցէք և նրա ատամները. առաջից նա ունի թիականման  
կտրողներ, որոնք վեց-վեց են իւրաքանչիւր ծնօտի վրայ.  
սրանցով է նա կծում-կտրում խոտը. իսկ յետին կող-  
մումը նա ունի վեց-վեց հաստ ատամներ վերևից և ներ-  
քևից, որոնք ձիու սեղանատամներն են և այնպէս լայն  
են ու խորզուրորդ, որ կ'ասես ազօրիք լինին. — և իսկ որ՝  
ձին սրանցով ազում-մանրացնում է խոտը, դարմանը, գա-  
րին, որ յետոյ ստամոքսի համար դժուար չլինի նրանց  
մարսելը:

Ձիու պարանոցը կորանում է որպէս կարապինը. պա-  
րանոցի վրայ ունենում է երկար բաշ: Նրա կուրծքը լայն  
է ու դուրս ընկած, իսկ ամբողջ մարմինը կոլորաւուն,

երկարաձև. մէջքին նստելու տեղը տափակ է: Եւ ինչպէս վսեմ, գեղեցկատեսիլ ձիանք են լինում, որոնք արշաւում են այնպիսի թեթևութեամբ, որ շատ անգամ չես իմանում, թէ ինչպէս են փոխում իրանց բարակ ու երկար ոտները: Ձիու յետին ոտներն առաւելապէս ուժեղ են. ում որ նա նրանցով քացի է տալիս, շատ անգամ հէնց տեղն է մնում. գայլերն էլ են վախենում ձիու այդ հարուածից: Ձին ոտի վրայ սմբակ ունի. սա միևնոյն է, ինչ որ մեր եղունգը, այնպէս որ եթէ կտրես նրա ծայրերից, ամենեկին ցաւ չի զգալ: Նա իւրաքանչիւր ոտի վրայ մի եղունգ ունի, նշանակում է՝ մատն էլ մի հատ է: Ձին ընթանալու ժամանակ իւր մատի եղունգը, այսինքն սմբակն է գետնին կպցնում: Էլ հարկաւոր չէ յիշել ձիու գեղեցիկ երկայնամաղ պոչը, որով նա սաստիկ դանազանւում է միւս միասմբակներին:

64. ԷՆՆ ՈՒ ՍՈՒՍԿԸ

Բացուել էր գարուն, սար ու ձոր ծաղկել,  
 Անոյշ հոտն ու հովն ամեն տեղ բռնել.  
 Ամեն աշխարհից, հեռու տեղերից  
 Փախած թռչուններն իրանց բըներից  
 Եկան ողջունել գալուստը գարնան,  
 Մայր ու ձագ նստած թրփերի վրան:  
 Գարկեշտ սոխակն էլ իւր այրուած սրտի,  
 Իւր սիրուն վարդի սէրն ու իւր մտքի  
 Կարօտն ու աշխոյժ բերան բերելով՝  
 Խոր ձորում նստած, վըշտերը լալով,  
 Նայում էր ջրին, իւր վարդի թփին,  
 Սպասում էր որ՝ բացուի սիրելին:

Բայց վարդն անիրաւ մընացել էր փակ.  
 Սոխակի սիրտը դարձել էր կրակ:

Այս դառն ըոպէին սատանի քամին  
 Որտեղից հանեց մեր կորած իշին.  
 Քունըն էր հատել, թէ կերը պակսել,  
 Գայլն էր յետ ածել, թէ տէրը դընքսել,  
 Ականջներն խլըշած,  
 Սարն ի վեր րնկած՝

Վաղեց ու հասաւ, դունչը վրայ բերեց,  
 Անմեղ վարդի թուփն ու կոկոնն բռնեց,  
 Փշրեց ու ջարդեց, արաւ կտոր-կտոր  
 Ու ինքն վայր ի ձոր  
 Գլուխն առաւ գնաց:

Սոխակն այս բանը որ տեսաւ՝  
 Եկաւ  
 Վարդի վրայ կանգնեց,  
 Իւր սուգն սկսեց.

«Աննման իմ վարդ, ցանկալի հոգուս,  
 Մրտիս բերկրանքի ապաւէն ու յոյս,  
 Ինչի դառն օրհաս հանեց քեզ աշխարհ,  
 Երբ ոչ որ գինըդ պէտք է չիմանար.  
 Երկինքն է տեղըդ, ինչի ես մնում  
 Իշի կերակուր այս փըշի միջում.  
 Քանի փուշ ու էշ երկրից չեն պակաս,  
 Մտածում եմ որ՝ անտէր կըմնաս.  
 Կամ այրիը դու ինձ, որ մի օր պըծնեմ,  
 Կամ թե՛ առ, թուչենք, երեսիդ մեռնեմ»:

— Իմ սիրուն սոխակ, մի այդքան ցաւիւր,  
 Կաց մեր միջումը, քո վարդը գովիւր:

էջն աղբի մէջ է առել իւր ծնունդ,  
 Նրբա հոտովն էլ առնում է սնունդ.  
 Քեզ ծառ ու ծաղիկ, քեզ վարդ, մանուշակ  
 Պարզեւէ է Տէրն, իմ ազնիւ սոխակ:

65. Փ Ի Ղ

Փիղը ցամաքային կենդանիներից ամենամեծը և ամենաուժեղն է և հեշտ է ընտելանում: Նա 4—5 արշին բարձրութիւն և 6—8 արշին երկարութիւն ունի. մարմնի ծանրութիւնը 160 փթից աւելի է: Փղի կաշին այնքան հաստ և կարծր է, որ հրացանի գնդակով անգամ գժուար է ծակել: Նրա գլուխը մեծ է և փոքր ինչ երկայն. աչքերը մանր և իմաստալի, ականջները լայն և կախ ընկած: Փիղը վերին ծնօտի վրայ միայն երկու առաջնատամներ ունի. սեղանատամների թիւը զանազան է՝ մէկից մինչև երեք իւրաքանչիւր ծնօտի վրայ: Ժանիքը երկու են, որոնցից իւրաքանչիւրը մինչև մէկ սաժէն երկայնութիւն է ունենում: Բայց սրանք իսկապիս ժանիք չեն, այլ արու փղի երկարացած ատամները, որոնք շատ թանգ են և վաճառում են փղոսկր անունով: Իսկական ժանիքներ փղերը չունին, որպէս և միւս խոտաճարակ կենդանիները, և սրանով նրանք զանազանում են իրանց ցեղակից ամենակեր խոզից: Փղի ոտները հաստ են և իւրաքանչիւրի վրայ կայ հինգ կճղակ: Սակայն նրա մարմնի ամենահետաքրքրական մասը կնճիթն է, որ նրա քթի շարունակութիւնն է և չափազանց շարժական: Կնճիթը մի սաժէնից աւելի երկարութիւն ունի և ընդունակ է սեղմուելու, կարճանալու, երբ ինքը կամենայ: Կնճիթը նրա համար մի այնպիսի գործածական և կարևոր անգամ է, ինչպէս մեզ համար մեր ձեռքը: Նրանով փիղը կարող է

վերցնել գետնիցը թէ ամենամեծ և թէ ամենափոքր բաները. փիղը իւր կերակուրը նրանով է տանում բերանը. նրանով կարող է պարանի կապը լուծել, փակած դուռը բանալ և կրկին փակել, շիշերի խցանները դուրս հանել և այլն: Բացի այդ յատկութիւններից, կնճիթը սաստիկ ուժեղ է և նրա մի հարուածովը փիղը հեշտութեամբ կարող է մարդ սպանել: Նրանով մինչև հինգ փութ ծանրութիւն բարձրացնում է գետնիցը. իսկ իւր մէջքի վրայ 50—100 փութ ծանրութիւն կարող է տանել. նա վեց ձիու ոյժ ունի: Երբ փիղը գնում է սովորական ընթացքով, ձին սրընթաց միայն կարողանում է նրա յետևից հասնել. բայց փղերը կարող են նաև արշաւել և լաւ են լողում: Փղերը բնակւում են մեծամեծ խմբերով, երբեմն մինչև 400 հատ միասին: Նրանք տաք կլիմայի կենդանիներ են: Փղերը չափազանց երկարակեաց են և ապրում են մինչև 200 տարի: Նրանք կերակրւում են բոյսերով, ուստի շատ անգամ մեծ վնասներ են տալիս այն դաշտերին, ուր բրինձ է լինում ցանած: Ընտանի փղերի պահելը մեծ ծախս է պահանջում. միջին թուով նրան օրական փութ ու կէս բրինձ են տալիս և այդքան էլ խոտ կամ տերև:

Ընտանեցրած փղերին մարդիկ գործ են գնում զանազան բաների համար, օրինակ՝ բեռն են բարձում, նրանցով որսի են գնում. իսկ Հնդկաստանում նրանց վրայ բարձում, ման են ածում զօրքի թնդանօթները: Հին ժամանակ փղերին պատերազմների ժամանակ ևս գործ էին ածում: Փղերին սայլերում չեն լծում, այլ առհասարակ նրանց մէջքի վրայ փոքրիկ տուն են շինում և մէջը նստած՝ ճանապարհորդում են: Նրան քշելու համար գլխին նստում է փղապանը և սուր մուրճով գլխին լսրփում է, որ երթայ: Փղապանի բոլոր իրաւացի պահանջ-

ները փիղը խոնարհաբար կատարում է և առանց բարկութեան կրում է արժանի պատիժը, բայց անիրաւացի և խիստ վարմունքի համար սաստիկ վրէժխնդիր է լինում: Մի ճանապարհորդ սլատմում է, թէ մի անգամ փղապանը՝ փղի վրայ նստելով, կոկոսի պինդ ընկոյզները իւր հաճոյքի համար կոտրում էր և ուտում: Կենդանին համբերութեամբ տանում էր սաստիկ ցաւը, բայց միևնոյն օրը, փողոցից անցնելիս, փիղը կանգնեց կոկոսի ընկոյզի կոյտի մօտ, կնճիթով վեր առաւ նրանցից մինը և այնպէս զարկեց նրանով իւր քշողի գլխին, որ նա մեռած վայր ընկաւ գետին:

66. ՓԻՂԸ ԵՒ ՔՈԹՈԹԸ

Մէկ փիղ առած ման կ'ածէին,  
 Փողոցներից անցընելով.  
 Յանկարծ քոթոթ մի կուռասէր  
 Վրայ վազեց խիստ հաջելով:  
 «Չայնդ կտրէ, դրացի եղբայր,  
 Ասաց գամփուր մեր քոթոթին,  
 Չես տեսնում որ ծաղր եղար  
 Բոլոր շների դու առաջին:  
 Դու ո՞վ ես և փիղը ո՞վ.  
 Ահա քո հեքդ է բռնըւում,  
 Իսկ նա հանդարտ և անխրոով,  
 Հաջելուդ էլ ուշք չի դրնում»:  
 — Հա՛-հա՛-հա՛-հա՛... դու չիմացար,  
 Պատասխանեց մեր քոթոթը,  
 Ու իմ միտքս չըհասկացար.  
 Հեռուից կանչեմ-կուռեմ հետը,  
 Որ մեծ բանի մէջ երևամ,  
 Ուրիշներին էլ ասել տամ.

«Տեսէ՛ք՝ քոթոթն ինչպէս քաջ է,  
 Որ փղի դէմ էլ կրհաջէ»:

67. ԱՌԻԻԾ ԵՒ ՎԱԳՐ

Առիւծը, որին իւր վսեմ տեսքի, սաստիկ ոյժի և զարհուրելի ձայնի համար զազանների թագաւոր են կոչում, սովորապէս մութ դեղին գոյն ունի. նրա մարմնի երկայնութիւնը մօտ երեք արշին է, իսկ բարձրութիւնը—արշինուկէս: Նրա ձէտը երկար է, ծայրը փնջամազ. սլարանոցի վրայ ունի երկար, թաւամազ բաշ. էգ առիւծը բաշ չունի: Առիւծը բնակւում է Աֆրիկայում և հարաւային Ասիայում: Ամենամեծ առիւծները Պարսկաստանում են գտնւում: Առիւծը միևնոյն ժամանակ վեհանձն է. նա, ինչպէս ասում են, միայն քաղցած և բարկացած ժամանակն է մարդուս վրայ յարձակւում. իսկ միւս կենդանիների վրայ յարձակւում է ո՛չ միայն քաղցած, այլև կուշտ ժամանակը: Առիւծի ոյժը ցոյց տալու համար բաւական է ասել, որ նա մի թաթի հարուածով կարող է ձիու ողնաշարը կոտրել և եզանը գրկած փախցնել, ինչպէս փախցնում է գայլը գառանը: Նա առաջ է գալիս մեծապանծ և իւր որսի վրայ յարձակուելիս՝ չորս սաժէնաչափ ցատկումներ է անում: Ահա թէ ինչ է պատճառը, որ երբ անապատի մէջ, կէս գիշերին, առիւծի մռնչիւնը ամպի նման որոտում է, բոլոր կենդանիները, նաև մարդը, շտապում են թազնուել:

Վագրը կենդանիներից ամենազարհուրելին և ամենաչարն է: Նա ունի դեղնակարմիր գոյն, սև շերտերով: Վագրը առիւծից քիչ փոքր է, բայց չափազանց ճարպիկ է և արագաշարժ. նա ահագին ցատկումներ է անում և յարձակւում է ամենատեսակ կենդանիների վրայ, առանց

զանազանելու և մարդուս, ոչ միայն իւր քաղցած, այլև կուշտ ժամանակը: Ուժի կողմից վագրը պակաս է առիւծից, բայց յանդգնութեան կողմից նրանից գերազանց է:

68. ԼՈՒՄՆԱՅԱՋ

— Մայրիկ, ինչո՞ւ մեր Բողարը

Միշտ հաջում է լուսնի վրան.

Մի՞թէ պայծառ լուսնեակը

Մէկ վնաս է տալիս նրան:

«Ո՛չ, որդեակ իմ, ոչ թէ վնաս,

Այլ լոյս, միայն լոյս է տալիս.

Իսկ շանն, իբրև գայլի ցեղի,

Լոյս գիշերը դուր չէ գալիս»:

— Բայց լուսինը խօս չըզիտէ,

Որ իւր վրան հաջողներ կան.

Նա լուռ ու մունջ, բակ բոլորած,

Ջարունակում է իւր ճամբան:

«Մարդն էլ, որդեակ, լուսնի նրման

Պէտք է լոյս տայ մութ աշխարհին

Եւ համարէ, թէ չի լսում

Իւր վրբայ գուր խօսողներին»:

69. Վ Ա Ն Ի Կ Ա Տ Ո Ւ Ն

1. Չատերն են լսել Վանի կատուի մասին, բայց քրչերն են տեսել և շատ քչերն են ուսումնասիրել նրան: Այդ կատուն շատ սիրուն է, բրդոտ, զեղեցիկ, կլոր գլխով ու փայլուն, սիրուն աչքերով. նրա բուրդը փուռում է մինչև ոտները և մարդս ախորժանքով է շոյում այդ խիտ, մե-

տաքսանման մագերը: Իմ հօրաքոյրս մի այդպիսի կատու ունէր և այդ կատուն մի օր երկու ձագ բերաւ:

2. Մենք նրան գտանք պառկած և ձագերին իւր զրկի մէջ ամփոփած: Չատ սիրուն էին այդ ձագերը, բայց այդ օրը նրանք չէին շարժւում և մայրը լիզում էր նրանց: Ես կամեցայ խաղալ նրանց հետ, հեռացրի մօրը և ձեռքս առայ միայն երկու խեղդած կատուի ձագեր... Որքան ցաւեցինք... Մայրը մօտեցաւ ձագերին, լիզեց, շարժեց նրանց և երբ տեսաւ, որ չէին շարժւում, մի քայլ հեռու գնաց, մեզ նայեց: Մենք շոյեցինք նրան: Նա կրկին մօտեցաւ, լիզեց իւր ձագերին և ես նկատեցի կատուի աչքերում արտասուքի կաթիլներ... Խեղճ ձագուկներ, արու կատուն էր խեղդել նրանց: Մայրը հանդարտութիւնով մեզ նայեց և դուրս գալով անհետացաւ:

Հօրաքրոջս մանուկները մի փոս փօրեցին և ձագուկներին թաղեցին:

3. Այդ օրը կատուն չերևաց այլևս. ես շատ փրճառեցի, բայց չգտայ: Միւս օրը առաւօտեան նկատեցի, որ մի մոխրագոյն, գրգռված կատու կանգնել է այնտեղ, որտեղ թաղեցին խեղդուած ձագուկներին: Չար, անզուժ կատու: — Դա ձագուկների խեղդողն էր: Աչքս դարձրի և միքանի քայլ հեռու, ծառի տակը, կժկուած տեսայ ձագերի մօրը, որ սարսափելի աչքերով արուին էր նայում: Արուն նկատեց այդ, երկու ոստիւն գործեց և յետ փախաւ: Էզր վագեց նրա յետևից և երկունն էլ անհետացան: Ես յետ դարձայ, բայց լսելով կատուների մլաւոյը, բարձր նայեցի և տեսայ, որ արուն ու էզր՝ միմեանց դէմ կանգնած, մլաւում էին՝ խօսում էին: Նրանք առաջ մեղմօրէն էին մլաւում. երևի էզր հաշիւ էր պահանջում արուից նրա արած անզութեան համար: Արուն արդարանալ աշխատեց: «Ո՛չ», դողաց էզր կատաղի մլաւունով. «դու անզուժ

ես», ասում էր այդ մլաւոցը: «էլ չեմ անիր», դոչում էր արուն յանցաւորի ձայնով և պոչը շարժելով... էզը մեղմացաւ, մլաւուններն էլ մեղմացան և երկուսն էլ ցած իջնելով՝ բաժանուեցին:

4. Զատ տխուր էր փիսօն իւր ձագուկներին զրկուելու համար և երբէք հաց չէր ուտում: Ես խնդրեցի մեր զրացուն և նա տուաւ ինձ իւր կատուի ձագերից մէկը, որին ես զրի մեր կատուի առջևը: Նա նայեց ձագուկին տխուր աչքերով, միքանի բոպէ մտածեց, և յետոյ գրեթէ ակամայ, բերնով վերցրեց նրան և, տանելով իւր բնակարանը, սկսեց թոյլ-թոյլ լիզել նրան. նա թէև հասկացել էր, որ իւր ձագուկը չէ այդ, բայց որդեգրեց նրան:

Մեր փիսոյի կաթը կտրուել էր և մենք ձագուկին ոչխարի կաթն էինք տալիս:

5. Հօրաբրոջս մօտ նստած, մի կիւրակէ օր, խօսում էինք, երբ նրա որդին իմաց տուաւ, որ արուն կրկին ձագուկին խեղդել է: Մենք դուրս վազեցինք և մտանք կատուի մօտ... Փիսօն այս անգամ լաց չէր լինում. նա կատաղի աչքերով չորս կողմը նայեց և դուրս թռաւ սենեակից: Այս անգամ անգութ արուն ուղղակի ձագուկի գլուխը բաժանել էր մարմնից: Մենք դուրս գնացինք սենեակից և այնտեղ մի սարսափելի տեսարան ներկայացաւ մեր առջև: Մեր փիսօն բռնել էր արուի կոկորդից և խփում էր նրան պատէպատ, խռպոտ մռնչիւններ արձակելով... մի կատարեալ փոքրիկ առիւծ էր դարձել... Զոր արուն ոտներով աշխատում էր վիրաւորել մեր փիսոյին, բայց նա սաստիկ արագութիւնով նրան պատէպատ խփեց, մինչև որ արուն շունչը փչեց. յետոյ էզը թող տուաւ նրան, մի բաւականութիւն արտայայտող աչքերով մեզ նայեց և իւր սուր ճանկերը կրկին մխեց արուի կոկորդի մէջ. ապա

յետ քաշուելով՝ կանգնեց և սկսեց նայել, թէ ինչպէս արուն կրում էր իւր արժանի պատիժը...

70. ՄՈՒԿՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

«Ընկել եմ ճանկըդ, դէհ ուտում ես՝ կեր, էլ ինչ ես խառնում իմ դառը ցաւեր. Գիտեմ որ իմ վերջս այսօր է հասել, Խեղճ ձագս էլ բընում անտէր մնացեր. Ասաց մի խեղճ մուկ անիրաւ կատուին, Որ ճանկել նըրան՝ զըրել էր տակին: —Միթէ ուտելն է մենակ իմ ուզած, Պատասխան տուեց կատուն բարկացած. Ամեն մի ձայնըդ, քաղցը ծվծրվոցդ, Որ ես լըսում եմ և թուլնալըդ տեսնում, Միրտս այնպէս է բացւում ու ցնծում, Որ կարծում եմ թէ նոր կեանք եմ մըտնում»:

71. ԿՆՆԴԱՆԻՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ

Չունը հաջում է. քածը կաղկանծում է. գայլը ոռնում է. էջը գոռում է. ձին խրխընջում է. ոչխարը մայում է. կովը ըառաչում է. փիղը գոչում է. խոզը խոնչում է. արջը մըրթմըրթում է. առիւծը մոնչում է. եղնիկը խորդում է. ազուէսը դողանջում է. վագրը խոնչում է. կատուն մլատում է. գորտը կոնչում է. ազուաւը կուտում է. արծիւր կառաչում է. արաղաղը երգում է. սիրամարզը ծչում է. հաւը կարկաչում է. սագը ոնգում է. օձը սուլում է. աղաւնին մնչում է. տատրակը գուրգուրում է. թութակը խօսում է. ճնճղուկը ծոտողում է. բուն աղաղակում է. սոխակը դայլայլում է. ճանճը ըզգում է. միայն մարդն է, որ իր միտքը յայտնում է խօսքերով:

# ՀԱՏՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ

ՊԱՏԿԵՐՆԵՐ ՀԱՅԿԵԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ԵՐ ԱՐԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

## 72. ՀԱՅԻ ԳԵՐԳԵՍՏԱՆԸ

Գ... գիւղի վերի թաղումը մի տուն կար՝ բոլորովին հեռու միւս աներից: Այդ տան չորս կողմովը բաւականին բարձր ցանկապատ էր քաշած, որ պարսպի ամրութիւն ունէր և, ինչպէս ասում են հէքեաթներումը, ծիտն իրան թևովը, օձը իրան պորտովը չէր կարող դրա վրայով ներս թափանցել: Ժամանակով մեծ տուն էր այդ տունը: Մի-անգամից ութ-ինն օրօրոց էր օրօրում այդ տանը, չորս-հինգ թորոն հաց էր թխում Աստուծու օրը: Երկու դու-թան էր դուրս դալիս այդ տանիցը. վաթսուն դուլս կով ու դոմէշ էր կթում. սուրճով ոչխարներ, ըղրակներով խոզեր, իլխներով ձիաներ էին պահում: Այդքան ապ-րանքի կառավարութեան համար ոչ մի վարձկան ծառայ չունէին: Տասն եղբայր էին որդոց ու թոռանց տէր, որոնց թիւը հասնում էր եօթանասունի, Բայց երբէք չէր պատահում, որ դրանք ամենքը երբեքից միասին մի սուփ-րի վրայ դանուէին, միասին իրանց նահապետի չորս կող-մը ժողովուէին: Քանիմի հողի տարուայ մեծ մասը սա-րերումն էին անց կացնում, որովհետև ոչխարներ էին

պահում. միքանիսը որպէս տաւարած՝ դոմերումն էին մնում, որ մի օրուան չափ հեռու էր գիւղիցը. մնացած-ներն էլ հեռաւոր դաշտերում վարուցանելով էին պա-րապում: Թէպէտ սրանք այսպէս միշտ տանից հեռու էին մնում, այնուամենայնիւ իրարու կարօտ էին քաշում և իրարու հետ սիրով կենում:

Ահագին մեծութիւն ունէր այդ տան շինութիւնը և, եթէ այդպէս շէն չլինէր, մտնողի վրայսարսափ կըբերէր, ինչպէս որ հէքեաթներում ամայի տունը սարսափ է բե-րում մտնողի վրայ, մանաւանդ նախապաշարուած գիւ-ղացու վրայ: Հարիւր երեսուն տարեկան էր՝ որ մեռաւ, այս տան վերջին նահապետը և ինքն ականատես էր իր բոլոր ժառանգների և հարստութեան կարճ միջոցում ոչնչանալուն, բայց Աստուծուն փառք տալը իւր բերանից չպակասացրեց մինչև մահը: Յակովբ էր նրա անունը և միշտ միտս էր ձգում Հրէից Յակովբ նահապետին: Չատ անգամ եմ համբուրել նրա ձեռքը և նա ինձ օրհնել է: Նրա օրհնութիւնը մեծ տպաւորութիւն էր գործում իմ մանակական սրտի վրայ: Սուրբ էր համարում դրանց օջա-ղը և սովորութիւն կար գիւղի մէջ, որ նորապսակ հարս ու փեսաներին, եկեղեցուց դուրս բերելուց յետոյ, կըբե-րէին դրանց օջաղը համբուրելու: Չորում էին նորապսակ-ները և ծերունագարդ Յակովբի օրհնութիւնն՝ ստանալով՝ գնում էին, իրանց մուրագին հասնում:

Ընդգծած ըբառերի տեղ հայերէն ըբառեր դրէք:

## 73. ՍԻՐԱՍՈՒՆ ԾԱՂԻԿ

Ես իմ սիրած չքնաղ ծաղկին նայեցի  
Եւ իմ աչքին բացուեց գիւթիչ մի աշխարհ.

Տեսայ հովտում սպիտակ տնակն հայրենի,  
Չուրջը փռուած մարգագետին ծաղկավառ:

Եւ ես նստած այդ տնակի դռան մօտ  
Գլոււմ էի կըրծքիս սեղմած մանուկին.  
Իսկ դու իբրև գաւակասէր մայր գըթոտ,  
Ժըպտում էիր, ո՛վ իմ քաղցրիկ ամուսին:

Բայց ասո՛ւ նա թոշնեց խղճուկ իմ ծաղիկ,  
Ռհ, էլ գուր եմ դարձեալ նայում ես նըրան...  
էլ չեմ գտնիլ ես այդպիսի քնքուշիկ  
Մի այլ ծաղիկ. նա մենակ էր աննման:

74. Մ Ե Ծ Ն Ա Ն Ը

Այն անդամը, որ ամենից աւելի նախապատիւ է համարուում գերդաստանի մէջ և ամենքի վրայ իշխումէ, սովորաբար հայր է կոչուում: Այդ անունի վրայ է բոլոր տան բեռը, հոգսը, սնուցանելու և հագցնելու ծանրութիւնը:

Մի այդպիսի անուն էլ կայ տան մէջ, որ քանի այս հայրը կենդանի է, նա երկրորդական դեր է խաղում, իսկ սրա մահից յետոյ՝ անմիջապէս միահեծան տէր է դառնում, իւր վրայ է առնում ամբողջ գերդաստանի սանձը և վայելում է ընդհանուրի յարգանքը:

Այս անձը մայրն է. սա այն անձն է, որ կարծես իւր ամուսնու մեծ կորուստից յետոյ՝ մի մխիթարական վարձատրութիւն է գտնում:

Այս կինն է, որ կրում է իւր վրայ՝ նանի, ազի, մեծ-նանի յարգելի մականունները, և զբա մէջ էլ կենդրոնացնում է իւր անպայման իշխանութիւնը, մանաւանդ եթէ դեռ ևս կայտառ և առոյդ է նա: Այդ օրուանից՝ առանց

նրա տնօրինութեան և խորհրդի ոչինչ բան չի կատարուիլ: Ո՛չ միայն իգական սեռը, ո՛չ միայն տան փոքրիկները, նրա կատարելահասակ որդիքն էլ առանց նանի կամ մեծ-նանի ոչինչ գործ չեն բռնիլ: Թողնենք մի յարկի տակ ժողովուած անբաժան եղբայրները, որոնք ամեն երեկոյ մանրամասնօրէն հաշիւ կըտան իրանց մօրը բոլոր կատարած գործողութիւնների համար.— բաժանուած և անհամաձայն որդիքն էլ առանձնապէս իրանց մօրը կը հաղորդեն իրանց անելիքը և կըլսեն նրա տուած բարի խորհուրդները:

— «Գնամ, նանիս հարցնեմ, օրհնէ այս իմ նոր գործը, որ Աստուած էլ յաջողի»:

Իւր որդոց բաժան ժամանակը նանը ապրում է նրանցից մէկի մօտ, որ աւելի կարօտութիւն ունի իւր հսկողութիւններին, որի երեխայքը մանր են, կամ կինն աւելի պատանի ու անփորձ է. բայց և այնպէս նա լիակատար իրաւունք է պահում և իւր բոլոր որդոց տները իւր սեպհականութիւնն է համարում: Ժամանակ-ժամանակ մտնել, կարգադրել, բարեկամներին հիւրասիրել, կերակրները եփել ու առանց իւր հարսին հարցնելու բաժիններ ուղարկել իւր միւս որդոցը կամ ամուսնացած աղջիկներին ու մօտիկ չքաւոր հարեաններին,— այս ամենը նա կատարում է ամենայն իրաւամբ: Այդ ինքնիշխան կինը շատ լաւ գիտէ, որ իւր համեստ հարսին հաճելի չէ իւր արարքը, բայց ո՛ւմ ինչ. հարսն ինչպէս կը յանդգնի, քանի սկեսուրը զըլխին պարտում է, տանտիկնութեան իլաւունքների մէջ մտնել: Այսօր նա մեծ-նանն է, քանի որդի ունի, այնքան էլ տուն ու օջախ ունի, այնքան էլ շերեփ կայ ձեռքին:

Այսքան ահա մեծ է ամուսնու մահից յետոյ նրայրի կնոջ յարգը:

Եթէ ներկայումս փոքր առ փոքր ընկնում են այս

նահապետական սովորութիւնները, հարսներն աներեսա-  
նում են, որդիքը մօր վրայ դռում, նրան մարդատեղ չեն  
գցում, հին ժամանակներումն այդպէս չէր. հին ժամանա-  
կը Աստուծու կրակը կըթափուէր այդպէս անողների  
գլխին:

Մեծ նանին ոչ թէ միայն հարազատ որդիքն են լսել,  
այլև երեք-չորս հօրեղբօր-որդիք իրանց զաւակներով,  
թոռներով ու ծուռներով նայել են այդ ժրաջան տան-  
տիկնոջ ձեռքին: Քառասուն, յիսուն, վաթսուն, մինչև  
ութսուն հողի մի ընտանիք են կազմել և այդ փոքրիկ  
գիւղի ամբողջիւնը, պնդակազմութիւնը, ներքին կապը  
մեծ-նանն է եղել. նա է իւր ձեռքովն ամենքին իւր ար-  
ժանաւորութեան համեմատ բաժին տուել ու նրա արածի  
վրայ ոչ ոք չի տրտջացել:

75. ԳԻՒՂԻ ԺԱՄԸ

Տան-դօ, տան-դօ... Նազրու, վեր կաց,  
Արևն արդէն մայր է մտնում.  
Տես, Խաթունն էլ գործը պրծած՝  
Փողոցումն է՝ ժամ է գնում:  
Ժամը տուին—տան-դօ, տան-դօ...  
Տէր, փառքըդ շատ... տան-դօ, տան-դօ...

Չուտով նախիրն հանդից կըգայ.  
Գնանք, որ էլի շուտ յետ գանք.  
Կովը կըթենք, թը՛ռ-թը՛ռ կաթ տայ,  
Կովը կըթենք, մեր ցաւն հոգանք...

Ա՛խ, նազրու ջան, չես իմանում—  
էգուց էլի աղան կըգայ.

Նրբա սիրտը միշտ անկշտում,  
էլի ամպի պէս պիտ' գոռայ.  
— «Չուտով, Գրիգոր, փողերը բեր...  
էլի չըկայ. կ'ովրդ հանիր»...  
Ա՛խ, նազրու ջան, այն ինչ բան էր.  
Միտդ է հերու... Տէր, Դու փրկիր:

Հայրիկդ արդէն գնացել է,  
Որ փող ճարէ. երբ պիտի գայ.  
Տեսնենք մէկը խըղճացել է...  
Ա՛խ, սև օրը Տէրն էլ չըտայ:  
Չուտով, նազրու, գնանք ժամը,  
Աղօթք անենք. քո ձայնն Աստուած  
Չուտ կըլսի— այս անգամը  
Մեզ չի թողնիլ անկով, անհաց...

76. Գ Ր Ի Ջ Ա Կ

Նահապետական պարզ սովորութիւններն օրըստօրէ  
անհետանում են. բարեկամութիւն, հարեանու-  
թիւն սուրբ բառերն իրանց նշանակութիւնը միմիայն  
քաղաքավարութեան ձևերի մէջ են պահում. էլ չկայ այն  
ընտանեկան կապը, որ օտարներին միմեանց հետ մի  
տան պէս պահում էր. խոր գիւղերումը որպէսեկիցէ այժմ  
էլ կըտեսնես նախկին քաղցրութեան ստուերը, իսկ քա-  
ղաքներումն ու մեծամեծ գիւղերումը՝ երբէք: Մի ան-  
մխիթար ապագայ է գուշակում մեզ այս բանը:

Սրանից քսան կամ քսանուհինգ տարի առաջ, իմ լաւ  
միտքս է, մեր գիւղերումը երկու դրացի մի տան պէս  
էին ապրում. մի առած ունէին, որ պատգամի նման ըն-  
դունուած էր ամենքից. «փոխը եօթը տուն է պա-

հեր: Այս առածի սուրբ նշանակութիւնն ամենքին լաւ յայտնի էր. պատէպատ հարեանները եղբօր նման միմեանց կարիքին հասնում էին: Ինչպէս այսօր՝ ես յիշում եմ ռըիջակը, որ բացած էր մեր և մեր պատկից դրացի Ազատենց պատի մէջ: Սա մի փոքրիկ թափանցիկ պատուհան էր երկու հարեանների միջապատումը շինած. ո՛չ վարագոյրն էր ծածկում այդ պատուհանը և ո՛չ մի զգալի արգելք խափան էր լինում ականատես լինել միմեանց տան զաղտնիքներին, այլ մի բարոյական զգացմունք էր, որ հաստ պատի նման փականք էր դնում զրիջակի վրայ, այն է՝ ամեն մարդ սուրբ պարտականութիւն էր համարում զրիջակը գործ դնել կարեւոր ժամանակը միայն՝ ճրագ ուզել միմեանցից, կերակրի բաժին տալ իրար, քաղցը զրոյցներ անել պարապ միջոցները, մէկ մէկու նեղութիւնին օգնութիւն հասնել. ահա ինչ էր զրիջակի նշանակութիւնը: Ընդհակառակն՝ աններելի յանցանք էր, եթէ մինը չար դիտաւորութեամբ ձգտէր իւր զրիջակից դրացու տան գաղտնիքն իմանալ. եթէ որպէսեւիցէ դիպուածով նա տեղեկանար զրիջակովը իւր հարեանի տան որեիցէ ընտանեկան խորհրդին, նա պատրաստ էր իւր լեզուն բնիցը պոկել, քան թէ մեղանշել զրացիութեան սուրբ պարտականութեան դէմ:

Այսչափ մեծ էր այն նուիրական փոքրիկ պատուհանի սրբութիւնը մեր պարզ և առաքինի պապերի համար:

«Ո՛րդիք ջան, ձեզ մտտազ, առանց պատը ծեծելու զրիջակովը մտիկ չտաք. ո՛վ գիտէ, ինչ բանի են», զգուշացնում էր մեզ ամեն ժամանակ իմ լուսահոգի մայրը:

Մի կողմից էլ թէև այս զրիջակները շինուած էին փոխադարձ օգնութեան նպատակով և կամ, գուցէ, պարսկական բռնակարութիւնից ազատուելու համար, բայց և միևնոյն զրիջակի միջով երկու սիրով հարեան տանտիկիւններ ազատ միջոցները ժամերով ծնօտները դէմ էին

ապիս զրիջակի քարին և քաղցը զրոյցների մէջ խորասուզում: Կրիջակի միջնորդութեամբ գերդաստանի մայրերը, առանց իրանց ամուսինների ու որդոց համաձայնութեան, խնամի էլ էին դառնում:

77. ՀԱՅԻ ԲԱՐԻԿԵՆԳԱՆԸ

Սրանից երեսուն կամ քառասուն տարի առաջ, բուն քարիկենդանի վերջին շարաթը, Աշտարակի փողոցներովն անց կենալ շէր լինիլ: Ամեն տեղ ուրախութիւն, ամեն տեղ սէր ու խնճոյք. ամեն բարձր կտուրի սեղան փռել — բաց անելը հասարակաց էր. էլ պատանի ու հասակաւոր չկար, էլ երիտասարդ ու միբուքաւոր չէիր ջոկիլ. բոլորը միասին երիտասարդացել, կայտառացել էին: Պապիս պէս պատուելի իշխանները կալերումը լախտի էին խաղում ու հաստ կտաւէ գօտկից ոլորած լախտն այնպէս էին փռուացնում, իրար մէջքի կպցնում, որ մէջքի կաշին վեր էր կենում:

Այսպիսի իրարանցում, այսպիսի գոռում-գոչում եթէ ուրիշ ժամանակ լինէր, ամենքը կրկարծէին, թէ գիւղը կոխեցին, աւար տուին, մօտակայ գիւղերիցն անգամ, գուցէ, օգնութեան գային. բայց հիմա ամբողջ Արագածոտն գաւառն է այդպէս. ինչ պէտք է արած:

«Դէ, հերիք է ջարդուեցինք ծեծուելով, լաւ ալիւր աղցան եղանք, միքիչ էլ վէզ խաղանք. ո՛վ տարուի՝ մէկի տեղակ՝ երկու կաւ զինի բերի»:

Մկսում էին այնուհետև մեր մազով-միրուքով իշխանները վէզը ձեռների մէջ պտըտեցնել և ճժի մէջ շարած ընկոյզներին աչքել:

«Այ գիտի, երանի էր այն օրը, երբ մենք երիտասարդ էինք. միտս է գալիս՝ ես էի ամենքից լաւ խաղացողը», պարծենում էր ամեն մէկը. «քանի տարի կըլինի՝ վէզի սախլէն ձեռս չեմ առել, ի հարկէ որ երիտասարդները մեզ կըտանեն ու մեր կարասի ծեփը կըսկոկու: Պահ, պահ, ձեզ մատաղ ինչ զինի ունիմ. քաղցրութիւնից կծպծում է, կծպծում. սլոօշներդ իրար կըկպչեն. չէ, եղբայր, ես պիտի տարուեմ. թէ որ այսօր մեր ներքիւ այգու գինու համը շտեսնեմ, ձեզ էլ չխմացնեմ, ես կը մտնեմ. էլ ո՞ր օրի համար եմ պահել:

— Տօ, դէ հերիք է, հերիք, միրուքներիցդ ամաշեցէք, այն մանուկներից գոնէ քաշուեցէք. զնանք մենք էլ մի փոքր կոկորդներս թաց անենք. Փարբու խանը հիմա կըզայ:

«Այ տղայ, մարգարէի որդի էիր. ահա Փարբու խանի աղուէսը (համբաւարերը) գալիս է»:

Մէկ էլ այն տեսալ, գլուխը երկար պոշաւոր թաղիքի գդակ անցկացրած, ոչխարի գգգոլած մորթին, բուրդը դէպի դուրս, մէջքին կապած, երեսն ալիւր քսած, մի ահագին կրակախառնի ձեռքին սիւն տալով՝ մէկը եկաւ, խոր գլուխ տուեց մեր իշխաններին:

«Հը՛, ինչ մարդ ես, սով ես, որ աշխարհի քամին է քեզ պտըտել՝ մեր գիւղը գցել», հարցնում է մի ծերունի:

— Խնդիրս առէք, պատմեմ Աշտարակի հասարակութեանը, որ մեր Փարբու տէրը, քաջերի քաջ եղգեար խանը, իւր նախարարներով ու իշխաններով, իւր մեծամեծներով ու ստորադրեալներով՝ հինգ հարիւր մարդու հետ գալիս է ձեր սեղանը շէն անելու, մեր բարեկամութիւնը հաստատ պահելու: Նրա հրամանն է, որ ողջ գիւղը իշխաններով դուրս գայ նրա առաջ:

Մեր գլխի, մեր աչքի վրայ տեղ ունի ձեր խանը,

մենք վաղուց նրա համար օթեան ենք պատրաստել տանուտէրի վերնայարկի կտրին. սեղանը լիառատ, դաթայհալուան հողի պէս. հազար մարդով էլ որ գայ, մեզանից ոչինչ չի պակսիլ: Տղէք, Փարբու աղուէսին մի պարզեքէք», հրամայում էր իշխաններից մինը:

Այս խօսքերն ասելուն պէս՝ մօտիկ տանից մի շարան ալանի (չորացրած դեղձ) էին բերում և ձգում մեր պատգամաբերի վիղը, մէջքին էլ մի քանի լախտ կպցնելով՝ ճանապարհ դնում:

«Էլ ինչ էք ուշանում, գնանք էլի. հիմա կըզայ մեր Ֆրգեարը»:

Գնում էին այնուհետև մեր իշխանները և իրանց համար վաղուց փոռած սփռոցի չորս կողմը շարւում, դա փռու դուռնէն էլ դրանց պոչից կալած էր. ուր գնում էին, հետները տանում էին:

«Եալլա», գոռում են փողոցներումը: «Եալլա», լսում է ամեն կտուրներից. Ամենայն տեղից զիմում են Փարբու խանին, որ գիւղի մի կողմից երևացել էր արդէն:

Այ, հայ-հայ-հայ, այս ինչ շատուր են. ամբողջ գիւղը հետը բերում է տնաշէն եղգեարը: Միայն մեր տանուտէրը, իշխաններն ու տէրտէրը յառաջ չեն գնալ, ինքը խանը պէտք է գայ և նրանց սեղանի վրայ գտնի:

## II

Ուռած-ուռած բազմած է մեր Փարբեցի եղգեարը իշի վրայ՝ երեսը դէպի յետ, մի երկար ճիպոտ էլ միւս ձեռին, իբրև ծխաքարչ զնչին դէմ արած: Նա գլխին դրած ունի պարսից խանի մի գգգոլած երկար գդակ, վրան հին փալաններ փաթաթած. երեսին քսած է աթարով վառուած տան առաստաղի մուր. պարանոցին ձգած

է զանազան ոսկրների կտորներից կազմած մի շարան-  
 Հագած ունի նա մի պատառոտուն, ծլանքները հազար  
 տեղից քաշ ընկած արխալուզ. նրա կուրծքը բաց է և  
 նոյն մրով սևացրած, կողքիցն էլ մի երկար փայտի թուր  
 կախած: Երկու երիտասարդ, նոյնպէս այլանդակ հագ-  
 նուած, քաշում են իշի սանձը. երկուսն էլ յետևիցը մի-  
 մի մեծ, ծայրերը սրած, դաւազանով բզում են իշին.  
 դափ ու զուռնէն ածելով՝ գնում է այդ հանդէսը զէպի  
 տանուտէրի կտուրը, իսկ խուռն ամբոխը շարունակ «եալ-  
 լան» է կանչում:

Եւ ահա խանը, իշի վրայ նստած, մտնում է տանու-  
 տէրի բակը: Աղաղակը սաստկանում է: Կառավարչի հրա-  
 մանով խանի մարդիկը մի ըռպէում բարձրացնում են ու-  
 սերի վրայ խանին և տանում կտուրը: Այդ միջոցին կտրին  
 նստողները առատ ալիւր են թափում բարձրացողներին  
 գլխին: Ծիծաղը, խնդումը, ուրախութիւնն ընդհանրա-  
 նում է:

«Գլուխ, գլուխ տուէք, Աշտարակի իշխաններ, մեր  
 ողորմած խանին», կարգադրում է ընդհանուր կառավարչը:  
 Վեր են կենում ամենքը սեղանի վրայիցը և, իրանց  
 տեղը կանգնած, խոնարհութեամբ գլուխ իջեցնում: Վայ  
 նրան, ով գլուխը մի փոքր ուշ կրկուացնի. ցաքով է անում  
 խանը իւր կառավարչին և բարակ ճիպոտը կաշում է այդ  
 յանդուզն մարդուն:

— Հրապարակ քաշեցէք տանուտէրին և ոտները փալա-  
 խայի մէջ դէք, հրամայում է խանը:  
 Տասը-քսան այլանդակ հագնուած երիտասարդներ մո-  
 տենում են տանուտէրին, պառկեցնում և ոտները փալա-  
 խայի մէջ ոլորում:  
 — Հարցրո՞ւ գրան, հրամայում է խանը իւր նազիրին.

դա քանի գլխանի էր, որ մեր հրամանը չկատարեց, մեզ  
 բանի տեղ չդրեց, մեր առաջը չեկաւ:

«Թողութիւն կ'անես, խանն ապրած կենայ, լնդրում  
 է տանուտէրը պառկած տեղիցը. ես քո մեծութեան հա-  
 մար պատրաստութիւն էի տեսնում այստեղ իմ իշխաննե-  
 րով. տեսնում ես՝ հրամանոցդ համար սուվընէն բաց արած  
 է, վարդի նեկտարը դաւաթի մէջ լիքը պատրաստ դրած,  
 որսահաւը ձողու ծայրին կախ արած՝ որ հրամայես թէ  
 չէ, խորովենք՝ անուշ անես. քո ընծադ էլ, լաւ նայիր,  
 ոտները կապած գառը այստեղ պատրաստ. երբ որ ուզես՝  
 փլաւի գլխին առաջդ կըբերենք»:

— Կեցցես, կեցցես, տանուտէր. տղէք, բաց թողէք  
 դրան:

Առնում է իսկոյն մեր տանուտէրը գաւաթով լիքը  
 քացախը և խոնարհութեամբ մատուցանում խանին:

Չատ լաւ էլ գիտէ բարձրապատիւ խանը, որ նեկտար  
 կոչուածը ոչ այլ ինչ է, եթէ ոչ թունդ քացախ, բայց  
 ոչինչ գէմք ցոյց չտալով՝ առնում է ձեռքը և մօտեցնում  
 բերանին. — «Օ՛խ, ինչ լաւ է շինած. սիրտս հովացաւ.  
 Չատ ծարաւ էի:

— Այ տղայ, հորսը մօտ բերէք, հրամայում է տա-  
 նուտէրը:

Վերցնում են ջահէլները ձողու ծայրին կախած՝ սպա-  
 նած ագռաւը և առաջ բերում:

«Ծանոայ, հրամայում է խանը, վեր կալ այս կարաւը,  
 երբոր մեր երկիրը կ'երթանք, փլաւի գլխին տապակած  
 առաջս կըբերես»:

«Այստեղ բերէք գառը, տնօրինում է տանուտէրը:

Մօտ են բերում ոտները կապած՝ տեփուրի մէջ դրած  
 մը սև կատու, համեցէք անում խանին:

— Այ անպիտաններ, ձեր գառը կատու դառաւ. շուտ,

շնտ կապոտեցէք Աշտարակի բոլոր իշխաններին. բանտի մէջ պիտի փթացնեմ, մինչև որ խելքները գլուխները գայ, նորից կատուն ոչխար շինեն, հրամայում է խանը: Բայց նրա այս հրամանը էլ չի կատարում, որովհետև իսկոյն միև կողմից առաջ է բերում մի մեծ պարարտ որձ ոչխար և գիւղի կողմից ընծայում են խանին: Այնուհետև մասնաւոր անձանց կողմից էլ զանազան ընծաներ ստանալուց և ամեն ընծայ բերողին իւր առաջը չորացնելուց և զանազան խեղկատակութիւններ անելուց յետոյ՝ խանը կամենում է հեռանալ:

«Ջատ շնորհակալ եմ Աշտարակ գիւղի մեծ ու փոքրից. իրանց պատիւն իմ աչքի, իմ գլխի վրայ. այժմ մնացէք բարով», ասում է խանը և կամենում է հեռանալ իւր հանդիսականներով: Բայց ինչպէս կարելի է: Մինչև հիմա արածները կատակ էին, հիմա սկսում է ուղիղ հիւրասիրութիւնը: Խանի հետ եկողները բոլորը պիտի վայելեն Աշտարակեցոց սեղանիցը և պիտի խմեն՝ երկու գիւղին միարանութիւն և յարատեութիւն ցանկանալով և ապա միևնոյն կերպով «եալլա» կանչելով ճանապարհ ընկնեն դէպի մի ուրիշ մերձակայ գիւղ:

78. Բ Ե Ր Ա Ն - Փ Ա Կ Է Ք

Բուն բարիկենդանի կիւրակէ երեկոյեան Աշտարակցիք վերջ զրին երկու շաբաթուան գժութիւններին. ամենքը միմեանց բարի գիշեր ասելով, ուրախ Ջատիկ ցանկանալով, իւրաքանչիւրը մտաւ իրանց յարկի տակը՝ իրանց ընտանիքի հետ Մեծ-պասին գիմաւորելու:

Գիւղումը լուծիւն տիրեց. կերուխումը վերջացաւ. բոլորովին մի հասարակ երեկոյի նմանութիւն առաւ օրը. կարծես թէ այս գիւղի մէջ երկու շաբաթ շարունակ ոչինչ

արտաքոյ կարգի բան չէր պատահել: Այս արտաքուստ էր, մտիւր ամեն մարդու տունը և բոլորովին ուրիշ տեսարան կը տեսնես:

Տան նախանդամը կամ ծերունին, շուրջը առած իւր բոլոր գերդաստանը, շարուել են քուրսու տակը՝ բերան-փակէք անելու:

Այստեղ ահա նահապետական սուրբ աւանդութիւնը պարզ փայլում է. տան նահապետը իւր լիազօր իրաւունքի մէջն է. ամենքը նրա աչքին են նայում, նրանից ակնածում: Իսկ մեր պապը՝ քաղցրութիւնն ու սէրը երեսին, ոչ թէ այս անցեալ երկու շաբաթուան նման աղաղակներով ու հարայ-հրոցներով է գիմաւորում պասին, քաւ լիցի, այլ նա համեստ և զուարճալի բարոյական առակներով, յիսուն օրուայ հիւր եկող Մեծ-պասի վրայ խօսելով, բարիկենդանի ուրախութիւնները գժութիւն համարելով, գովում է պասը:

Մեր ծերունին սրտանց ուրախ է. նա ոչ մի օր իւր չորս կողմն այսպէս հաւաքուած չի տեսել իւր ընտանիքը և մերձաւորները. այսօր նա միայն իւր փոքրիկ գերդաստանի հետ չի սեղան նստել, այլ նա բազմել է այն սեղանի գլխին, որի չորս կողմը համարեա իւր բոլոր մերձաւոր ազգականներն են շարուած:

Բաժանուած փոքր եղբայրներ, հօրեղբօր-որդիք, ամուսնացած աղջիկներ իրանց ամուսինների և զաւակների հետ, բոլորը, բոլորը հաւաքուած են իրանց ազգապետ ծերունու մօտ՝ նրա օրհնութիւնն առնելու, նրա հետ միասին բերան-փակէք անելու:

Ծերունու տանը ոչինչ նոր պատրաստութիւն չի տեսնուելու. ամեն եկող գերդաստան իւր հետ բերում է բարիկենդանից մնացած ուտելիքները և մի կաւ գինի ու խառնում նրանց տան եղածի հետ: Այս երեկոյ վառարան

չպիտի վառուի, պապոնց վառարանից միայն ծուխ պիտի բարձրանայ, այն էլ բերան-փակէքի ձուածեղն աներու համար:

«Աղջկերք, տղայք, հէնց որ կերթար պապոնց, ամեն-բրդ էլ պապի ձեռը պաշեցէք ու ասացէք. «Ջնորհաւոր բարիկենդան»:

Ինչ ուրախութեամբ սերնդի նահապետը գրկում է իւր սիրելիներին և աչքերը դէպի երկինք բարձրացնելով՝ օրհնում է վերին նախախնամութիւնը և աղօթում, որ արժանացնի իրան նրանց մի բուռն հողին:

— Պապի ջան, մի առակ ասես:

— Դէ թող թուշիցդ պաշեմ:

Երեխան թուշը դէմ արեց: Պապը մկան ու կատուի առակը պատմեց:

— Պապի ջան, ինձ համար էլ ասա:

— Դեռ կ'աց, այս մէկը Գրիգորիս համար եմ ասում:

— Պապի ջան, բա ինձ համար:

— Դեռ այս լսիր, աղուէսի ու հաւերի առակն էլ քեզ համար եմ պատրաստել:

— Պապի ջան, բա ինձ համար, աղատ բարձրանում է մի երեք-չորս տարեկան մանուկ, մեծ աղջկայ տղան, պապի ծնկանը նստում ու մօրուսի թելերի հետ խաղում:

Յանկարծ պապը բերանը մօտեցնում է նրան և տտամներով բռնում սիրուն տղայի փափրիկ կուռը:— Ամենքը ծիծաղում և ուրախանում են:

«Իմ կուռն էլ, իմ կուռն էլ, պապի ջան, իմ կուռն էլ կծիր»:

— Զէ, քո կուռը պահիր, ոչխարներ պիտի շինեմ կռանդ վրայ:

էլի երեխաների կշկշոցը տունը բռնում է:

Մեծերն էլ կամաց-կամաց մասնակից են լինում այս անմեղ գուարճութիւններին:

— Էլ քունջ ու պուճախ մի ընկնէք, ինչ ունէք, չունէք, բերէք, մէջտեղը լցրէք ու դուք էլ նստոտեցէք, այս երեկոյ մի հալալ հաց ուտենք, բերան-փակէք անենք՝ էլ սով կենդան, սով մեռած մինչև միւս տարի, հրամայեց պապը ու ամենքը միասին շարուեցան:

— Այ պտաւ, դու այնպէս նստիր, որ կէս երեսդ մեր կողմը լինի, կէսը՝ հարսների. դու երկու ախոռանի ես,— կատակ անելով ասում է պապը իւր կնոջը:

Տղամարդկանց քամակին շարուում են հարս ու աղջիկ և, երեսները միւս կողմը դարձրած, քամակները դէպի տղամարդիկը, ընթրում են:

— Այ կնիկ, այսքան բանը որ մեր առաջն ես լցրել, այդ ջահէլ-ջհուլին ինչ է մնացել,— հողում էր պապը:

— Տօ, ճար կտրածի մարդ, այստեղ այնքան է թափած, որ մի շաբաթ էլ բարիկենդան լինէր՝ չէր հատնիլ մի տես՝ քանի տնուոր ենք. ամեն տանից էլ եկել է մի ասող լինի՝ այսքանը բերում էիր՝ թէ ինչ:

Սեղանի վրայ ևս կարճ-կարճ ծիծաղաշարժ ասացուածներ են լինում:

— Գուք էլ Տօ փոքրիկ հարսներ չէք, յանդիմանում է պապը տղամարդկանցը. մենակ Տօ ես չպէտք է խօսեմ. ինչ էք բերաններդ հուպ տուել. երեւի մի-մի բան էլ դուք կ'իմանաք, ասացէք էլի:

Ուրախութիւնն ընդհանրանում է. արձակուրդ է. պապը հրաման տուեց, ամենքը ինչ սրախօսութիւն գիտեն՝ գործ են դնում:

Հարսներն էլ փառ-փառ ծիծաղում են:

— Դէ, սով խաղ գիտէ, չպահիր:

Ամեն մարդ իւր շնորհքը բանացնում է:

— Դէ, այ կնիկ, վեր կաց, վառարանը վառիր, բերան-փակէքի ձուածեղն արան, հացը վեր քաղենք, երեսայքը մի փոքր ուրախութիւն անեն:

Տանտիկինը մէջտեղ բերեց մի հաստ ձուածեղ: Ամեն մարդ մի-մի պատառ վերցրեց, բերանը դրեց, ծծի երեսաների պռօշներին էլ որդեսէր մայրերը քսեցին և պապը մի երկար օրհնութիւն ու քարոզ սկսեց.

«Տարուան մէջը շատ ուրախ օրեր են գալիս, գնում», ասաց պապը, մի թաս գինի ձեռքին բռնած, «Ջատիկ, Ջրօրհնէք, հինգ նաւակառիք, ես ինչ գիտեմ, որ մինն ասեմ. մենք այդ օրերին էլ ուրախանում ենք, բայց ձմեռուայ տնային գործերի թեթև ժամանակամիջոցին, մեր պապերը սահմանել են բարիկենդանը, որ ամեն աշխատանք թողնենք, ուրախութեան հետ լինենք: Ինչ գօտթիւններ արինք, ինչ կերանք, ինչ խմեցինք՝ վերջացաւ, պրծաւ. յիսուն օր Մեծ-պաս է գալիս, ինչքան որ պարապ օրեր ենք անցկացրել, այս եօթը շաբաթուան մէջ պէտք է փոխարէնը հանենք: Վաղը-միւս օրը աշխատանքի օրերը դուրս կրգան, պէտք է ամեն մարդ իւր Աստուծու անունը տայ, գլուխը քաշ իւր աշխատանքին կենայ, որ Աստուած էլ նրա ճակատի քրտինքն օրհնի, նրա վար ու ցանքին, նրա անդ ու անդաստանին, նրա այգիներին լիութիւն, առատութիւն տայ: Այս երեկոյ ձուով բերաններս փակեցինք, մինչև Ջատիկ շաբաթ երեկոյ, ով ապրի, թող տեսնի, կարմիր ձուով բերան-բացէք անենք: Աստուած այսպիսի ուրախ սրտով, ցամաք աչքով Ջատիկին արժանացնի ամեն հայ-քրիստոնէի, նրանց բաղդիցն էլ ձեզ, իմ որդիք, ձեր զաւակներով, ձեր ընտանիքով: Մ'օտ եկէք, զաւակներս, ամենքիդ էլ համբուրեմ: Բարով դուք էլ իմ տարսը դառնաք, շատ-շատ տարիներ այսպէս ուրախ սեղան բաց անէք, փեսաների, թոռների,

ծուռների տէր դառնաք, ձեր զաւակները կարմիրը կապէք: Այ հարսներ, այ աղջիկներ, շատ ապրիք, հնազանդ լինիք, դուք էլ պառաւիք ու ձեր տատի պէս որդով, թոռնով հացի նստէք. բարով սև օրեր չտեսնէք. ձեր սև օրերն այսօրուան պէս լինեն: Ինձ ու իմ պառաւին էլ ձեր ձեռովը հողը դնէք, որդիք, ձեր մի բուռը հողին արժանանաք: Երկնային Թագաւորիցն էլ խղրել եմ անարժան բերանովս, որ մեզ իւր արքայութեանն արժանացնի. ամէն»:

Անխտիք ամենքը վեր կացան, պապի ու տատի ձեռքը համբուրեցին. սրանք էլ նրանց երեսները պաշեցին և սեղանը հաւարուեց:

79. ՄԵԾ-ՊԸՍԻ ԵՐԿՈՒՉԱԲԹԻ

Մեծ-պասի երկուշաբթի առաւօտը, լուսբացին, ամեն պառաւ տանտիկին տեղիցը շուտ վեր կրկենայ, տան միւս անդամներին կրգարթացնի, տղամարդկանցը ժամ կ'ուղարկի, կնիկարմատներին էլ կըհրամայի պղընձ-կարգը ցած բերել, պասահան կ'անի, ուտիսի հոտը միջից կըկտրի ու իստակ-իստակ լուացած՝ տեղները կըշարի:

— Աղջիկներ, մի սոխ ու եօթը փետուր բերէք, կըհրամայէ տանտիկինը, և սոխի վրայ եօթը փետուր կարգով կըշարի սայլի անիւի ճաղերի նման ու իւր ձեռքով կըտանի, տան երթկից կըկախի:

Եօթը փետուրը պասի եօթը շաբաթն է, ամեն կիւրակէ մի-մի փետուր պիտի քաշեն սոխի վրայից, վերջին փետուրն էլ Ծաղկազարդին կըհանեն և դա նշան է, որ պասը վերջին է հասել, Ջատիկի հոտը փչում է, կարմիր ձուն ներկելու օրերն եկել են:

«Ձեզ մատաղ, աչքներդ երթկին գցեցէք, ասում է

տանտիկինը, սոխը կախելուց յետոյ. շնորհաւոր Մեծ-պաս-  
քարով Զատիկ հասնենք, ուրախ սրտով, ցամաք աչքով.  
պասին շնորհաւորեցէք, տեսէք, թեւաւորուած՝ ոտները կախ  
արեց մեր երթով, ծանր-ծանր նստեց: Բարով պասի փե-  
տուրներն էլ պոկելով տկորացնենք, կեանքը լորի պոչ  
շինենք\*), յետ ամենք—քշենք, վնայ քարափների տա-  
կին թագ կենայ:

Մեծ-պասի երկուշաբթին հայ զիւղացոց համար շատ  
մեծ և նշանաւոր օր է. նրանք Զատիկի պակաս ուրա-  
խութեամբ չեն դիմաւորում Մեծ-պասին. նրանք այսօր  
պաս-շնորհաւորէք ունին:

Առաւօտեան՝ ժամումը «լուացարուք - սրբեցարուք»  
լսելուց յետոյ, ամենքը տնէտուն կ'ընկնեն և միմեանց  
համբոյրներ տալով՝ կըշնորհաւորեն Մեծ-պասը:

Նորափեսաներն էլ, որոնք այս ամեռ պսակուել են,  
այսօր շատ մեծ գործի վրայ են: Սրանցից մինը, Մարու-  
թենց Սահակը, այսօր իւր խաչեղբորն ու փեսեղբորն  
առած, իւր նորափեսայութեան հանդերձը հագած, մի  
կաւ գինի և մը ափսէով չոր միրգ փեսեղբօր ձեռքը տուած,  
գնաց իւր աներանց տուն՝ նրանց պասը շնորհաւորելու:

Մարութենց տանն այսօր մեծ հրաւէր է. նորահար-  
սի համար պէտք է այսօր պասուան բաժինը գար իւր  
մօր ու բոլոր բարեկամների տներիցը. այսօր նորահարը  
պիտի հաւաքէր իւր բոլոր ընկերուհիներին և նրանց հետ  
պաս բռնէր:

Աներոջ ձեռքն ու գորանչի կուրծքը համբուրելուց  
յետոյ, մեր նորափեսայ Սահակը իւր ընկերներով նստեց  
ք ու ըստու վերևի կողմը:

—Այ կնիկ, էլ մի յետացնիր. երեք ժամ մի ծռծռա-

\*) Կարճացնենք, ինչպէս որ լորի պոչը կարճ է:

յնիր, տնօրինեց Սահակի աները. ես գիտեմ, այսօր խեղճ  
փեսայիս քարշ պիտի տաս քո բարեկամների դռներին.  
այնքան ազգ ու ընտանիք ունիս, որ Մողնի դիւղի նախ-  
ըիցը շատ են. մինչև երեկոյ հագիւ կըպրծնեն խեղճ  
տղայքս. բեր սրանց պարզեր:

Սահակի գորանչը բերեց մի-մի գոյգ խորասանու  
նախշուն գուլպայ, դրեց պատուաւոր հիւրերի առաջը,  
խակ փեսային, Զբացի գուլպան, մի բազդադի աղուլս էլ  
վիզը փաթաթեց և թուշը համբուրեց:

—Գէ, հրամայիր, խնամի, խօսեց փեսեղբայրը. տես-  
նենք քանի տուն ենք պաս շնորհաւորէք գնալու. այսօր  
մենք քո սարուկներն ենք, ժայռից էլ որ վայր գցես՝  
լսելու ենք:

—Բարով դու էլ այսօրին արժանանաս, գաւակս,  
օրհնեց նրան Սահակի գորանչը, և սկսեց մէկ-մէկ համա-  
լել մերձաւոր բարեկամների տները: «Ձեզ մատաղ, չմո-  
ռանաք, աւելացրեց նա, թէ չէ մեր ազգականների ձեռ-  
քիցը պրծնիլ չեմ. կ'ասեն՝ Հողակաթը արժան չտեսաւ  
իւր փեսին մեր տուն ուղարկելու»:

—Գու միամիտ կաց, խնամի ջան, մենք ամենքի  
տունն էլ կ'այցելենք, ասաց փեսեղբայրը և միւսների հետ  
դուրս եկաւ, գնաց լինամոնց բոլոր բարեկամների պասը  
շնորհաւորելու:

80. Ս. ՏԱՃԱՐԻ ԴՌԱՆԸ

Սուրբ տաճարի դրոան առաջ

Հիւանդ, մաշուած, սովատանջ

Սպասում էր ողորմութեան

Մի տառապեալ մուրացկան:

Խիսա վըշտահար ու լալագին  
 նա լոկ հաց էր աղերսում.  
 Բայց խարելով ուժ-որ խեղճին՝  
 Մի քար զըրեց նրա ձեռքում:

Այսպէս և ես, տանջուած վըշտից,  
 Խնդրում էի քեզնից լոյս,  
 Բայց դու, աւանդ, խարելով ինձ,  
 Խորտակեցիր իմ սուրբ յոյս:

81. 2ԻՔ-2ՈՐԵՔԶԱԲԹԻ

• 2որեքշարթի գիշերը՝ լոյս աւագ-հինգշարթի, դեռ  
 Ադամայ մուլթը չէր կոխել, Սօսի մայրը ճրագը վառեց,  
 Սօսին անուշ քնիցը վեր կացրեց. «Աեր կաց, ասաց, աւ  
 կացինդ, անխօս գնա՛ մեր պահունի խնձորենու, մեղրա-  
 կենի տկորը ծիրանենու և մեծ մալաչի տանձենու արմա-  
 տին երեք անգամ կացնով տո՛ւր: Այսօր աւագ-հինգշարթի  
 է. ասա՛ պտուղ ես տալիս, տո՛ւր, թէ չէ կտրում եմ:  
 Ահա՛ տասը տարի է երեքն էլ, չգիտեմ աչք է գիպել, թէ  
 ինչիցն է, մի հատ պտուղ չեն տալիս. ողորմած հոգի  
 հայրդ ձեզ պէս աշխատաւոր էր այ. անխօս ամեն տարի  
 այսօր վեր կըկենար, կ'երթար, ծառ չէր թողնիլ, կըտար  
 կացնով: Քանի լուսահողին կենդանի էր, ամեն բարու-  
 թիւններս էլ կար, ինքը մեռաւ, եղած-չեղածն էլ հետը  
 տարաւ»: Սօսը անխօս վեր կացաւ, առաւ իւր ծայրը  
 սողպատած (գօղած) կացինը, կապեց երախակալը փղոս-  
 կրեայ դաշոյնը և մտքումը մի երկու անգամ Աստուծու  
 անունը տուեց ու ծէգաբացին, ո՛չ խէր արած, ո՛չ շառ,  
 եափունջին վրան գցեց ու գնաց հասաւ այգին: Ամենա-  
 փոքրիկ տնկից սկսած մինչև ամենամեծ ընկուզենին՝ ամե-

նին երեք-երեք անգամ գարկեց և ասաց. «Պտուղ ես տա-  
 յիս, տո՛ւր, թէ չէ՛ կտրում եմ»: Յետոյ միտքն ընկաւ, որ  
 այսօր եթէ վայրենի դաղձը (անանուխ) ճմբով հանես և  
 շուռ տուած—արմատները դէպի-վեր տնկես, կըփոխուի,  
 ուեհան կըդառնայ: Այս պատճառով էլ գնաց միքանի  
 ճումբը կտրեց դաղձալի տեղերիցը, բերեց, միքանի տե-  
 ղում շուռ տուած տնկեց, որ ուեհան դառնայ: Երբոր  
 տեսաւ, թէ փոքր է մնացել, որ առաւօտեան ժամը տան,  
 այն է՝ ծէգծէգոտում է, յետ դարձաւ տուն:

82. ՎԱՅՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂԵՐ

«Հայրիկ, ասաց դուստրը հօրը,  
 Գապոյտ երկնքի վըրայ  
 Ռ՛րքան աստղեր փայլում են վառ.  
 Ասես համար, թիւ չըկայ:

Ասում են որ ամենայն մարդ  
 Աստղիկ ունի երկնքում.  
 Ճշմարիտ է, ասա՛, հայրիկ,  
 Իմը ո՞րտեղ է փայլում»:

—Այո՛, դատրիկ, այդ աստղերը  
 Ունին հաշիւ ու համար,  
 Եւ մեզանից իւրաքանչիւրն  
 Մի աստղ ունի իւր համար:

«Հայրիկ, տես, տես, աստղ թըռաւ,  
 Հետքից պայծառ գիծ թողեց.  
 Աստղիկն ընկաւ երկնքիցը,  
 Միւս անգամ էլ չերևեց»:

—Ո՛վ իմ դատրիկ, հանգիստ կացիր,  
 Դա մեծատան մի աստղ էր,  
 Որ իւր օրում, իւր կեանքումը  
 Խիղճ ասածը չըզիտէր.  
 Ազբատները նըրա զոնից  
 Գիշեր-ցերեկ հալածուած,  
 Մի մարդ չըկար նըրան ծանօթ,  
 Որ չըլինէր վըշտացած:

«Հայրիկ, տես, տես, աստղ թըռաւ,  
 Հետքից պայծառ գիծ թողեց.  
 Աստղիկն ընկաւ երկնքիցը,  
 Միւս անգամ այլ չերևեց»:

—Ո՛վ իմ գաւակ, մի վըզովուիւր,  
 Դա աղջըկայ մի աստղ էր,  
 Որ խրատը իւր հօր ու մօր  
 Իւր կեանքումը յարգած չէր.  
 Նա փախել էր իրանց տնից...  
 Մուր էր քըսել տան վըրայ...  
 Իւր ծընողքը լացացրել էր,  
 Ինչքը վատնել անխընայ:

«Հայրիկ, դարձեալ թըռաւ մի աստղ,  
 Վայը ընկաւ նա երկնքից.  
 Հայրիկ, ո՞րի աստղն էր արդեօք,  
 Որ գըրկուեցաւ իւր տեղից»:

—Ո՛հ, դատրիկս, հանգիստ կացիր,  
 Կեղծաւորի դա աստղ էր,

Որ իւր օրում ուղիղ մի խօսք  
 Մարդու երբէք ասած չէր:  
 Փարիսական իւր ձևերով  
 Աշխարհ խաբեց, զարմացրեց,  
 Այդ պատճառով Աստուած նըրա  
 Աստղի լոյսը խաւարցրեց:

«Հայրիկ, տես, տես, մի աստղ թըռաւ,  
 Եւ գիծ անգամ չըթողեց.  
 Աստղիկն ընկաւ երկնքիցը,  
 Միւս անգամ այլ չերևեց»:

—Ո՛հ, սիրական, խաղաղ մնա,  
 Բռնակալի դա աստղ էր,  
 Որ աշխարհը իրան գերի  
 Ծնած օրից կարծել էր.  
 Հատ հալածանք, շատ նեղութիւն  
 Պատճառեց նա իւր կեանքում.  
 Հատ տուն քանդեց, շատ մարդ զըրկեց,  
 Գութ չունեցաւ իւր սըտում:

«Հապա այն ինչ աստղ է, հայրիկ,  
 Որ այնպէս պարզ վառուում է.  
 Նըրա մարդը պայծառ լոյսը  
 Չորս կողմը բակ բռնել է»:

—Ո՛հ, իմ դատրիկ, աղօթք արա,  
 Դա ձերուհու մի աստղ է,  
 Որ իւր կեանքում երբէք մարդու  
 Ոչինչ վընաս տուած չէ.  
 Այն լուսաւոր բակն է նըրա  
 Առաքինի զործերը,

Աղօթք արա, որ երկարին  
Նըրա կեանքի թեկերը:

83. Գ Ր Ը Ն Դ Է Զ

Հայաստանի հին սովորութիւններից մինն է գըրնդէ-  
զը, որ առաջ հայ գիւղերում կատարւում էր մեծ հանդէ-  
սով, իսկ այժմ տարէցտարի կորցնում է իւր նշանակու-  
թիւնը: Գըրնդէզի հանդէսը կատարում են Մեծ-պատի  
վերջին շաբաթը՝ Տեառնընդառաջի տօնին: Այդ օրը ժամը  
գուրսն են ասում: Նկեղեցու բակումը մի ահագին գըրն-  
դէզ է շինած, որ համարեա մի խոտի դէզի չափ է, բոլոր  
նորափեսայքը շարուած են նրա շորս կողմը, ձեռներին  
մի-մի մոմ բռնած: Երբ «Քշիտոս փառաց թագաւորն»  
երգում են, տէրտէրն առաջինը մօտենում է գըրնդէզին  
և վառում. մօտենում են նրա հետ և բոլոր փեսաներն ու  
խոտը վառում: Հուրը բորբոքւում և ժամաւորների ջեր-  
մեռանդութիւնը կրկնապատկւում է:

Ժամերգութիւնից յետոյ՝ նորափեսայք նոյն մոմերը  
ձեռքներին, առանց հանգցնելու, իրանց խաչեղբօր ու փես-  
եղբօր հետ գալիս-բարձրանում են իրանց կտուրները և  
երեք ծունր կրկնելուց ու իրանց մտքումը որեւիցէ մի  
ուխտադրութիւն անելուց յետոյ, վառում են իրանց գըրն-  
դէզները:

Նորահարսներին առաջուց չարսաւաւորած կանգնե-  
ցնում են կտրին. գըրնդէզը կպցնելուն պէս՝ ամեն նորա-  
փեսայ բռնում է իւր սիրելի նորահարսի կուռը և երեք  
անգամ վառուած կրակի գլխովը պտոյտ է գալիս: Այդ  
ք ա ո ա ս ը ն ք ա կ ո ի խ շ ի ն ն ե լ ու համար է:

Մանր երեխայքն էլ, որոնք կտրները լցուած, ատամ-

ները սրած՝ փոխինձ ուտելու էին սպասում, անվախ  
թռչկոտում են բոցավառ կրակի գլխովը:

Այդ երեկոյ գիւղը մի հիանալի տեսարան է ներկայա-  
ցնում մօտիկ հանդիսականներին. երկինքը շառագունում  
է. լոյսը մինչև հորիզոնն է խփում և խառնուելով երե-  
կոյեան վերջալուսի հետ՝ կարմիր ծիրանի գոյն է տալիս  
առաջգ ձգուող պատկերին: Միևնոյն բանը հեռուից դի-  
տողին բոլորովին այլ կերպ է երևում. բոլոր գիւղը, կար-  
ծես, հրդեհի մէջ է. տանիքներից բարձրացող ծխերը  
խառնում են միմեանց հետ և բոցի հրեղէն լեզուներն  
օձի պէս դուրս են ձգւում նրանց միջից: Իհարկէ այս  
երկիւղը միքանի բոպէ է տեսում: Չոր խոտը մի բոպէի  
մէջ բոցի կերակուր է դառնում, և ամեն բան վերջանում է:

84. Ա Խ Ա Ռ

Ձմեռուան պղտոր օրերն անցնում են. մեծ-պատը  
բերում է իւր հետ Արարատեան դաշտի համար ջերմ և  
պայծառ արեգակ. ձիւները հալւում, առուններ են կազ-  
մում. գետերը բարձրանում են. գետինը կակղում, կա-  
նաչում է. հագար տեսակ բուսեղէնների ու բանջարեղէն-  
ների հետ դուրս են գալիս գիւղացոց աշխատանքի քաղ-  
ցըր և կարևոր օրերը. երկրագործը իւր գութանն է սար-  
քում և մաճը բռնած՝ դաշտը հերկում. այգեգործը իւր  
բահն ու հատոցն է սրում և այդին մշակում, թաղած տե-  
ղից Ղազարոսի յարութիւնը տալիս մեռած խաղողի բա-  
րունակներին և հատոցն առնում, աւելորդ մասները կըտ-  
րատում: Գիւղացի կանանց գործն էլ է շատանում. առա-  
ւօտադէմ շուտ հաւաք-տեղակ են անում տունը և մշա-  
կաւորների համար ճաշ-կերակուր պատրաստում, մատա-  
ղահաս հարսների ու աղջիկների հետ ուղարկում հանդը

կամ այդին, հարսներին էլ պատուիրում են, որ հացը վերցնելուց յետոյ՝ արցան քաղեն իրիկուայ բանուորների համար: Պառաւ կանայք ու անգործ ծերունիք էլ ուրախացել են. ժամերը երկարացել են, օրը երեք անգամ փայտը սիւն տալով ժամ են գնում, «տէրոզորմեան» քաշելով դուրս գալիս և տէրտէրի, իշխանների հետ քաղցր զրոյցներ անելով՝ տուն դառնում, արևկող տեղերում նըստում, Աստուծու բարիքը — արևի տաքութիւնը վայելում: Բայց անս մօտենում է վերջին շաբաթը և գիւղի քահանան հրաւիրում է ժողովրդին, որ ամեն տարուայ պէս, այս տարի էլ ախառի հոգսը քաշեն:

«Օրհնեալ ժողովուրդ, քարոզում էր տէրտէրը վեցերորդ կիւրակէին. գիտէք որ մեր պապենական սովորութիւնն է՝ Չատիկ կիւրակէ առաւօտեան հայ քրիստոնեան պէտք է ծէգելահան ախառի մսով բերանը բաց անէ, շաբաթ երեկոյեան նաւակատիք է լինում, մսեղէն չկը ուտում. այն քրիստոնեան, որ ախառով չի մասնաւորուի, ամբողջ տարին իրաւունք չունի մսի համ տեսնելու: Ախառի եզը որ կայ՝ հայ-քրիստոնէի նշանն է. մենք էլ հօ, փառք Աստուծու, հայ-քրիստոնեայ ենք: Դէ որ այդպէս է, ժամից յետոյ դռանը հաւաքուեցէք, երէցփոխին էլ ընկեր երկու մարդ ջոկեցէք, որ նրանք ախառի համար փող հաւաքեն՝ Չատիկ կիւրակէ մորթելու համար: Աստուած ձեռ քսակի բերանը բաց պահի, որդիք. լիաբուռը տուէք, մի խնայէք, էլի ձեր վրայ պիտի բաժանուի, աղքատ տեանկ պիտի ուտեն. եթէ որ մի բան էլ փողիցը կամ կաշուցը մնայ, այն էլ եկեղեցու, տէրտէրի բաժին կ'երթայ, էլի վարձքը ձերը կըլինի: Օրհնեալ էք և օրհնեալ եղբրուք. ամէն»:

Խէչանենց Խէչանը թէպէտ ոչինչ բանի չէր խառնըւում, բայց իւր մէջ ուխտ էր արել, որ ամեն տարի

ախառի փող հաւաքողներէց մինն էլ ինքը լինի: Այս տարի էլ իւր պաշտօնը շատ արիութեամբ կատարեց:

85. ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ

Անս, մանկտիք,  
Եկաւ Չատիկ,  
Բերաւ ամենիս  
Ուրախ աւետիք:

Երկինքը պարզուել, էլ սև-սև ամպեր  
Ձեն ծածկում նըրա դէմքը կապուտակ,  
էլ չեն սարսեցնում մարդկային սրտեր  
Չըմբան արհաւիրք, հողմունք բրաբեր:

Սարեր, հովիտներ, դաշտեր ու ձորեր  
Ծածկուել են կանաչ թաւշեայ գորգերով,  
Փայլուն արեգն էլ Չատիկի գալուստը  
Ողջունում է իւր կենսատու լուսով:

Այո, այսօր է հրաշալի Չատիկ,  
Ուրախ են ամենք՝ թէ ծեր, թէ մանկիկ.  
Բայց միայն դժբախտ որբիկն է անտէր,  
Լըռիկ թափում է աղի արցունքներ:

Հարուստ մանուկներ կոկիկ, զարդարուն,  
Յաւի, տանջանքի չըլսած անուն,  
Որպէս թռչուններ երգում են, պարում,  
Բերկրալի սրտով Չատիկն ողջունում:

Բայց որբի համար սրտեղ է Չատիկ,  
Չարդարուն զգեստ, անուշ ուտելիք,  
Նա գուրկ ծնողից, գուրկ բարեկամից,  
Չունի ապաստան, զոգում է ցրտից:

Դողդոջուն ձեռքը երկիւղով պարզած,  
Նա թափառում է լայն փողոցներում

եւ դառն արցունքով աչքերը լցուած,  
 Անցուդարձողից չոր հաց է խնդրում:  
 «Մի կտոր չոր հաց»... լաւ խորհենք, մանկտիք...  
 Տեսէք, ինչին է որբը կարօտում,  
 եւ մի մոռանաք, որ թշուառը միշտ  
 «Չոր հացովըն» է Ջատկին հանդիպում...

86. ՈՒԽՏԱՄԳՆԱՅՈՒԹԻՒՆ

Վարդավառի շաբաթ օրն էր: Գարեգինն ու Սօսը,  
 կէսօրուան շորի ժամանակ, երեսների քրտինքը սրբելով,  
 ձորամիջի ջրումը լողացած, տնքալով, քրտնաթաթախ  
 դուրս էին գալիս ձորիցը: Հեռուից նկատեցին, որ ուխ-  
 տաւորների մի մեծ բազմութիւն Երևանի կողմից ուրախ-  
 դուարթ, ձի հեծած, արշաւում են դէպի Ս. Վարապետի  
 վանքը, դատարկելով իրանց հրացանները և օդը թըն-  
 դացնելով:

Երբ մօտ եկան սրանց, Գարեգինը ոչ մէկին չթողեց  
 անցկենալու. քաշեց իրան ծանօթ բարեկամ Հրաչեայի  
 ձիու սանձն ու դիմեց դէպի իրանց տուն: Դռան առաջը  
 ճանապարհորդներն իջան ձիաներից և բակումը նստոտե-  
 ցին մի կապերտի վրայ, հով տեղում:

— Միքիչ սառը ջուր չունիք, ասաց Հրաչեան:

Իսկոյն ներքնատանից հանեցին մի այնպիսի սառը  
 ջուր, որ կարծես Ջրօրհնէքին լինէր լցրած:

Հէնց խմեց Հրաչեան՝ «Օխայ, ասաց, ակզ օրհնուի-  
 քո պատճառ դարնողի հողին դրախտական լինի. ես այս-  
 քան ման եմ եկել, լաւ ջրեր շատ եմ տեսել, բայց այս  
 օրհնուած Աշտարակի ջրի պէս մարտական ու քաղցր  
 ջուր ոչ մի տեղ չկայ: Վարդավառ շաբաթ օրն այսպիսի  
 ջուր. Երևանայ երկիրը քանդես՝ չես գտնիլ. Աբարան շատ

աղբիւրներ կան, Ալադեհազ շատ քաղցր ջրեր կան, բայց  
 ոչ մէկը սրա պէս մարտական չէ. Ամբերթը գոված ջուր  
 է, բայց սրա խումը չունի»:

— Մեռնեմ սուրբ Ականատեսի զօրութեանը, նա մեր  
 գիւղի համար այս լաւութիւնն է արել, ասաց Գարեգինը.  
 Կարբու ներքեկից գետիցը գաւազանն առել է, աղօթք  
 անելով ճանապարհ է ընկել և առաջ գնալով դէպի ցած,  
 ուր գաւազանը գետնին է դիպել, լայն առու է դոյացել,  
 ջուրը հետն է եկել, ինչպէս որ ստուերը մարդու յետեի-  
 ցը. որտեղ ապառաժ քար է եղել, գաւազանով խփել՝  
 երկու կտոր է արել. կամ միջիցը ծակել, ջուրն անցկա-  
 ցրել, մինչև բերել հանել է գիւղատեղը: Նոր յետոյ կա-  
 մաց-կամաց մարդիկ են եկել, տեսել են ջուր կայ, դիւղ  
 են շինել, որ ահա այս աննաման Աշտարակն է: Ինքն էլ  
 վերադարձել, գնացել է Սաղմոսավանք՝ ճգնութիւն անե-  
 լու. մեռնեմ նրա լոյս գերեզմանին. մենք նրան շատ ենք  
 պարտական. նրա սուրբ գերեզմանը հիմա էլ Սաղմոսա-  
 վանքի եկեղեցու մէջն է և մեզ համար աղօթք է անում:

Գարեգինը հիւրերին նստացրեց և զնայ կախանա-  
 տնից լաւ ընտիր խաղող դուրս բերեց, լուաց սառը ջրով  
 ու զրեց նրանց առաջը. «Հրամեցէք, ասաց, ներեցէք,  
 որ չեմ կարողանում լաւ հիւրասիրել ձեզ. տանը ոչ ոք  
 չկայ. ամենքը այդին են գնացել»:

Խաղողը ուտելուց և մի փոքր հանգստանալուց յե-  
 տոյ՝ Հրաչեան ձայն տուեց. «Դէհ, տղէք ջան, վեր կացէք,  
 մթնում է արդէն. շնորհակալութիւն, սիրելի Գարեգին.  
 Աստուած օջաղ հաստատ պահի»:

Ամենքն էլ՝ «ամէն» ասացին, ձի հեծան և դիմեցին  
 դէպի Հանավանք:

Հետեւալ առաւօտը, արեգակը նոր էր ծագել, դեռ  
 այնքան զօրութիւն չունէր, որ մարդու աչքերը ծակծկէր,

Աշտարակայ ուխտաւորներն էլ ճանապարհ ընկան: Ամու-  
րիները խումբ-խումբ իրանց հացերը կապել էին շալակ-  
ներին ու առաջ էին զնում. պաս պահողներն էլ խնձոր-  
ներ էին լցրել զբպանները և մուրաշկաններին բաժանե-  
լով՝ վազում էին, որ պատարազին հասնեն, սրբութիւն  
առնեն: Բազմութիւնը այնքան մեծ էր, որ քիչ էր մնա-  
ցել՝ կանանց մի տուտը Հանավանք հասնի, մինչ-  
դեռ միւս տուտը նոր էր դուրս գալիս գիւղից: Երե-  
խայքն էլ, զբպանները խնձորներ լցրած, ձեռք ձեռքից  
բռնել էին ու կանանց առաջն ընկած՝ վազում էին: Գա-  
րեգիւնն էլ մատաղացու ոչխարը մորթել էր տուել ու միւսը  
լցրել մի մեծ կաթսայի մէջ:

Երբ տեղ հասան, պատարազն աւարտուեց, պաս պա-  
հողները հազորդուեցան: Սօսն էլ գնաց գործակալի մօտ,  
խնդրեց նրան, որ ժամաւարին, միւս քահանաներին ու  
տիրացուներին հետն առած՝ գայ իշանց սեղանին:

Պանաչ խոտի վրայ սփռոցը տարածեցին ու սեղան  
բաց արին. ամեն բան կար, Աստուծու բարութիւնն էլ  
այնտեղ էր: Հացկերոյթի վրայ լաւ ուրախ ժամանականց-  
կացնելուց յետոյ՝ ուխտաւորներն սկսեցին կամաց-կամաց  
քաշուել զնալ: Մնացին պարտէյներում գուարճացող մի  
քանի երիտասարդներ. սրանք էլ կամաց-կամաց գնացին  
ձորը, շորըհան եղան և կիսամերկ ընկան գետը. իսկ ով  
չէր ուզում իւր շորերի թրջուելը, նրա վրայ ջուր էին ցա-  
նում՝ ասելով թէ, «Վարդավառ է»: Միմեանց այնքան թրը-  
ջեցին, որ ջուրը ծլծլալով վրաներից թափում էր: Լողա-  
նալը վերջանալուց յետոյ, գետումը ձուկ բռնելով գնում  
էին դէպի Աշտարակ, որ այնտեղ դուրս գան, գնան այգի-  
ներն ու դարձեալ մի լաւ ուրախ ժամանակ անցկացնեն:

87. ԳԻՒՂԱՅՈՒ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Ճշմարիտ է՝ շատի հագինը տրես է, գուլպայ էլ չունի,  
որ ոտը ծածկէ, շատի չուխի վրայ հարիւր կարկատան  
կայ. բայց ինչ կ'անես՝ որ տունն ու մառանը հազար բա-  
րութիւնով լիքը տրաքում էին: Գինին կարասներով շա-  
րած, ամբարը հացով լիքը, կթի կովն ու գոմէշը, հորթ  
ու ձագը տակներին՝ գոմումը կապած, նժոյգ ձին ախո-  
ռումը, գութանը դռանը լծած, մառանը սեխով, կախա-  
նի տանձ ու խնձորով խրլթխլթում և մտնողին հօտը տեղ-  
նուտեղը բռնում, շշմացնում էր: Ո՛րը երկու, ո՛րը երեք  
այգի ունի, ծառայ ու հօտաղ դռանը պատրաստ և տան  
ներսն ու պ ու ճ ա խ ը բարութեամբ լիքը: Կարասներով  
աղ-դրած կողակ, կճուճներով պանիր ու դ աւ ու ը ը մ ա,  
աքաշներով գոխ ու բոխ, բղուղներով եղ ու կարագ,  
մոթալներով պանիր—մի խօսքով ծո՛վ՝ և ո՛չ թէ տուն:  
Տասը հիւր որ միւսնոյն ժամին մէկի դռանը ցած գային,  
ամբողջ ամիս ուտէին, խմէին, կոտրէին, ջարդէին, փչա-  
ցնէին, նրա տան բարիքը կար ու կար, և եթէ մինչև ան-  
գամ վայրենի օտարականը նրանց դնով անց կենար,  
իրանք թեիցը կըքաշէին, տուն կրկանչէին, որ իրանց սե-  
ղանի համն առնի ու այնպէս ճանապարհը շարունակէ:  
Ջատ անգամ եկեղեցումը որ մէկ օտարական կըտեսնէին,  
«Սուրբ սուրբն» ասածին պէս՝ շատը կ'երթար՝ եկեղեցու  
դուռը կրկտրէր, որ ամենից առաջ ինքը նրան իւր տու-  
նը տանի, և շատ անգամ՝ երբ խնդրողները շատ լինէին,  
խօսքը մին կ'անէին, որ մի երկու շարաթ նրան իրանց  
միջումը պահեն, պատիւ տան և բոլորը միասին մէկ օր  
սրա տանը, միւս օր նրա՝ ուրախութիւն անեն, օտարա-  
կանի սիրտը առնեն: Ջատերը ոչխարի հօտեր ունէին:

Այնպիսի մարդ կար, որ տարէնը երկու հարիւր, երեք հարիւր լիզը տանձ, խնձոր, ծիրան էր ծախում, և մէկ այնքան էլ աղքատի ու ճանապարհորդի ուտացնում, կամ դեղապետի համար պահում, որ սարերում բնակուողները, որոնք այդիներ չունին, մէկ հիւանդ պատահելիս՝ գան տանեն ու իրանց հիւանդի աչքը դուանը չմնայ, որովհետեւ մեր աշխարհումը, ինչ հիւանդ էլ որ լինի, նրա առաջին ու վերջին դեղը պտուղն է։ Ամենայն մարդ իւր բաժակի գինին առանձին ունէր պահած, որ համ իւր եկեղեցուն էր տալիս, համ էլ այն գիւղացիներին, ուր այդի չկար։ Ամեն նաւակատիրի՝ ոչխար ասես, կով ասես մորթում էին, մատաղ անում, ժամ-պատարագ անել տալիս, ժամոց բաժանում ու տնով-տեղով գնում իրանց սիրելիներէի գերեզմաններն օրհնել էին տալիս ու աղքատներին կշտացնում։ Մէկ կուպէկի բան փողոցիցը տուն չէր գալ, բացի իրանց հագնելու շորիցը, այն էլ կտաւ, շապկացու, չուխայ, շատը հարսներն ու աղջրկերքն էին նրանց համար մանում, գործում, կարում։ Նրանց կանանցը որ մտիկ տայիր, խելքդ կ'երթար՝ խասի ու նուրբ կտորներէի մէջ կորած էին. բերաններից կտրում էին, իրանց ընտանիքի ոտն ու գլուխը մարուր պահում. տղամարդը իւր օրը մեծ մասամբ հանդումն է անցկացնում, ինչ փոյթ, եթէ վատ էլ հագնի. կինարմատը միշտ պէտք է պատշաճապէս հագնի, պատշաճապէս մաշի։ Չատը չորս-հինգ հարս ունէր տանը, որ մէկ տեղը ցաւելիս՝ կամենում էին զլխովը պտուտ գան ու ոտները ջուր աննն՝ խամն։ Մէկ հիւր պատահելիս՝ այս պատիւը հիւրինն էր։ Աչքը կթած՝ կանգնած են համեստ հարսները, որ տեսնեն թէ իրանց տէրը կամ հիւրը ինչ կըհրամայի, որ կատարեն։

«Բնողդ, բնողդ սա է. փողի օգուտն էլ անիծած, նրա կտրողն էլ, ասում էին շատ անգամ գիւղացիք և գլխները

շարժում. այսօր ջէրդ լքցնես, վաղը պէտք է մատղ լիգես։ Ո՛չ գիշերը քունդ է տանում, ո՛չ ցերեկը հանգիստ ունիս. փորցաւ ընկածի պէս՝ մարդ չէ իմանում, թէ պատառը որ կողմովն է կուլ գնում։ Փողը որ կայ՝ ժանգ է, ձեռի կեղտ. այսօր կայ, վաղը՝ Աստուծով մխիթարուես։ Մեռնելուցդ յետոյ էլ՝ պէտք է շներոց, գայլերոց լինի։ Թէկուզ փողի համն առած, թէկուզ իւր միտը կերած, հաշիւը մէկ է։ Սարդարն էլ է մեր դուռը գալիս, փողատէրն էլ։ Տաշտումը հաց ունենամ, կարասումը գինի, ջուալումն ալիւր, հէրն անիծած, եթէ բոլորովին էլ մերկ լինիմ և հոգս անեմ։ Օջաղս լիքը լինի, տունս առատ, որդիքս ողջ-առողջ, թո՛ղ օրը հագար մարդ մտնի, հազար մարդ դուրս գայ, ինչ եմ հոգում. հացն էլ է Աստուծունը, ես էլ, ո՞վ հասնի, թո՛ղ ուտի։ Գդակս ծուռը կըգնեմ, ուրախութիւնս կըշարունակեմ. ո՞վ ծոյլ է, թո՛ղ նա հոգս անէ։ Տարէնը որ հագար շուն, գայլ, թուրք, հայ, աղքատ, օտարական, հացս չուտեն, տանս չքնեն, գինիս չխամն, իմ աչքը իսկի քուն կըզայ։ Բացի ուտացնել-խմացնելուց, այնպէս եմ սլատուիրել, որ խուրջիներն էլ լցնեն ու տանեն իրանց տները։ Իւր տնկած ծառի տակին քնելը, նրա պտուղն ուտելը՝ աշխարհք արժէ։ Նոր չեմ հագնիլ, հին կըհագնեմ, ձեռքս ո՞վ է բռնում, ո՞վ է գլուխս ծեծում. ես չեմ իմ գլխի տէրը»։

«Բաղաք որ մտնում եմ՝ հէնց իմանաս թէ աշխարհք սով է ընկել. էլ ո՛չ խէր կայ, ո՛չ բարաքեա թ։ Մէկ տեղ որ հացն ու ջուրը փողով լինին ծախում ու առնում, էլ ո՞ւմ դուռը գնաս, ձեռդ ո՞ւմ դէմ անես։ Երբեմն էլ կիտուկ-կիտուկ փողերը համարելիս՝ փողատէրն այնպէս սըրթսրթում է, որ հէնց իմանաս թէ առաջիցը թե կ'առնի, կըթռչի։ Թո՛ւհ... մարդ իրան հոգին պէտք է ծախի փողի պատճառով։ Հազար տարի էլ որ քու ամենասիրելի բարեկա-

մի դռանը շլինքդ ծռես՝ կանգնես, սոված մեռնելիս լինիս, հազար տարի անօթի փորով զկուտաս, ոչ ոք քեզ տուն չի կանչիլ, սառը ջուր չի խմացնիլ: Մինչև անգամ այն մարդը, որ քու տանը կերել, խմել, ամսով-տարով քու աղ ու հացի վրայ է եղել, աչքն աչքիդ առնելիս՝ հէնց իմանաս թէ գնդակով խփեցին, յետևն է քեզ անում ու աչքը քամակը գցում: Տօ՛, օրհնուած, ասենք թէ աչքերդ կուրացրել ես ու ինձ չես ուզում ճանաչել, ասենք թէ չես կամենում քո օրհնուած սեղանիդ կողքը ինձ ցոյց տալ, մէկ՝ «բանով, Աստուծու բարին» գոնէ ասա, հօ բերանիցդ վարձ չես ուզում, դա էլ հօ փողով չէ, այ փողակեր, հողակեր: Ասենք թէ չուխէս մահուդ չէ, հին մաշուած բրդից է, իսկ քոնը նոր, կանաչ մահուդից, ձեռքիցդ հօ չեմ խլում: Քեզ պէս հազար մահուդամարդ իմ այս աղքատ չուխիս մատաղ լինի, որ առանց հիւրի հաց չեմ ուտում: Այսպէս են անա՛ քաղաքի մարդիկը: Էլի Աստուած օրհնի մեր ջուրը, մեր հողը, էլի թէ հոգի կայ, հաւատ կայ, մեզանում է: Մարդ ինչ անէ, իւր առաջը կը գայ. լաւութիւն կ'անես, լաւութիւն կը տեսնես, վատութիւն կ'անես, վատութիւն կը ստանաս: Հարիւր տարի կը լինի, որ լուսահոգի Ար ու վը մեռել է, բայց նրա ոգորմին կայ ու կայ. թուրք ու հայ նրա գերեզմանովն են երդում. նրա բարերարութիւնները սահման չունէր. տալիս էր՝ ինչ որ կարողանում էր, և ոչ ոքի զատարկաձեռն չէր բաց թողում:

88. ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԼԻԹ

Ա. Ըստ դարեր առաջ Սասուն քաղաքում ապրում էր մի մարդ, անունը Մըհեր. նա չէր հասարակ մի խեղճ հպատակ, այլ երկրի տէրը, իշխան անվհեր: Ինչպէս առիւծը մեծ է անտառում, ինչպէս արծիւը տիրող վերերում, այնպէս էր Մհեր բոլոր պետերի, իշխանների մէջ: Ոչ ոք չէր կարող դէմ կանգնել նրան՝ ոչ միայն մարդիկ, այլ և դև, գազան...: Դեռ նա մանուկ էր տասը տարեկան, երբ Սասուն տանող լեռնուղու վերան՝ առիւծ երևաց—գազան մարդակեր, որ ճամպէն կտրած կ'ուտէր, կը լափէր, ով կը յանդգնէր Սասուն ներս մտնել, կամ ում Սասունից դուրս գալ պէտք լինէր:

Մանուկ Մհերը իւր հօրից ծածուկ գնում է անտառ, վիշապի վերայ: Քաղցած գազանը նրան տեսնելով, սաստիկ գոռում է, վեր կենում տեղից: Դիպչում են իրար: Գազանի բաշից Մհերը բռնում, կատաղի թափով գետին է զարկում և, շունչ չտալով անեղ կենդանուն, ձախով բըռնում է ներքի ծնօտը, աջով վերինը քաշում, պատառում, երկու կէս անում:

Բ. Երկար տարիներ Սասուն, իւր Տանը, թագաւորում էր Մհեր իշխանը. Հարևան երկրի պետեր ու տէրեր, այրերում ապրող անհեթի զևեր նըրա անունից սարսափում էին: Խաղաղ էր Սասուն. հպտավիները հանգիստ, երջանիկ. միայն Մհերը իւր վիճակիցը անգոհ էր սաստիկ. նա ժառանգ չունէր: Մհերն աղօթքով Աստուծուն դիմեց, որ մի որդի տայ: Տիրոջ հրեշտակը երագում ասեց. գաւակ կ'ունենաս դու մի քաջ, հրսկայ. բայց երբ նա ծընուի, նրա ծնողաց կեանքը պիտ' կարճուի: Մանուկը ծընուեց: Հայրը շտապով նրան մըկըրտեց: Նրա անունը Դալիթ

զրեցին... Խեղճ ծնողներն էլ երկար չ'ապրեցին: Մի տարօրինակ տրդայ էր Դաւիթ. մանուկ հասակում նա ծիծ չկերաւ. մեղրով ու կաթնով սնուեց, զօրացաւ. ով կրմի-ծանար ամսով ու տարով, նա մեծանում էր ժամով ու օրով:

Գ. Մանուկ օրերին Դաւիթն ապրում էր Մսուր քաղաքի մելիքի տանը: Սա Դաւիթի հօրը, Մհեր իշխանին, մօտ ազգական էր, թէև կռապաշտ: Ձէնով-Օհանը, մեռնող Մհերի կամքին հընազանդ, Դաւիթ մանուկին տարաւ նրա տուն, Իսլիմ խանումի խնամքին յանձնեց: Խանումը նրան հարազատ որդուց չէր զանագանում. բայց հոգեորդու գերբնական ոյժը շատ փորձանքներ էր խեղճ կնկան բերում: Սիրում էր Դաւիթ կատակներ անել. բայց ոչ մի կատակ աժան չէր նստում միւս մանուկներին, խաղակիցներին. մէկի կռնակն էր ծուռում, դուրս ընկնում, միւսի ոտները տեղահան լինում, մէկը կաղ օտով, միւսը թևագուրկ տուն վերադառնում:

Մի օր խանումը մանկանը փակեց իւր սենեակի մէջ — տանից դուրս գնաց: Դաւիթը ելաւ, դուռը կոտրատեց, դուրս վազեց փողոց, տղայոց կանչեց, պարտէզ ժողովեց: Այստեղ մեր քաջը ձեռքը մեկնում է, մի բարդի ծառի բնիցը բռնում, ցած կռացնում. «դէհ, ընկերներս, եկէք ծառ հեծնենք, ձիախաղի տանք»: Տղայքը վազում, հեծնում են ծառը: Դաւիթը դարձեալ կատակ է անում՝ ծառը բաց թողնում: Ծառը ուժգնապէս վերև է ձգում և մանուկներին դէս ու դէն գցում. որը մեռնում է, որն էլ կիսամեռ գետին է ընկնում:

Դ. Այս դէպքից յետոյ Մսրամիլիքը մարդիկ է վարձում, և պատուիրում է՝ որ Դաւիթին տանեն ու ճանա-

պարհին, գետից անցնելիս, կամրջից ներքև գցեն, սպանեն: Քաջերն առնում են Դաւիթին ու գնում, իբրև թէ Սասուն, հօր տունն են տանում: Բայց երբ հասնում են Մուրադ-չայ գետին, կամրջի կիսին՝ երկու քաջերը, մինը առաջից, միւսը յետևից, Դաւիթին բռնում են, որ գետը գըցեն: Բայց մեր մանուկը երկու քաջերին իբրև հաւի ճուտ տակըն է կոխում, դաշոյնը հանում, վրդներին դընում: «Ես ձեզ կարող եմ մորթել իբրև ուլ, կամ գետը ձգել որպէս մի փետուր, բայց Իսլիմ մօրս բարի խնամքին բաշխում եմ ես ձեզ ձեր կեանքը չընչին»: Ասում է Դաւիթ, նրանց արձակում ու ինքը Սասուն հէրբօր մօտ գնում:

Ե. Մհերի մահից յետոյ նրա երկիրը կառավարում էր նրա եղբայր Ձէնով-Օհանը: Սա բարի մարդ էր, բայց իւր հանգուցեալ եղբօր չափ քաջ չէր: Մորա փոխարէն Օհանը շատ զօրեղ ծայն ունէր, այնքան զօրեղ, որ ամպի գոոոցին կամ կայծակի ճայթիւնին էր նմանում: Երբ որ Օհանը կամենում էր ծայն տալ—կանչել, նրան փաթաթում էին եօթը զամշի կաշուի մէջ, որ կանչելիս՝ ինքը չճաքի, չպատառուի:

Զ. Երբ որ Օհանը տեսաւ տղային փարթամ, զարգացած, շատ ուրախացաւ: «Մհերի որդին քիչ էլ մեծանայ, իւր հօր երկիրը կըկառավարի. այժմ թող մի քիչ հորթերը գնայ, տաւարը պահի, մտածում էր նա. թող գեռ սովորի հպատակ լինել, որ երբ տէր դառնայ, հպատակների ցաւը հասկանայ»: Բերաւ պողպատէ սօլեր հագցըրեց, ձեռքին պողպատէ գաւազան դրեց, տաւարն ուղարկեց: Բայց տաւարածը մեր քաջ Դաւիթն էր՝ իւր կատակները դարձեալ միտ բերեց. մի օր սարերում ինչ որ գահան կար՝ արջ, առիւծ, վագրեր, վարազներ ու գայլ, մի տեղ ժողովեց, նախրի հետ արեց ու քաղաք բերեց: Քա-

ղաքացիքը սաստիկ վախեցան, դռներ, երդիկներ ամուր կողպեցին, տանը թաղ-կացան: Դաւիթը կանչեց. «Բարերանք Աստուած, թող իմ տաւարը անվընաս մընան, իսկ գազանները սարերը գընան»:

է. Տաւար պահելիս՝ Դաւիթը ունէր մի համեստ ընկեր, որ միշտ բերում էր՝ խառնում տաւարը Դաւիթի նախրի հետ ու կըշտին մընում: Դաւիթն էլ հանգիստ իւր համար քընում: Մի օր Դաւիթը քնից վեր կացաւ և իւր ընկերից վատ լուր իմացաւ. քառասուն վիշապ, ամենհի դեեր, վրայ են տուել, քառասուն տաւար վեր առել տարել:

Դեերի հետքը Դաւիթը բռնեց, սրտնեղած գնաց, մի քարայր գտաւ: Դեերի տունն էր գետնի տակ փորած,— դռան առաջը մի ժայռ գլորած: Քարայրի դռան աներկիւղ տղան կանգնեց ու կանչեց. «էյ, դուք, տմարդի, կանացի քաջեր, քնած ժամանակ երբ էք իմացել, որ տըզամարդը յարձակում անի, միւսի տաւարը առնի ու տանի: Դուք քառասուն էք, իսկ ես միայնակ, ձեռքիս էլ ունիմ մի փայտէ մահակ. թէ տղամարդ էք, այրից գուրս եկէք. դռանը կանգնած ձեզ եմ սպասում»:—Դեերի մեծն էլ, քըմծիծաղ տալով, ներսից է կանչում. «Քաջասիրտ տղայ, փոքր ինչ սպասիր, շատ մի գայրանալ ու մեզ մի պատժիր, իսկոյն դուրս կըզանք, քեզ յարզանք կըտանք և քո տաւարի փոխը յետ կըտանք»: Ասում է, հրում, ժայռը գըլորում, այրից դուրս ելնում: Բայց դուրս գալուն պէս Դաւիթի հարուածը իջնում է ուժգին: Ահեղ վիշապը փչում է հողին: Նրա յետեից միւսն է դուրս գալիս. Դաւիթի հարուածից հողին է տալիս: Այսպէս նա կարգով ամենքին դարկում ու նրանց լէշը ձորն է գլորում: Յետոյ մտնում է քարայրէ բունը, անթիւ գանձ գտնում, բերում իւր տունը: Բայց դանձը ոչինչ՝ այրի խորքումը կապած կար

մի ձի, մի քուռակ սիրուն, սև ինչպէս սաթը, ուժեղ, գնացկան, ինչպէս Դըռ-Աթը\*): «Հօրեղբայր Օհան, այս քուռակն ինձի, իսկ այն գանձերը վեր առ, քեզ լինի»:

Ը. Լուրջ էր Դաւիթը, կատակ չէր անում. տղայութիւնը մի կողմ էր դրել. ուրիշ մտածումնք, նորանոր հոգսեր ըսկսել էին նրան պաշարել: Մարամելիքը հօր մահից յետոյ զօրով եկել էր, Սև սարին տիրել,—Մհերի սարին, ուր առիւծ հսկան որսի էր գնում, որը Սասունի մի մասն էր կազմում:

Դաւիթը գնաց Ձէնով-Օհանին՝ «հօրեղբայր, ասաց թէ Աստուած սիրես, մի ասն, տեսնեմ. ինչպէս է եղել, որ հօրս սարը Մարամելիքի ձեռքն է ընկել»:

«Ո՛րդի, երբ հայրդ դեռ կենդանի էր, այդ սարը ամբողջ մեզ կըպատկանէր: Նրա չորս կողմը պարիսպ էր քաշած, վերան Մարութայ սուրբ վանքը շինած: Բայց երբ որ մեռաւ քո հայրդ, Մհեր, Մարամելիքը տիրեց այդ սարին, պարիսպը քանդեց, վանքը աւերեց, այդ օրից սարը մնաց իւր ձեռին»:

— Ես պիտի երթամ, սարը գրաւեմ, վանքը նորոգեմ, իմ երկրին տիրեմ. թո՛ղ թէ մելիքը քաջասիրտ մարդ է, զօրով այնտեղից ինձ դուրս վաճնդէ: Եւ դու ինձ, հէրբար, այս բանում պիտի օգնական լինես. ինչ որ ինձ պէտք գայ՝ վարպետ, նիւթեղէն, ոսկի, ակնեղէն—ամենը պիտ' տաս, բան չըլնայես: Ասաց Դաւիթը ու սարը ելաւ, հին վանքը գտաւ, նրան կարկատեց, նոր ու փառահեղ մի վանք էլ շինեց, Մարամելիքի անունը իսպառ այնտեղից ջընջեց:

\*) Դըռ-Աթը այն առասպելական ձին էր, որի վերայ Քեօռ-Օղլի անունով մի ժողովրդական հերոս բազմաթիւ քաջագործութիւններ է կատարել:

Թ. Լուրը տարածուեց. համբաւը հասաւ Մսուր քա-  
ղաքը: Սելիքն իմացաւ Դաւթի ալ ալքը... Գոռոզ իշխա-  
նը սաստիկ բարկացաւ, սաստիկ բարկացաւ, փըրփըրեց,  
ասաւ. «Կուիւ պիտ' գնեմ Սասունի վերան, Սասունի վը-  
րան, այն լկտի մանկան պիտի խողխողեմ, Սասունն աւե-  
րեմ, աւերեմ, գերեմ. ինչ որ կայ-չկայ կոխտամ, տրորեմ...»  
«Թո՛ղ ժողովուին հարիւր հազար տըղայք նորատիր.  
«Թո՛ղ ժողովուին հարիւր հազար բեղով պատանիր.  
«Թո՛ղ ժողովուին հարիւր հազար թուխ-մօբուս մարդիկ.  
«Թո՛ղ ժողովուին հարիւր հազար կայտաւ ծերունիք:

Ժ. Դաւիթն էլ երբ ոչ այս բանն իմացաւ, գնաց  
հէրբօր մօտ, այսպէս խօսեցաւ. «Տուր ինձ, հօր-եղբայր,  
իմ հօր գրահը, տուր որ պահպանեմ ես մեր սուրբ գահը.  
տուր նոյնպէս կապեմ մէջքիս այն սուրը— կայծակից գօ-  
ղած իմ հօրս թուրը. խաշը գօրաւոր աջ թևիս կապիր,  
Ջալալ քուռակը ինձ համար թամբիր. Սև լեռան գլխին  
շինած սուրը վանքը, աղաշիր, պահի իմ մանուկ կեանքը»:  
Տասը տարեկան հերոս մանուկին Ձէնով-Օհանը ուզածը  
տուեց: Մանուկը հեծաւ Ջալալ քուռակը և շուրջը կանգ-  
նած մարդկանցը դիմեց.

«Ո՛վ քոյրեր, մնաք բարով, ինձ քոյրութիւն էք արել-  
Ո՛վ մայրեր, մնաք բարով, ինձ մայրութիւն էք արել-  
Ե՛ղբայրներ, մնաք բարով, մնաք բարով, մեծ ու փոքրով»:

Ասաց Դաւիթը և իւր ձին քըշեց, կաթնազրիւրի մօտ  
նրան կերակրեց, բայց երբ Մելիքի բանակին հասաւ, ան-  
թիւ, անհամար վրաններ տեսաւ. «Ինչ անեմ, Աստուած,  
թէ գաղտուկ գնամ, կասեն՝ Դաւիթը դողի պէս եկաւ. թէ  
արձակ գնամ, այդքան գօրքերին ես քնց դիմանամ»:

Միայն մի ըռպէ տատանուեց քաջը, աջ ձեռքին եղած  
փշեց սուրբ խաշը, առաջ արշաւեց, բարձրաձայն կանչեց.

«է՛յ, ո՛վ քընած էք, շուտով զարթեցէք,  
Իսկ ով զարթուն էք, տեղից վեր կացէք.  
Ով որ կանգնած է, գրահը կապէ,  
Ով որ կապել է, թո՛ղ իր ձին թամբէ,  
Ով որ թամբել է, թո՛ղ շուտով հեծնէ:

Դէ՛հ պատրաստ կացէք,

Ձեզ պահպանեցէք:

Որ յետոյ շասէք՝ մեր քնած ժամին

Գողի պէս եկաւ Դաւիթ պատանիր»:

Ասաց ու քշեց, գօրքի մէջ մտաւ, մէկ կողմից տուեց,  
միւս կողմով ելաւ. կայծակի թուրը կրակ էր թափուս,  
թրից պրծածը ձին էր կոխոտում:

ԺԱ. Տրտունջ բարձրացաւ Մսրամելիքի բանակի մի-  
ջից. ձայներ լսուեցան ամենայն կողմից. «Անվեհեր տղայ,  
գու մեզք մի գործիր. գրտիր թըշնամիդ, նըրա հետ կը-  
ռուիր»:  
Ջօրքի տրտունջը Դաւիթը յարգեց, Մսրամելիքի  
վրանը դիմեց... Եւ երբ իշխանի դռանը հասաւ, պահա-  
պաններին բարձրաձայն ասաւ. «Ո՛վ թիկնապահներ գո-  
ռոզ մելիքի, մտէք, յայտնեցէք իսկոյն ձեր տիրոջ, որ  
միակ որդին Մհեր իշխանի՝ գօրքդ ջարդելով, դուռդ է  
եկել, մեն-մենակ քեզ հետ կամք ունի կուռելի... Մարդիկը  
մեզք են, ինչի կոտորենք, մենք, իշխաններս, եկ, միմեանց  
զարկենք»:

Մսրամելիքը նոյնպէս հսկայ էր, հսկայի նման գիտէր  
քաջ կուռել, Դաւթի հրաւէրը սիրով ընդունեց և դուռ-  
զաբար նրան հարց տուեց. «Կուիւր գօրով, թէ հերթով  
անենք... եթէ հերթով է ընդունուած կարգը, ապա դու  
փորքն ես՝ առաջ ես պիտի սկսեմ զարկը: Ուրեմն գնայ,  
մէջտեղը կանգնիր և իմ մահարեք զարկին սպասիր: Պայ-  
մանը սա է՝ ես երեք անգամ կերթամ ու կըզամ և երեք

անգամ քեզ հարուած կրտամ, եթէ հարուածիս դու լաւ դիմանաս, կամ թէ հրաշքով կենդանի մնաս, ապա ես պիտի մէջ տեղը կանգնեմ և քեզնից նոյնքան հարուած ընդունեմ»:

«Ես համաձայն եմ», Գալիթը ձայնեց, անցաւ հրապարակ, մէջ տեղը կանգնեց: Մտրամեղիքն էլ այդ էր ցանկանում. դնաց ու եկաւ, իւր գուրգը զարկեց. զարձեալ հեռացաւ, նորից յարձակուեց, և առաջուանից սաստիկ զարկ տուեց... Գալիթն անվրդով զարկեցն ընդունեց և երեք զարկն էլ անվնաս կրեց. ապա յետ դարձաւ, մեղիքին ասաւ. «Մտուր քաղաքի դու իշխան հզօր, բոլոր զօրքերիդ առջևը այսօր սուրբ պայման արի՛նք. խօսքըդ կատարիր, եկ, մէջտեղ կանգնիր: Իմ իրաւունքս է՝ երեք հարուած տալ. բայց ես առաջին հարուածը մօրս—Իսլիմ խանումին պիտի նուիրեմ, երկրորդ հարուածը—սիրուն քրոջս, որի հետ սիրով քո տանն ապրել եմ. քեզ համար, ուրեմն, մի հատն է մնում. եթէ այս մինին դու լաւ դիմանաս, կամ զարկից յետոյ կենդանի մնաս, ապա Սև լեռը քեզ է պատկանում»: Ասաց, յետ ու յետ դնաց մեք քաջը, յիշեց աջ կռան հրաշագործ խաչը, ապա յառաջեց և սաստիկ թափով կայծակի սրով մեղիքին զարկեց, ելու կէս արեց:

Բոլոր զօրքերը «կեցցէ» կանչեցին, Գալիթին Մտուրի տէր ճանաչեցին:

ԺՖ. Սասունից հեռու, մի ուրիշ երկրում, Կապուտկող կոչուած մի մեծ քաղաքում, Խանդուտ անունով մի թագուհի կար, մի գեղեցկուհի, հօրը մինուճար: Չատ պահլաւաններ, շատ հսկայ մարդիկ ցանկանում էին նրան կին առնել: Բայց նա գոռոզ էր, մեծամիտ, հպարտ,

ամսով ու տարով նրանց տանջում էր, իւր դրօսն պահում, շարչարում անպարտ:

Գալիթի քաջութեան համբաւը ելաւ, Խանդուտ խանումի ականջին հասաւ: Եւ գեղեցկուհին ինքն իրան ասաւ. «Կամ ես Գալիթին պիտի կին լինեմ, կամ առանց նրան գերեզման մտնեմ»: Վարձեց աշուղներ, ուղարկեց Սասուն, խիստ պատուէր տուեց իւր հօրից թաքուն. «Գտէք Սասունի հրակայ իշխանին, քաջերից էլ քաջ Գալիթ պատանին, իմ գովքը արէք, սիրտը շահեցէք և, կախարդելով, Կապուտկող բերէք»:

Վարձուած աշուղներն գալիս են Սասուն, գտնում են Գալիթին, Օհանից թաքուն, իրանց տիրուհուն գովում են երգով և նրա սիրտը վառում, բորբոքում:

«Նա ըսպիտակ է, որպէս ձիւն գարնան.  
Գեղեցիկ՝ որպէս վարդը մայիսուան.  
Ունքերը կամար, վըրձինով քաշած.  
Աչքերը խումար, սևուկ, ամօթխած.  
Ճակատը լայն է, գանգուրներով պատ.  
Մազերը շքեղ, ծամերով առատ.  
Իրանը ճրկուն, որպէս կիպարիս.  
Կազմուածքը փարթամ իբր հայոց Մասիս.  
Ամբողջ աշխարհից կտրիշ իշխաններ  
Նրբա դռանն են կանգնած օր-գիշեր.  
Բայց նա ոչոքի ուշք չէ գարձնում.  
Գալիթին է սիրում, Գալիթին սպասում»:

Գալիթը պատասխանում է՝  
«Երբ ձեր տիրուհին այդպէս սիրուն է,  
Երբ որ նա այդքան արժանիք ունէ,  
Սասունի տէրը, Մհերի որդին,  
Յօժար է գալու, ասէք, իւր կոչին»:

ԺԳ. Մի քանի ժամանակից յետոյ Դաւիթը ճանապարհ է ընկնում դէպի Կապուտկող: Գնում է, գնում, շատն ու քիչն Աստուած գիտէ, տեսնում է, որ գութանատրը վար են անում: «Տղայք, ճանապարհորդ մարդ եմ, քիչ հաց տուէք»,—ասում է: Մաճկալը պատասխանում է. «Մենք վեց օրուայ պաշար ունինք. նստիր, կե՛ր, ինչքան սիրտդ ուզում է»: Դաւիթը նըստում, միանգամից բոլոր պաշարն ուտում է: «Տօ՛, տնաւէր, ասում է մաճկալը, դու մի բոպէում մեր վեց օրուայ հացը կերար. մենք սոված ի՛նչպէս պիտի վար անենք»: Դաւիթն ասում է. «Եզն ու գոմէշ բաց թողէք եւ գութանի շղթան ինձ տուէք»: Ասում է, հեծնում քուտակը եւ մի ժամում վեց օրուայ վարը վարում, վերջացնում:

ԺԴ. Դաւիթը անփորձ հասաւ Կապուտկող: Եւ ճանապարհին ով էլ պատահեց՝ վիշապ, պահլաւան, աւազակ թէ գող, ամենքին ջարդեց. պալատի առաջ ձին քշեց, կանգնեց... Իշխանի դռան, թոփուզը ուսին, մի պահապան կար, որի հայեացքը ժանգոտ էր ու չար: Ոչ մի եկողի նա չէր բարևում և ոչ մի մարդուց բարև չէր առնում: Դաւիթին որ տեսաւ, ոչ առանց ահի դէպ՛ նրան նայեց: Նա էլ երկիւզով սրան բարևեց. «Անունդ ի՛նչ է, եղբայր», հարցրեց:

— «Ուզում ես, կ'ասեմ քեզ իմ անունը, քեզ՝ որ եկել ես իմ տիրոջ տունը. ինձ այստեղ մարդիկ Համդօլ են կոչում: Իսկ դու ինձ տաս, ո՞վ ես կամ ինչո՞ւ եկել ես այստեղ աշխարհից հեռու... Եթէ եկած ես որպէս փեսացու, տիրուհուս ուզիլ, ապա լաւ կանես, որ ձիդ ետ շուռ տաս և եկած տեղդ սուս ու փուս երթաս: Մեղք ես, պատանի. այս սրահի մէջ ոչինչ լաւ բանի դու չես պատահիլ. ուրիշ աւելի հսկայ փեսացուք քեզ հում հում կուտեն, մօտ էլ չեն թողնիլ, որ դու խանութի երեսը տեսնես, կամ ձայնը լսես»:

— «Կատակ ես անում, Համդօլ բարեկամ, բայց ես կատակը վտղուց եմ թողել. Խանդուզ խանութի յատուկ հրաւերով հեռու աշխարհից այստեղ եմ եկել. բաց արա դուռը, ձիս էլ դոմբ տար. հիւրասիրութեան պարտքդ կատարիր. քանի կոնիս է խաչը փրկարար, ոչ մարդ, ոչ հրէշ, վիշապ, պահլաւան ինձ վընաս չեն տալ. Դաւիթի անունը հարկաւ չես լսել. նրան յաղթողը մօրից չի ծընուեր»:

Երբ իւր անունը Դաւիթը տուաւ, նստած տեղիցը Համդօլ վեր թռաւ. կանչեց ծառաներ, նրա ձին առան և գոմբ տարան: Ինքն էլ սրահի դռները բացեց և ակնածելով Դաւիթին ներս կանչեց: Եւ երբ Դաւիթը մտնում էր շէմքից, մի կարմիր խնձոր ձգեցին բարձրից, որ նա վեր առաւ, նայեց, համբուրեց, ծոցումը դրեց: Սրահում նստած բոլոր հսկայքը, երբ Դաւիթին տուած տեսան յարգանքը՝ խանութի կողմից, սաստիկ բարկացան, նորեկ պատանուն խէթիւ նայեցին և իրանց մտքում հաստատ վճռեցին, որ նրան մորթեն—խանութին պատժեն:

Կէս օր էր արդէն: Մէջ տեղ փրօած էր ճաշի լիք սուփրէն: Բոլոր հարսնախօսք սուփրի շուրջ նստած, բոլոր փեսացուք բարձերին կոնած: Դաւիթն էլ եկաւ, մի կողմը նստեց, սուփրի մի ծայրից կամացուկ բըռնեց—դէպ իրան քաշեց. ինչ որ կար-չկար լաւ մաքրազարդեց: Յետոյ վեր կալաւ գինով լիք կուժը, և մի շնչումը խմեց, դատարկեց. «Համդօլ բարեկամ, դու դուռը պահիր. ես այս ճուտերին պիտ մէկ-մէկ մորթեմ, Խանդուզ խանութին խրնձորի տեղակ սրանց գլուխներն ընծայ ուղարկեմ»: Բայց մեր փեսացուք իրանց հաշիւը շուտով վեր առան՝ դեռ խօսքը կիսատ՝ միմեանց յետևից պուկ-արին, կորան:

ԺԵ. Միւս օրը Կապուտկողի թագաւորի մօտ գալիս են Համգայ պահլաւանի խնամահասները. «Մեր տէրը մեզ ուղարկել է, ասում են, կամ պէտք է աղջիկդ տաս, տանենք, կամ դուքս գաս, նրա հետ կռիւ անես»:—Համհօլ, ասում է թագաւորը, յայտնիր այն քաջերին, որոնք զանազան երկիրներից եկել են խանումին ուզելու. ով որ կրգնայ եւ Համգայի գլուխը կը բերի, աղջիկս նրան կըտամ: «Ոչ մի պահլաւան չի մնացել, բոլորը փախել են. մնացել է Սասունցի Դաւիթը. տեսնենք նա ինչ կասի», պատասխանում է Համհօլը: Կանչում են Դաւիթին: Թագաւորը հարցնում է. «Ի՞նչ ես Դաւիթը»:

—Ես եմ:

«Կարող ես Համգայ պահլաւանի գլուխը բերել»:

—Հաց եւ գինի, Տէր կենդանի. կը բերեմ:

«Եթէ Համգայի գլուխը բերես, Խանդուղ խանումը քեզ կը տամ», վճռում է թագաւորը:

Դաւիթը գնում է:

ԺԶ. Խանդուղ խանումը իւր նաժիշտներով սրահից ելաւ, դրանք կանգնեց. երբոր Դաւիթը ճամպայ էր ընկնում, նրան ողջունեց. «Դաւիթ, քեզ պահիր. Համգայ հրէշից դու զգոյշ կացիր. մինչև այս օրս դեռ ոչ մի կտրիշ նրան չի յաղթել և ոչ մի կռուող—նրանից փրկուեր»: Ասաց, արտասուեց: Դաւիթը անխօս խոր գլուխ տուեց և իւր ձին քշեց. Քշեց ու գնաց, քիչ թէ շատ գնաց, այդ գիտէ Աստուած. վերջապէս հասաւ Համգայի տունը, ներս նայեց, տեսաւ՝ հրէշը նստած ապուր է ուտում. մէկ շարխի կաթսայ առաջը դրած, ահագին շերեփի իւր ձեռին բռնած. երբ որ շերեփը բերանն էր տանում, կարծես մի հորի ռեխ էր բացուում: Ինքն էլ սոված էր. ձիուց վէր եկաւ, դրանք կապեց, յետոյ անխօսել մտաւ վրանը, Համգայ հակային բարեւ շտուած, կաթսան վեր առաւ ու գլխին քաշեց, մի շնչում դարտկեց:

—Է՛յ, դու ի՞նչ մարդ ես, Համգան հարցրեց:

«Խանդուղ խանումի կողմից եմ եկած, որ քո անունից մի նշան տանեմ»:

—Լաւ, առ մատանիս:

«Այդ շնչին քարը ես կըկորցնեմ: Աւելի մեծ բան, քո գլխի նման, որ տաս, լաւ կանես»:

—Է՛յ, լակոտ, ո՞վ ես: Բայց ով էլ լինես, փառք տուր Աստուծուն, որ ներս ես մտել իմ վրանի տակ. մենք մեր տներում մարդկանց չենք պատժում. զնա՞ հրտապարակ:

Դաւիթը ելաւ: Համգան կատաղած նոյնպէս դուրս եկաւ: Միմեանց բռնեցին: Որպէս երկու զօջ՝ գնում են գալիս, և միմեանց սաստիկ հարուած են տալիս. կամ որպէս երկու կենդանի լեռներ, ուզում են միմեանց փրշրել, կլանել: Մինչև երեկոյ այսպէս կռուեցին: Իրիկնապահին Դաւիթը կանչեց. «Ով հաց ու գինի և Տէր կենդանի»: Կայծակի թուրը մէկ էլ պսպղաց. աշխարհը թընդաց: Համգայի լէշը գլորուեց, ընկաւ: Օրը մթնեցաւ:

ԺԷ. Կապուտկողումը տօն էր կատարում. ամբողջ քաղաքը շարժւում էր, խնդում: Բոլոր աշխարհից հաւարուած հիւրեր քէֆ էին անում եօթն օր, եօթ գիշեր: Դաւիթի պսակն էր՝ պսակ, հարսանիք, ճաշկերոյթ, ընթրիք. քառասուն քաջեր զանազան երկրից մական են եկել. քառասուն կուսանք, մէկը միւսից լաւ, հարսնաքոյր ջոքառասուն կուսանք, մէկը միւսից լաւ, հարսնաքոյր ջոքառասուն կուսանք, հայրը փեսայի պատուին մըզի փոխակուել: Խանդուղի հայրը փեսայի պատուին մըզի փոխակուել է բաժնում. Ձկնով-Յհանը իւր հարսի գլխին մարգարիտ ցանում: Անձրե էր, անձրե և ոչ թէ պարգև, որ ամբողջ շաբաթ թափւում էր առաւ:

Եօթն օրից յետոյ հարսանքաւորը Սասուն գնացին. այնտեղ նոյն կարգով եօթն օր, եօթ գիշեր խնջոյք արեցին, կերան, խմեցին և ամեն մինը մի պարգև առած, իւր տունը գրնաց:

ԺԸ. Մի տարի անցաւ: Խանդուղ խանութին Դաւիթը ասաւ. «Ես պիտի զնամ, մի պրտոյտ անեմ, երկիրներ տեսնեմ: Դու այդ միջոցին գաւակ կունենաս. թէ տղայ լինի, ապարանջանս թեւին կրկապես. թէ աղջիկ լինի, դու այն կը ծախես և աղջկանըդ զար ու զարդ կառնես: Տղադ կըլինի հսկայ, զօրաւոր. աղջիկդ սիրուն, շքեղ, փառաւոր: Տղայ որ լինի, Մհեր կանուանես, իմ հօր անունը նրան կը դնես. թէ աղջիկ լինի, ինչ սիրտդ ուզի, այն անունը տուր՝ Անահիտ, Աստղիկ, Անոյշ, Չուշանիկ, Լուսիկ, Արուսեակ, Նազիկ, Վարսենիկ»:

Ասաց ու զնաց:

Խանդուղ խանութը մենակ շմնաց. մի ամսից յետոյ մի մանուկ ծնեց, պապի անունը թոռանը զրեց, ապարանջանը կունիցը կապեց:

Մհերը աճեց, աճեց զօրացաւ և մի վիթխարի մանկամարդ դարձաւ:

ԺԹ. Օտարութեան մէջ շատ երկար մնաց մեր Դաւիթ հսկան. գնաց Իււրջիստան, Պարսից աշխարհը, նաև Զինաստան: Եւ ամենայն տեղ նոյն բանն էր անում՝ հաւաքում շուրջը տեղացի քաջեր, թոյլերին օգնում, չարերին պատժում: Բայց ամենից շատ Դաւիթ բարկացաւ Աղբբէջանում... Դաւիթը մենակ քաղաք է մտնում. ամբողջ քաղաքը ոտի է կանգնում, գէնք, զրահ առնում, Դաւիթին կարմէջում. ուզում են բռնել, սաղ-սաղ խորովել:— «Ով հաց ու գինի և Տէր կենդանի», կանչում է քաջը և թուրը հանում, բոլոր քաղաքը քանդում, կործանում:

Վերջը մի աղջիկ, սիրուն ու չքնաղ, Դաւիթի առաջն է գալի, աղաչում է ու խնդրում, որ միւսներին խնայի: «Աղբբէջանի տիրոջ՝ ես աղջիկն եմ միխուճար. հայրս ընկաւ քո սրից. ինձ էլ վեր ա՛ռ, հետդ տար»:

Ի. Դալիս է Դաւիթ, աղջիկը թարթին և ինքրն իրան խօսում առանձին: «Եօթը տարի է, որ ես Սասունից հեռու եմ ապրում. այս եօթը տարում ինչ է պատահել արդեօք իմ երկրում. Զէնով-Յհանը դուցէ՛ ծերացած. Խանդուղ խանութը տխուր մընացած. արդեօք ինչ ունիմ ես ինձ յիշատակ. արդեօք ապրում է իմ միակ գաւակը»: Այսպէս տխրաղէմ Դաւիթ իշխանը առաջ էր զնում, Զալայ քուռակն էլ հայրենի հողը հանդարտ կոխտտում: Յանկարծ մի մանուկ դէմն է դուրս գալիս և մեր ճամբորդին խրոխտ ձայն տալիս: «Է՛յ, օտաբախան, ո՞վ ես, ո՞ր երկրից և ո՞ւր ես գնում, կամ այդ աղջիկը ինչի՛ հետ տանում. դու երևում ես ինձ կասկածելի. մեր հողով անցնել քեզ թոյլ չեմ տալի»:

Դաւիթը ապշեց... Ոչ մի հողածին դեռ չէր յանդգնել նրա երեսին համարձակ նայել, ուր մնաց նրա առաջը կտրել... Մի սառսուռ անցաւ նրա ողջ մարմնով: Դշխոյ աղջկան կամաց ցած զրեց և մանկան վրայ թափով յարձակեց: Խիղախ մանուկը ժայռի պէս կանգեց: Միմեանց զարկեցին: Սկզբում Դաւիթ մըրցում էր յաջող. բայց երբ կոխը սաստիկ երկարեց, ծերունին յոգնեց. մինչդեռ մանուկը, քանի զընում էր, ոյժ էր ստանում. նրա արիւնը նոր էր տաքանում: Վերջապէս Մհեր հօրը տապալեց: Դաւիթը ձայնեց. «Զգո՛յշ կաց, տըղայ. եթէ որ որդիս այդ բանն իմանայ, քեզ տասնապատիկ խիստ պատիժ կըտայ»:

«Ո՞վ է քո որդին»:

— Մըհեր պատանին:

«Որե՛ է նշան»:

— Մի ապարանջան աջ թևի վերան:

«Ա՛խ, հայր իմ, ներիր», Մհերը ձայնեց, հօր առաջ

մեղմով նա ծունկ խոնարհեց. «Մհերը ես եմ. ներումս եմ խընդրում, որ անպատուեցի ես քո ծերութիւն»:

— Ես պարծենում եմ, որ ինձ յաղթեցիր. դրանով, որդեակ, հօրդ պատուեցիր: Եւ ես գիտէի, որ իմ ժառանգը, Մհերի թոռը, Դաւթի զաւակը, հօրից պիտ' անցնի, անյաղթ պիտ' լինի:

Ազրբէջանի գշխոյին Մհերի հետ պսակեցին և Հայրենիք ուղարկեցին: Դաւիթն ասաց. «Երբ որ քո հայրդ սաստիկ ծերանայ, երբոր մեր երկրին մի փորձութիւն գայ, Հէրբար Յհանը ուժգին ձայն կըտայ: Չայնը կըլսես, Սասուն կը հասնես և Հայրենիքիդ տէրութիւն կանես»:



Վ Ե Ր Զ

Ն Ի Ի Թ Ե Ր Ի Յ Ա Ն Կ Ը

ՀԱՏՈՒՆԾ ԱՌԱՋԻՆ

	Երև.		Երև.
1. Տանից դէպի ուսումնարան	1	14. Աւետարան, Յովհանն.	19
2. Թռչնիկներ* Հիւզոյ—Բաֆ.	3	15. Ազահուլթեան պտուղը, թ.	
3. Արմինէ, Փանոսեանից . . .	4	Ղուկասեան. . . . .	20
4. Մանկանը* Հանազիզեան . . .	6	16. Գիւղական և մշակ* Կրիլ.	21
5. Մայր և որդի, Բարխուդ . . .	7	17. Հօր խրատը, Տօլստոյից .	22
6. Չարը տանեմ* Յակոբեան.	8	18. Կապիկ և ակնոց* Կրիլ. .	23
7. Փրիդերիկոս թագաւորի սպասաւորը թ. Ղ. . . . .	9	19. Քամին և արևը, Ղուկ. . .	24
8. Որբիկ* Ծատուրեան. . . . .	11	20. * * Բերնսօնից* Յակոբ. .	26
9. Մի հոգի երկու մարմնի մէջ, Նաղարեանց . . . . .	12	21. Վհհանձնութիւն, Մայր. խօսք . . . . .	27
10. Կաղնի և եղէգն, Կրիլ. . . . .	13	22. Ճպուռն ու մըջիւնը* Կրիլ.	29
11. Հացը, Ֆրանսերէնից . . . . .	16	23. Նրբամիտ Ղուկակը, Մր.	34
12. Հասոյի երգը* Բաֆֆի . . . . .	17	24. Նամուս ու զէյրաթ* Յակ.	33
13. Բարեխիղճ խափշիկը թ. Ղ.	18	25. Արեամանուկ, Աղայեանց.	34
		26. Մարդը և հրէշը, Բարխուդ.	45

ՀԱՏՈՒՆԾ ԵՐԿՐՈՐԴ

27. Գարնան սկիզբը, Պոօշեան	55	38. Ամպեր, Կ. Մելիք-Չահնազ.	65
28. Գարնանամուտ* Նալբ. . . . .	56	39. Ամառն երևանում, Արով.	73
29. Սար գնալը, Արովեանց . . . . .	—	40. Բոստանչի* Աղայեանց . . . . .	—
30. Գարուն* Պէշիկթաշեան . . . . .	57	41. Կարկուտ, Կ. Մ.-Չահնազ.	74
31. Դաշտումը. . . . .	58	42. Աղօթք* Յովհաննիսեան .	76
32. Վարդի սոս* Զալայեան . . . . .	59	43. Աշունք, Պոօշեանց . . . . .	77
33. Անտառը և նրա օգուտները	60	44. Այգեկութ, Պոօշեանց . . . . .	78
34. Երբոր ճնշում է քո սիրտը* թարգմ. Բարխուդարեանց.	61	45. Չմեռ, Արովեանց. . . . .	80
35. Երաշտ, Պոօշեանց . . . . .	62	46. Սառնամանիք* Աղայեանց	81
36. Գարնան անձրև* Ծատուր. —	—	47. Իմ հարեանները, Հրատ.	82
37. Ամպ, թարգմ. Բաֆֆի . . . . .	64	48. Աղքատ կին* Նալբանդեան	85

ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

49. Մարդու մարմնի անդամները . . . . .	88	60. Կապիկներ* Կրիլովից . . . . .	103
50. Կարապը, ձուկը և խեչափարը,* Կրիլովից . . . . .	89	61. Ոչխար . . . . .	105
51. Արամ (արտ. զգայարանը)	90	62. Գայլն ու գառը* Կրիլովից	107
52. Մանուշակ* Մանուէլեան . . . . .	92	63. Զի . . . . .	109
53. Գարեգինը (գլուխ) . . . . .	—	64. Էջն ու սոխակը* Աբովեան	110
54. Մանուկին* Կրասիլնիկեան	95	65. Փիղ . . . . .	112
55. Արշաիրը (ներք. գործար.)	96	66. Փիղը և քոթոթը* Կրիլ . . . . .	114
56. Հեաաբբբբբբ* Կրիլովից . . . . .	98	67. Առիւծն ու վագրը . . . . .	115
57. Հրաշալի անակ . . . . .	99	68. Լուսնահաշ* Աղայեանց . . . . .	116
58. Ծառերն ու կացինը, Աբովեանց . . . . .	100	69. Վանի կատուն Փափագեան . . . . .	—
59. Կապիկի եղբայրը . . . . .	101	70. Մուկն ու կատուն* Աբովեան . . . . .	119
		71. Կենդանիների լեզու . . . . .	—

ՀԱՏՈՒԱԾ ԶՈՐՐՈՐԴ

72. Հայի գերդաստանը, Աղայ . . . . .	120	81. Զիբ - շորեքշարթի, Պոս . . . . .	140
73. Սիրասուն ծաղիկ* Արծիւ . . . . .	121	82. Վայր ընկնող աստղեր* Նալբանդեան . . . . .	141
74. Մեծ-նանը, Պոսեանց . . . . .	122	83. Դրընդէղ, Պոսեանց . . . . .	144
75. Գիւղի ժամր* Յովհան . . . . .	124	84. Ախա, Պոսեանց . . . . .	145
76. Դրիշակը, Պոսեանց . . . . .	125	85. Սուրբ Զատիկ* Ծատուր . . . . .	147
77. Հայի բարիկենդանը, Պոս . . . . .	127	86. Ուխտագնացութիւն, Պո . . . . .	148
78. Բերան-փակէք, Պոսեանց . . . . .	132	87. Գիւղացու երջանկութիւնը, Աբովեանց . . . . .	15
79. Մեծ - պասի երկուշարթին, Պոսեանց . . . . .	137	88. Մասունցի Դաւիթ . . . . .	155
80. Ս. Տաճարի դռանը. Արծ . . . . .	139	Ն. Տ. Ղ. . . . .	155

2013 456P

« Ազգային գրադարան



NL0063121

